


ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՌԱՋԱՎՈՐ
ԲԱՄԲԱԿԱՑԱՆՆԵՐԻ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

ՍՊԱԳԻՐԱԿՈՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ



Հ 0 Խ 2

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՐԱԿԱՆ ԹՎՅԱՆ
ՕԵՐԵՎԱՆ Օ 1936

36 SEP 2010

633.5

Հ-24

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՌԱՋԱՎՈՐ
ԲԱՄԲԱԿԱՑԱՆՆԵՐԻ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

ՍՊԱԳԻՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1994

1994
XSG

ՀԱՅՀ
ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ԵԵՐԵՎԱՆ Օ 1936

ՀԱՅԱՍՏԱՆԻ

19191

03.06.2013

1936 թվի փետրվարի 9—10-ը Յերևանում կայացալ Հայաստանի առաջավոր բամբակացանների հանրապետական առաջին խորհրդակցությունը՝ մասնակցությամբ բամբակացան շրջանների կուսշրջկոմների քարտուղարների, գործկոմների նախագահների, մեքենատրակտորային կայանների ղիբեկտորների, ղիբեկտորների քաղաքական գծով տեղակալների, հողբաժինների վարիչների և գյուղատնտեսների:

Խորհրդակցությանը մասնակցում եյին 114 առաջավոր բամբակացան կոլտնտեսականներ :

117-90

Պատ. Խմբ. Ա. Կուրտիկյան
Տիֆ. Խմբ. Տ. Խաչվանիյան
Արքագիշ Ա. Շահրազյան

Քլավիսի լիազոր Վ. 1099, պատվեր 509


Հրամ. 3680, տիրաժ 2000

Հանձնված ե արտադրության 31 մարտի 1936 թ.

Ստորագրված ե տպելու 20 ապրիլի 1936 թ.

Ուսմանկրատի տպարան, Յերևան, II Գնունի, 4

РЕСПУБЛИКАНСКОЕ СОВЕЩАНИЕ ПЕРЕДОВЫХ
ХЛОПКОРОБОВ АРМЕНИИ





Ա. Գուլոյան

ԸՆԿԵՐ Ա. ԳՈՒԼՈՅԱՆԻ ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔԸ

Նկերնե՛ր, բամբակի բերքատվության բարձրացման տեսակետից 1935 թիվը չափազանց նշանակալից եւ ամբողջ Միության համար։ 1935 թվին բամբակի բերքատվության առաջադրանքը և մթերման պլաններն ամբողջ Միության մեջ կատարվեցին ու գերակատարվեցին։ Այս ասպարիզում մեծ հաջողության հասան մանավանդ Միջին Ասիայի բամբակացան հանրապետությունները։ Ինչպես ձեզ հայտնի յէ, Ուզբեկստանի, Տաջիկստանի, Թուրքմենստանի հանրապետությունները վոչ միայն կատարեցին իրենց անցյալ տարվա պլանները, այլև ծածկեցին իրենց այն բացը, վոր մնացել եր 1934 թվականից։

Այս մեծ հաջողություններին Ուզբեկստանը, Տաջիկստանը և այլ հանրապետությունները հասան բերքատվության բարձրացման չնորհիվ։ Ձեզ արդեն հայտնի յէ, վոր այդ հանրապետությունների մեջ կամ մի շարք կոլտնտեսություններ ու կոլտնտեսականներ, վորոնք մի հեկտարից տպին 40—50 և նույնիսկ 60 շենտներ բամբակի։

Բամբակի բերքատվության բարձրացման ասպարիզում Խորհրդային Հայաստանը նույնպես անցյալ տարի բավական մեծ հաջողություն ունեցավ։ Բերքատվության առաջադրանքը մեր

բամբակացան շրջանները գերակատարեցին և միջին հաշվով հեկտարից ստացան 10 ցենտներ բամբակ: Այդ հաջողությունները բամբակի բերքատվության բարձրացման ասպարիզում հետևանք են կոլտնտեսությունների ավելի ամրապնդման, դժուղատնտեսական արտելի նոր, ստալինյան կանոնադրության կենսագործման: Այդ հաջողությունները հետևանք են նաև պրոլետարական պետության աջակցության, վոր նա շատ մեծ չափով ցույց տվեց նաև 1935 թվի ընթացքում: Բավական ե հիշել մեր կառավարության այն մի քանի վորոշումները, վորոնք բավական խոչընարտոնություններ են տալիս իրենց պլանները կատարող ու գերակատարող կոլտնտեսականներին: Բավական ե հիշել մեր բամբակացան շրջանների ուժեղ մեքենայացումը, մեքենատրակտորային կայանների կատարած աշխատանքը: Յեվ վերջապես այդ հաջողությունները հետևանք են մեր կուսակցական կազմակերպությունների ու խորհրդային որդանների կատարած հաջող աշխատանքների:

Ընկերներ, մեր ձեռք բերած բոլոր հաջողությունների համար մենք պարտական ենք մեր կոլտնտեսական մասսային և ամենից առաջ մեր մեծ առաջնորդ, մեր առաջին կոլտնտեսական-բրիգադիր ընկեր Ստալինին:

(Բոլոր վոտի յեն կանգնում, ովացիաներ, ուռաներ, «կեցե՛ ընկեր Ստալինը» բացականչություններ):

Ընկերներ, սակայն մենք չենք կարող հանգստանալ այն հաջողություններով, վոր ունեցանք անցյալ տարի բամբակի բերքի բարձրացման ասպարիզում: Զնայած այդ հաջողություններին, մենք հետ ենք մնում Խորհրդային Միության մի շարք առաջավոր բամբակացան հանրապետություններից: Ընկեր Ստալինը Մոսկայում Հայաստանի աշխատավորության պատղամավորության ընդունելության ժամանակ մեզ մատնացույց արավ, վոր Խորհրդային Հայաստանը բամբակի բերքատվության բարձրացման ասպարիզում դեռ հետ ե մնում Ուզբեկստանից:

Մեր պատվիրակությունը խոսք տվեց ընկ. Ստալինին՝ բամբակի բերքի բարձրացման ասպարիզում հասնել առաջավոր հանրապետություններին: Կասկած չկա, վոր մենք միջոցներ ձեռք կառնենք և կկատարենք մեր այդ խոստումը: Յես կարծում եմ, վոր մենք կկարողանանք հեկտարից մինչև 15 ցենտներ բամբակ ստանալ:

Մենք դրա համար ունենք բոլոր հնարավորությունները.

Հարկավոր ե միայն լավ կազմակերպել գործը և ոգտագործել կոլտնտեսային կարգի բոլոր առավելությունները: Դրա համար հարկավոր ե ամենից առաջ բոլոր բամբակացան կոլտնտեսություններում լայն ծավալել և կիրառել աշխատանքի ստախանովյան մեթոդները: Վոր մենք կարող ենք իրոք բարձր բերք պահպանել, այդ յերեսում ե նրանից, վոր 1935 թվին մեր մի շարք կոլտնտեսություններ, ողակներ, կոլտնտեսականներ միջինից շատ ավելի բարձր բերք ստացան:

Յես կրերեմ մի շարք անուններ—Հասան Ալիև—Գյոյգյումբեթի կոլտնտեսության նախագահ, մշակել ե 117 հեկտար բամբակ և յուրաքանչյուր հեկտարից ստացել ե 18,8 ցենտներ բամբակ (ծափահարություններ):

Վաղարշապատի շրջանի Զաֆարաբադի կոլտնտեսության բրիգադիր Վիրաբ Սարգսյանը մշակել ե 16 հեկտար և յուրաքանչյուր հեկտարից ստացել ե 20,3 ցենտներ բամբակ (ծափահարություններ): Նույն շրջանի Արշալույս գյուղի կոլտնտեսուհի Զավահիր Պետրոսյանը մշակել ե 5 հեկտար և հեկտարից ստացել ե 25 ցենտներ (ծափահարություններ):

Ղամարլույի շրջանի Նովրուզլու գյուղի կոլտնտեսության ողակավար Արշալույս Աբրահամյանը մշակել ե 3 հեկտար և հեկտարից ստացել ե 23 ցենտներ (ծափահարություններ):

Հոկտեմբերյանի ըլջանի Խերիքեկու գյուղի կոլտնտեսական Սարգիս Հակոբյանի բրիգադը մշակել ե 11 հեկտար բամբակ և հեկտարից ստացել ե 20 ցենտներ (ծափահարություններ): Նույն շրջանի Եղիշեար գյուղի կոլտնտեսություննում Վարդանյանի ողակը մշակել ե 5 հեկտար և յուրաքանչյուր հեկտարից ստացել ե 22 ցենտներ (ծափահարություններ):

Վեղու շրջանի Ամէշարի կոլտնտեսությունը, վորի նախագահն ընկեր Խամայիլովն ե, մշակել ե 84 հեկտար բամբակ և ամեն մի հեկտարից ստացել ե միջին հաշվով 16,8 ցենտներ (ծափահարություններ):

Այս բոլոր որինակները, ընկերներ, վոր յես բերի, պարզ ցույց են տալիս, վոր բոլոր հնարավորությունները կան, վորպեսզի մենք ստանանք այնպիսի բարձր բերք, ինչպիսին ստացել են մեր բամբակացան շրջանների առաջավոր կոլտնտեսությունները և կոլտնտեսականները: Դրա համար անհրաժեշտ ե լայն ծավալել ստախանովյան շարժումը, հետեւ առաջավոր կոլտընտեսությունների որինակին և նրանց փորձը կիրառել ամեն տեղ:

Այդ տեսակետից այսորվա մեր խորհրդակցությունը մեծ նշանակություն և ունենալու: Այստեղ հանդես են գալու մեր առաջավոր կոլտնտեսությունների նախազահները, բրիգադիրները, կոլտնտեսականները, վորոնք պատմելու յեն իրենց դրական փորձի և այն ձեռնարկումների մասին, վորոնց չնորհիվ կարելի յէ բարձր բերք ստանալ: Ընկերնե՛ր, այդ փորձն ընդհանրացնելով, մենք անշուշտ կկարողանանք հասնել ավելի բարձր բերքի, քան ունեցանք անցյալ տարի: Արդեն մոտենում ե բամբակի ցանքի ժամանակը: Այժմյանից բոլոր բամբակացան ըրջանների դեկավար ընկերները, կոլտնտեսականները պետք է վերջացնեն նախապատրաստական աշխատանքները և խուսափեն այն սխալներից, վոր մենք ունեցանք անցյալ տարի: Յեթե մենք վերցնենք անցյալ տարիվա գարնանը, կտեսնենք, վոր մի շարք կոլտնտեսություններ վարը ժամանակից ուշ կատարեցին, իսկ մի շարք կոլտնտեսություններ, նկատի չառնելով պայմանները՝ վաղ ցանեցին. դրա հետևանքով առաջացան կոչտեր, վորոնք չեյին կարող չանդրադանալ բերքատվության վրա: Վարի ասպարիզում մեր նպատակը պետք է լինի՝ ամեն կերպ աշխատել և ցանել անպայմանորեն վորոշված ժամկետներին: Այդ տեսակետից չափազանց մեծ պատասխանատվություն ե ընկնում մեքենատրակտորային կայանների գործիքների և նրա մյուս աշխատողների վրա: Վարը և ցանքը պետք է ժամանակին կատարիի: Այդ աշխատանքի վրա մեր մեքենատրակտորային կայանները պետք է լուրջ ուշադրություն դարձնեն: Մեր կոլտնտեսականները չպետք է ձեռները ծալած նստեն և ասեն, թե պատասխանատվությունն ընկնում է մեքենատրակտորային կայանների վրա: Այստեղ, ընկերնե՛ր, մեքենատրակտորային կայանների աշխատանքի հաջողությունը կախված է նաև իրենցից՝ կոլտնտեսականներից: Հարկավոր ե սերտ կապ պահպանել մեքենատրակտորային կայանների հետ և իրագործել հսկողության իրենց իրավունքները:

Ցանքի վերաբերյալ պետք է ասել, վոր անցյալ տարի սերմացուն ձեռքով մաքրելը թերապնահատվում եր: Մինչդեռ անհրաժեշտ ե, վոր սերմացուն անպայման մաքրված լինի: Պետք է ուշադրություն դարձնել շարքացանների վրա, վորպեսզի սերմը հարկավոր խորությամբ ցանվի:

Անհրաժեշտ է հատուկ դասընթացների միջոցով շարքացանի վրա աշխատող ընկերներին լավ սովորեցնել զործը:

Բերքատվության բարձրացման գործում մեծ նշանակություն

ունի պարարտացումը: Այս տարի, ինչպես ընկեր Մամիկոնյանն ինձ ասաց, Հայաստանում հանքային պարարտանյութերով պարարտացվելու յե 10 հազար հեկտար հող: Այդ խոշոր տարածություն ե և անշուշտ մեծ զարկ կտա բերքատվության բարձրացմանը: Բայց մեր կոլտնտեսությունները խոչը անելիք ունեն նաև տեղական պարարտանյութերի ոգտագործման ուղղությամբ: Անցյալ տարվա փորձը ցույց տվեց, վոր տեղական պարարտանյութերով պարարտացված հողերը չպահպանց բարձր բերք տվին: Անհրաժեշտ ե այս գործի վրա մեծ ուշադրություն դարձնել: Համամիութենական Հողդողկոմատը մեզ պլան ե ավել հինգ հազար հեկտար պարարտացնել տեղական պարարտանյութերով: Սակայն, ինչպես գիտեք, մինչև այժմ տեղերում տեղական պարարտանյութերով պարարտացված ե միայն հազար հեկտար: Յեթե այդ ձևով շարունակելու լինենք, դժվար թե կարողանանք հինգ հազար հեկտարի պլանը կատարել: Դրա համար ել անհրաժեշտ է, վոր կոլտնտեսությունները հիմիկվանից լծվեն այդ պլանի կատարմանը: Դրա համար անհրաժեշտ ե ողակների, բրիգադների միջև սոցմբումն ավելի լայնորեն ծավալել: Յես չեմ կառկածում, վոր յեթե աշխատանք ծավալենք ինչպես անհրաժեշտ ե, ապա մենք կարող ենք այդ հինգ հազար հեկտարի պարարտացման պլանը ժամկետին կատարել:

Վոչ մի կասկած, ընկերնե՛ր, վոր բերքատվության բարձրացման գործում վճռական նշանակություն ունի նաև հողի մշակումը: Զնայած մեր կոլտնտեսությունները հողի մշակման ասպարիզում վորոշ հաջողություններ ունեն, սակայն բերքատվությունն ել ավելի բարձրացնելու համար անհրաժեշտ է ավելի լավ կազմակերպել յուրաքանչյուր ողակի աշխատանքը: Այս տարի անհրաժեշտ է մշակել բամբակի ամեն մի թուփը: Դուք գիտեք, ընկերնե՛ր, Մարիա Դեմքներոյի որինակը, թե ինչպես նա կարողացավ մի հեկտարից 500 ցենտներ ճակնդեղ ստանալ: Նա ընկեր Ստալինին գրած իր նամակում պատմում է այն մասին, թե ինչպես կարողացել ե իր ողակի աշխատանքը լավ կազմակերպելով՝ բարձրացնել բերքատվությունը: Նրանք ամեն մի թփի վրա աշխատում են այնպես, ինչպես պահանջվում է: Յուրաքանչյուր բրիգադ, յուրաքանչյուր ողակ աշխատում է վոչ միայն հողի մշակման վրա, այլև յուրաքանչյուր թփի վրա: Յեթե, ընկերնե՛ր, այսպես կազմակերպենք աշխատանքը, կտեսնենք, վոր կարող ենք բերքատվությունը բարձրացնել այնպես, ինչպես

անհրաժեշտ է : Քեթմենները պետք ե համատարած կերպով գործադրել բոլոր բամբակացան ըրջաններում : Անցյալ տարի մի շաբաթ կոլտնտեսություններում թերագնահամուվում եր քեթմենը : Այս տարի մեր ըրջանների ղեկավար կազմակերպությունները և իրենք՝ կոլտնտեսությունները պետք ե միջոցներ ձեռք առնեն, պետք ե ճիդ գործ դնեն, վորպեսզի ուրագներն ամբողջապես փոխարինվեն քեթմեններով :

Զպետք ե մոռանալ մեքենայացման նշանակությունը : Մի շաբաթ ընկերներ առանձին կոլտնտեսություններում անցյալում թերագնահամուվում եյին մեքենայացումը : Դրան մենք անցյալ տարի հարվածեցինք և այս տարի պետք ե վերջ դնենք մեքենայացման թերագնահամումը բամբակացան ըրջաններում : Մեքենայացման վրա մեծ ուշադրություն պիտի դարձնել, մանավանդ, վոր այս տարվա համար մեր բամբակացան ըրջանները տրակտորային ցանքի և տրակտորային կուլտիվացիայի բանական խոշոր պլաններ ունեն : Մեր մեքենատրակտորային կայանները պետք ե բոլոր ուժերը լարեն, վորպեսզի մենք կարողանանք պատվով դուրս գալ այդ գործում :

Պարզ ե, ընկերներ, վոր այդ բոլոր միջոցները պետք ե կերառել, նորից եմ կրկնում, ստախանովյան շարժման լայն ծավալման հիման վրա : Իսկ դուք գիտեք, վոր ստախանովյան շարժման հիմնական մոմենտներից մեկն ել տեխնիկայի տիրապետումն ե : Պարզ ե, վոր ստախանովյան շարժման մեջ ընդդրկվող կոլտնտեսականը պետք ե բոլոր ագրոկանոնները գիտենա : Այդ տեսակետից հսկայական անելիքներ ունեն մեր գյուտանտեսները : Հսկայական անելիքներ ունեն նրանք այդ շարժման մեջ : Նրանք չպետք ե հետ մնան այդ շարժումից և վոչ միայն չպետք ե հետ մնան, այլև պետք ե իրենք կազմակերեն, գլխավորեն այդ շարժումը, առաջ գնան առաջավոր կոլտնտեսականների հետ միասին, ստախանովյան շարժմանն ամենալայն ծավալ տալու համար : Մեր կոլտնտեսականները պետք ե լայն ծավալեն ստախանովյան շարժումը գյուղատնտեսության մեջ :

Կասկածից դուրս ե, վոր մեր բամբակացան ըրջանների բոլցները և կոլտնտեսականները ձեռք-ձեռքի տված անդրկողկասյան յեղբայրական հանրապետությունների բոլցեիկների, կոլտնտեսականների հետ՝ կատարեն այն բարձր պարտականությունը, վոր դրված ե նրանց վրա : Զպետք ե պարծենալ մեր

ունեցած հաջողություններով, չպետք ե հանդստանալ, այլ պետք ե հսկայական աշխատանք կատարել՝ բամբակի բերքն ավելի և բարձրացնելու համար :

Մենք վստահ ենք, վոր բամբակի բարձր բերք ստանալու այդ առաջադրանքները կկատարենք, վորովհետեւ աշխատելու յենք մեր կենտրոնի, Անդրյերկոմի և նրա ղեկավար ընկեր ԲԵՐԻՍՅԻ ղեկավարությամբ (բուռն ծափահարություններ) :

Ընկերներ, մենք վստահ ենք, վոր այս տարի ստանալու յենք բամբակի աննախընթաց բարձր բերք, վորովհետեւ մեր ճանապարհը լուսավորում ե մեր մեծ առաջնորդ, ժողովուրդների մեծ բարեկամ ընկեր ՍՏԱԼԻՆԻ հանճարը :

Կեցցե՛ ընկեր Ստալինը :

(Բուռն ծափահարություններ, ովացիաններ) :



ԸՆԿ. Հ. ՇԱՀԲԱԶՅԱՆԻ ՃԱՌԸ

Կամարլույի շրջանի Թովուանշալու գյուղի «Կարմիք
Հոկտեմբեր» կոլտնտեսության բրիգադիր

Պնկերնե՞ր, անցյալ տարի մենք մեր դաշտերը պարարտացրել ենք թե՛ տեղական և թե՛ հանքային պարարտանյութերով։ Տեղական պարարտանյութերով պարարտացրել ենք 11 հեկտար, իսկ հանքային պարարտանյութերով՝ 9 հեկտար։ Շնորհիվ մեքենատրային կայանի լավ աշխատանքի, մենք վորակյալ վարարինք։

ԽԱՆՉՅԱՆ.—Դարենա՞նն եք վարել, թե՞ անցյալ տարվա աշնանը։

ՇԱՀԲԱԶՅԱՆ.—9 հեկտար աշնանն ենք վարել, իսկ մնացածը՝ գարնանը։ Կոչտ հողամասերը վարել ենք յերկու անգամ, իսկ փափուկները՝ մեկ անգամ, տեղական գութանով։ Ցանքը կատարեցինք շարքացանով։

ԽԱՆՉՅԱՆ.—Տրակտորի՞, թե ճիռ։

ՇԱՀԲԱԶՅԱՆ.—Ճիռ շարքացանով։ Այդ շարքացանին կցլած մի լավ ընկեր։

Առաջին քաղանը կատարեցինք ուրագավ, իսկ յերկրորդը,

յերրորդը և չորրորդը՝ քեթմեններով։ Պետք է ասել, վոր սկզբանական շրջանում մեր ընկերները դժվարանում եյին քեթմենները ձեռք վերցնել, վորովհետեւ, ինչպես գիտեք, քեթմենը Հայաստանում նոր բան է։ Բայց շնորհիվ ձեռք առած միջոցների, մենք քեթմենները գործի դրինք և կարողացանք բարձր բերք ստանալ։ Պետք է ասել, վոր այս ասպարիզում աչքի եյին ընկերում կանայք, ինչպես որինակ՝ ընկեր Շուշանիկ Հայվերդյանը և ուրիշները։

Բերքատվության բարձրացման գործում փոքր դեր չի խաղում նոսրացումը։

ԽԱՆՉՅԱՆ.—Քանի՞ անգամ եք նոսրացում կատարել։

ՇԱՀԲԱԶՅԱՆ.—Յերկու անգամ։

ԽԱՆՉՅԱՆ.—Ո՞վքեր են կատարել այդ նոսրացումը, թվի՞ բազանութենք։

ՇԱՀԲԱԶՅԱՆ.—Նոսրացումը կատարել են ընկերներ՝ Միությանը, Շուշանիկ Հայվերդյանը, Ղազարյանը և ուրիշները։

ԽԱՆՉՅԱՆ.—Քանի՞ հոգի։

ՇԱՀԲԱԶՅԱՆ.—12 հոգի։

ԽԱՆՉՅԱՆ.—Դուք ասացի՞, վոր չորս անգամ քաղան եք արել, իսկ կուտիվացիա՞ն։

ՇԱՀԲԱԶՅԱՆ.—Մեզ մոտ յեղել է միայն ձիու կուլտիվացիս, իսկ յերբ պատահում եր, վոր հողը պնդանում եր, մենք փարացնում եյինք։ Յերբ քաղաններից հետո տեսանք, վոր բամբակենին լավ չի աճում, մենք վորոշ տարածության վրա ակոսային պարարտացում կատարեցինք հանքային պարարտանյութով։

ԾՆԿԵՐՆԵՐ, մի քանի խոսք չոռի դեմ պայքարելու մասին։ Նախ և առաջ պետք է ասել, վոր մենք բոլոր մարգերը կարողացել ենք մաքրել զերանդիով և տեղը յերկաթ-արջասպ սրսկել։

ԽԱՆՉՅԱՆ.—Ճիշտ այդպե՞ս եք արել։

ՇԱՀԲԱԶՅԱՆ.—Այսուհետու կամ այդպիս կամ այդպիս ենք արել, և մեզ ոգնել են մեր շրջանի ղեկավար ընկերները։

Մենք սրսկել ենք չոռով վարակված բոլոր թփերը և նրանց կողքի չլարակված թփերը։ այդ գծով որինակելի աշխատանք են կատարել ընկերներ Հրաչյան և Բ. Գրիգորյանը, վորոնք յուրաքանչյուր լուսկ հետեւ են չոռին և անմիջապես սրսկումներ կատարել։

ԽԱՆՉՅԱՆ.—Քանի՞ ջրող ես ունեցել։

ՇԱՀԲԱԶԱՆ — Վեց մշտական ջըող, վորոնք ամրացված են յեղել ողակներին և կարողացել են ժամանակին ջրել:

Բերքահավաքի ժամանակ կորուստներ չենք ունեցել և յուրաքանչյուր հեկտարից վերցրել ենք 20 ցենտներ բամբակ (ծափեր):

Ընկերներ, յես հարվածային կոլտնտեսականների համամիութենական յերկրորդ համագումարին, մեր սիրելի առաջնորդ ընկեր Ստալինին ուսպորտ ներկայացրի և խոստացա հեկտարից տալ 20 ցենտներ բամբակ, ինչպես և Հայաստանի խորհրդակցության ժամանակ, ձեր առաջ, ընկեր Խանջյան, խոստացա հեկտարից տալ 20 ցենտներ: Այդպես ել տվել եմ:

ԽԱՆՉՅԱՆ — Ճիշտ ե, լրիվ 20 ցենտներ (ծափեր): Քանի հեկտար բամբակ պիտի ցանես:

ՇԱՀԲԱԶԱՆ — 20 հեկտար: Ցես մտածել եմ այս տարի մեր բոլոր գաշտերը պարարտացնել տեղական պարարտանյութով:

ԽԱՆՉՅԱՆ — Քանի սայլ գոմաղթ եֆ տարել դաշտ:

ՇԱՀԲԱԶԱՆ — 225 սայլ գոմաղթ ենք տարել՝ չորս հեկտարի վրա:

Ցես խոսք եմ տալիս այս տարի բերքը հասացնել 25 ցենտների (ծափեր), իսկ առանձին ողակներում՝ անդամ 30 ցենտների: Անցյալ տարի մենք մրցման եյինք կանչել Յերվանդ Ղարիբյանին, վորը հետ եր մնացել, իսկ այս տարի ուզում եմ մրցման կանչել Հքանչանակիր ընկեր Բուղաղյանին:

ԽԱՆՉՅԱՆ — Նա 30 ցենտների խօսք ե տվել, դու նույնիքան պիտի խոստանաս, այլապես այդ մրցահրավեր չի լինի: Ձեր բրիգադում քանի անդամ կա:

ՇԱՀԲԱԶԱՆ — 41 անդամ:

ԽԱՆՉՅԱՆ — 41 կոլտնտեսականներից քանի հոգի յեն դուրս գալիս աշխատելու:

ՇԱՀԲԱԶԱՆ — 21 հոգի յեն դուրս գալիս, մնացածից շատերը գոմաղթահներ են, անասուններով են դրազվում, մի մասն ել յերեխաներով մայրեր են:

ԽԱՆՉՅԱՆ — Առուները մաքրե՞լ եֆ:

ՇԱՀԲԱԶԱՆ — Արդեն մաքրում ենք:

ԽԱՆՉՅԱՆ — Աշխորն ինչպե՞ս եֆ հաշվում:

ՇԱՀԲԱԶԱՆ — Անցյալ տարի 140 մետր մաքրելը հաշվում եյինք մի աշխոր, իսկ այս տարի, չորսհիվ ստախանովյան միթողների կիրառման՝ 151 մետրն ե հաշվվում մի աշխոր:

ԽԱՆՉՅԱՆ — Ինչպե՞ս են մաքրում. ստուգո՞ւմ եֆ, ո՞վ է ստուգում:

ՇԱՀԲԱԶԱՆ — Ցես եմ ստուգում. յես դաշտից դուրս չեմ դալիս:

Ընկերներ, մենք ամեն միջոց պետք ե ձեռք առնենք, վորպեսզի այս տարի ալելի բարձր բերք ստանանք և կստանանք:


Կեցցե՛ ժողովուրդների սիրելի բարեկամ, մեր մեծ ստաջնորդ ընկեր Ստալինը (բուռն, յերկարաժակ ծափեր):

Կեցցե՛ Անդրկովկասի բովլչեկների պողպատյա ղեկավարընկ. Բերիան (բուռն ծափեր):

ԽԱՆՉՅԱՆ — Կեցցե՛ իր խոստումը կատարող ընկեր Շահազյանը (բուռն ծափեր):

7117-92





ԸՆԿ. ՀԱՍԱՆ ԱԼԻՅԵՎԻ ՃԱՌԸ

Վաղարշապատի շրջանի «Յերրորդ ինտերնացիոնալ»
կոլտնտեսության նախագահ

Թ

ույլ տվեք վողջույն հաղորդել մեր Գոյզումբեթի կոլտնտեսականների անունից (ծափեր)։ Բնկերներ, յես ուղում եմ այստեղ պատմել, թե մենք ի՞նչպես բարձր բերքի հասանք 1935 թվականին։

ԽԱՆՉՅԱՆ. — Քանի՞ ցենտներ եք ստացել։

ԱԼԻՅԵՎ. — Միջին հաշվով 18,8 ցենտներ։

ԽԱՆՉՅԱՆ. — Քանի՞ եեկտարից։

ԱԼԻՅԵՎ. — 117 (բուռն ծափեր)։ Մեր այդ հաղթանակին խոշոր չափով նպաստեց այն, վոր պլանները կազմելու ժամանակ մենք ճիշտ դասավորեցինք մեր ուժերն ըստ բրիգադների։ Մենք ունենք բամբակի գործի լավ վարպետներ և նրանց հավասարակես բաժանել ենք բոլոր բրիգադների միջև։

Վարից հետո մեղ մոտ անձրև յեկավ, և այն ժամանակ մենք

արտադրական խորհրդակցություններում վորոշեցինք վհշել առաջացած կոչությունը։ Այդ ժամանակ մեղ մոտ յեկավ ընկ։ Յենդիբարյանը և տեսավ, թե մենք ինչպես եյինք ցանում բամբակը։ Անցյալ տարի մենք սերմը չեյինք զտել, վորն անդրադարձավ բամբակենու հաջող զարգացման վրա, և վորոշ տեղերում այնպես ել լավ բերք չստացվեց։ Այդ՝ դաս հանդիսացավ մեղ համար, պարտավորեցնելով այս տարի հողը չգցել և վոչ մի չգտված սերմ։ Հայտնի յե, վոր գեռ կան մարդիկ, վորոնք ինսյում են մի քանի աշխոր և չեն կատարում բերքատվության բարձրացման համար անհրաժեշտ բոլոր ադրբանեռնարկումները։

Մենք այդպիսի «տնտեսում» չենք կատարի, մենք արդեն դաել ենք բոլոր սերմերը — թե՛ բամբակի և թե՛ մյուս կուլտուրաների։ Անցյալ տարի առանձին հողամասերում վարի ժամանակ մոլախոտերը չեյին վոչնչացվել, և մենք վարից հետո 2—3 անդամ վոչնչացրինք մոլախոտերն ու դրանով իսկ բարձրացրինք բերքը։ Ամենակարենը տափանելն ե։ Յել այս աշխատանքը մեղ մոտ վաստ չի ընթացել։

ԽԱՆՉՅԱՆ. — Ինչպես եք տափանում։

ԱԼԻՅԵՎ. — Զիերով ու յեզներով։ Մեր ողակներում կան աղբավագներ, և նրանք խստորեն հետեւում են աշխատանքի վորակին, ցանքի խորությանը։

ԽԱՆՉՅԱՆ. — Պատմի՛ր, թե ինչ եք արել 1936 թվականի համար։

ԱԼԻՅԵՎ. — Մենք պետք ե ցանենք 110 հեկտար, բայց մենք հնարավորություն չունեցանք ժամանակին հողը վարելու։

ՅԵՆԳԻԲԱՐՅԱՆ. — Բոլորովին չե՞ վարել ձմռանը։

ԱԼԻՅԵՎ. — Զենք վարել, վորովհետեւ տրակտորները վերանորոգման մեջ եյին։ 28 հեկտար մենք պարարտացրել ենք հանքային պարարտանյութով, իսկ մնացածը տեղական պարարտանյութերով։

ԽԱՆՉՅԱՆ. — Յուրաքանչյուր հեկտարի համար վորքա՞ն գումար եք փոխադրում։

ԱԼԻՅԵՎ. — Նայած հողին։ Կա այնպիսի հող, վորուղ մենք փոխադրել ենք 150 սայլ, իսկ կան նաև այնպիսի հողեր, վորոնք պարարտացնում ենք շատ ավելի քիչ քանակությամբ գոմաղբով, նայած թե ինչքան կարիք ե զդում հողը։

ԽԱՆՉՅԱՆ —Քանի՞ մարդ ե ձեզ մոտ դուրս գալիս աշխատանիքի:

ԱԼԻՅԵՎ —Ունենք 250 աշխատումակ մարդ և բոլորն ել դուրս են գալիս աշխատանքի: Այս տարի յես խոսք եմ տալիս պայքարել Ուզբեկստանին հասնելու համար, ինչպես խոստացել ե մեր պատվիրակությունն ընկեր Ստալինին: Բամբակի միջին բերքատվությունն ամբողջ կոլտնտեսությունում կհասցնենք մինչև 25 ցենտների (ծափեր):

ԶԱՅՆ ՏԵՂԻՅ —Զանգիլարի կոլտնտեսության ներկայացուցիչները պարտավորվում են հեկտարից ստանալ 30 ցենտներ (ծափեր):



ԸՆԿ. ՖԼՈ ԱՍԱՏՐՅԱՆԻ ՃԱՌԸ

Հոկտեմբերյան շրջանի Զանֆիդա գյուղի «ԿԻՄ»
ռատուտեսության բամբակ հալաբող

Նկերնե՞ր, թույլ տվեք վողջունել հավաքը: Այստեղ մի շարք ընկերներ խոսեցին, բայց վոչ մեկը բամբակի սերմի զըսման մասին չխոսեց, իսկ դուք դիտեք, թե սերմի զտումն ինչ-քան կարեւոր ե բերքատվության բարձրացման համար:

Ծնկերնե՞ր, յես իմ աշխատանքի չնորհիվ կարողացել եմ 148 կիլո բամբակ հավաքել և պետք ե ասեմ, վոր վոչ վոք մեր գյուղում չեր հավատում. ասում եյին—սուստ ե:

Մեր կոլտնտեսության նախագահը մի որ մի շարք ակտիվ կանանց հավաքեց և միասին գնացինք բամբակ հավաքելու: Գետք ե ասեմ, վոր բոլորի մեջ մրցանակը նորից յես տարա (ծափեր):

ԽԱՆՉՅԱՆ —Քանի՞ հեկտար հող եք պարարտացրել:

ԱՍԱՏՐՅԱՆ —14 հեկտար տեղական պարարտանյութով և 14 հեկտար քիմիական պարարտանյութով:

ԽԱՆՉՅԱՆ —Այդ գործի վրա կանա՞յթ են աշխատում, քետպամարդիկ:

ԱՍՍՏՐՅԱՆ — Առայժմ միայն տղամարդիկ են աշխատում : Հնկերնե՛ր, ինչպես զիտեք, ընկեր Զարել Բուլաղյանը, վոր այսոր նստած ե այստեղ, իր լավ աշխատանքի շնորհիվ մի քանի ամիս սրանից առաջ նստել եր մեր սիրելի առաջնորդ ընկեր Ստալինի կողքին :

Յես այժմ խոսք եմ տալիս աշխատել այնպես, վոր 1936թ. անգայման տեսնեմ մեր մեծ առաջնորդ ընկ. ՍՏԱԼԻՆԻՆ : Յես խոսք եմ տալիս 148 կիլոյի փոխարեն հավաքել 180 կիլո (ծափեր) :

ԶԱՅՆ ՏԵՂԻՑ — Յերկու ձեռքով չանաբելը քանի հոգու յես սովորեցրել :

ԱՍՍՏՐՅԱՆ — 15 հոգու : Յել պետք ե ասել, վոր յերկու ձեռքով չանաքելը դժվար չե :

Կեցցե՛ մեր մեծ առաջնորդ ընկեր ՍՏԱԼԻՆԻ (բուռն ծափեր) :



ԸՆԿ. ԻՍՄԱԻԼՈՎԻ ՃԱՌԸ

Վեդու շրջանի Ավշար գյուղի Զափարիձեյի անվան կոլտնտեսության նախագահ

Նկերնե՛ր, 1935 թվին բամբակի ցանքն սկսելուց առաջ յես կազմակերպչական աշխատանքը դրի իր բարձրության վրա : Առանձին հողամասերին կցեցի առանձին բրիգադներ : Գյուղզործիքները նույնպես ժամանակին վերանորոգեցինք : 44 հեկտար պարարտացրինք քիմիական պարարտանյութով : Մեքենատրակտորային կայանը բամբակի առաջին վարը կատարեց բավականին խնամքով, 18—20 սանտիմետր խորությամբ : Մենք անցյալ տարի կիրառեցինք նաև կրկնավարը և բամբակի ցանքի տակ դրված 60 հեկտարը վարեցինք յերկրորդ անգամ :

1935 թվին ջրի պակասն զգալի չափով ազդեց մեր դաշտերի բերքատվության վրա :

Առանձին հողամասեր ջրի պակասություն են զգացել, վորի հետևանքով հեկտարից մենք ստացանք 16 ցենտներ բամբակ, մինչդեռ կարող եյինք 20 ցենտներ ստանալ :

1935 թվին մենք 4—5 անգամ քաղհանել ենք մեր բամբակի դաշտերը, վորը ավեց լավ արդյունք : Շնորհիվ նախազգուշա-

կան աշխատանքի, մենք կարողացանք մեր դաշտերն ազատել չոռ
հիմանդրությունից :

Մեր բամբակի բերքատվության բարձրացմանը վոչ նվազ
ոգնեցին քեթմենները : Մեր բոլոր բրիգադներն ել քեթմենով աշ-
խատեցին : Այս տարի մենք պետք ե արմատացնենք քեթմենի
դործածությունը :

Բամբակի նոսրացումը կատարել ենք 2—3 անգամ, առաջին
անգամ՝ 10 սանտիմետր հեռավորությամբ, իսկ յերկրորդ ան-
գամ՝ 25 սանտիմետր :

1936 թվին բամբակի բերքատվությունը բարձրացնելու հա-
մար մենք կատարել ենք մի շարք նախապատճենական աշխա-
տանքներ : Սկսել ենք ամբողջ աշլը բաշտ տեղափոխել : Միայն
փետրվարի 5-ին մենք կարողացանք դաշտ տեղափոխել 35 ֆուր-
գոն աղբ, փետրվարի 6-ին՝ 40 ֆուրգոն, 7-ին՝ 44, 8-ին՝ 52
ֆուրգոն : Ինչպես տեսնում եք, քանի գնում ե, քանակը բարձ-
րանում է :

Ընկերներ, յես այժմ խոստանում եմ այս տարի այնպես լավ
մշակել բամբակը, վոր միջին հաշվով յուրաքանչյուր հեկտարից
ստացվի 22 ցենտներ, իսկ առանձին հողամասերից՝ 30 ցենտներ
(ծափեր) :



ԸՆԿ. ԱՆԴ. ԽԱԶԱՏՐՅԱՆԻ ՃԱՌԸ

Հոկտեմբերյան շրջանի Բամբակաշատ գյուղի «Փարոս»
կոլտնտեսության բրիգադիր

Ընկերներ, թույլ տվեք Հոկտեմբերյան շրջանի Բամբակա-
շատ գյուղի կոլտնտեսականների անունից վողջունել Հայաս-
տանի չորս բամբակացան շրջանների ստախանովականներին :
Ընկերներ, մեր կոլտնտեսությունը վոչ մի տարի այսպիսի
հաջողություններ չեր ունեցել, բայց մենք չենք բավականանում
յեղածով . մենք այդ հաջողությունները պետք ե կրկնապատկենք
ու յեռապատկենք :

Ընկերներ, յես ուզում եմ մի քանի թվական տվյալներով
ցույց տալ 1935 թվի մեր հաջողությունները : 1934 թվին ցանել
ենք 444 հեկտար բամբակ, վորից ստացել ենք 447 տոնն բամբակ,
իսկ 1935 թվին դարձյալ 444 հեկտար բամբակից ստացել ենք
570 տոնն, յուրաքանչյուր հեկտարից 14 ցենտներ :

ԽԱՆՁՅԱՆ.—Դա միշի՞նն ե :

ԽԱԶԱՏՐՅԱՆ.—Այս' (ծափեր) :

1934 թվին մեր կոլտնտեսության ընդհանուր յեկամուտը
յեղել է 356·000 ռուբլի, իսկ այս տարի՝ 1·430·256 ռուբլի (ծա-

փեր) : Աշխորին անցյալ տարի վճարել ենք մթերայինի հետ միասին՝ 1 ռ. 67 կ., վորից կանխիկ դրամ՝ 90 կոպեկ : Այս տարի աշխորի դիմաց մենք վճարել ենք 9 ռ. 24 կոպ., վորից կանխիկ դրամ՝ 8 ռ. 44 կոպեկ (ծափեր) :

Մեր անասունների թիվը նույնպես աճել է : Ամ 1934 թվի համեմատությամբ կազմում է 200 տոկոս :

Այս տարի ցրտահերկ պետք է կատարելինք 144 հեկտար, վորից իմ բրիգադը՝ 58 հեկտար : Առաջմ յես կատարել եմ 28 հեկտար :

ԽԱՆԶՅԱՆ .—Նշանակում ե քո բրիգադը ինտ է մնում :

ԽԱՆԶՅԱՆ .—Հնկեր Խանջյան, իմ ամբողջ հողը պատրաստ է : Բացի այդ, մենք մեր հողը մաքրել ենք նաև քարերից, քարակույտերից և այլն :

Մեզ այս տարի պլան ե տրված 6000 ֆուրտոն տեղական գոմաղը տեղափոխել դաշտ : մենք արդեն տեղափոխել ենք 3000 ֆուրտոն :

ԳՈՒԼՈՅԱՆ .—Հնարավորություն կունենա՞ք 6000-ը կատարելու :

ԽԱՆԶՅԱՆ .—Այո՛, ընկ . Գուլոյան : Իմ բրիգադի պլանն է 700 ֆուրտոն . մենք արդեն տեղափոխել ենք 380 ֆուրտոն և խոսք ենք տալիս մինչև 1000 ֆուրտոնի հասցնել (ծափեր) :

Հնկերնե՛ր, յես 1932 թվից յեղել եմ բրիգադիր : Առաջին տարին յես մեկ հեկտարից տվի 7 ցենտներ բերք, 1934 թվին՝ 12 ցենտներ, իսկ 1935 թվին՝ 17 ռւ կես ցենտներ : Ուրեմն ամեն տարի բերքատվությունն ավելացրել եմ 5 ցենտներով : Դրան խոր չոր չափով նպաստեց բամբակի խտությունը : Յես գտնում եմ, վոր պետք է պաշտպանենք բամբակի խտությունը :

ՀԱՐՑ .—Ձեզ մոտ ինչպիսի՞ հողեր են :


ԽԱՆԶՅԱՆ .—Մեզ մոտ կան և՛ ավագային, և՛ կավային հողեր : Հնկերնե՛ր, յես այս տարի այնպիսի բամբակի եմ մշակել, վոր բամբակի դաշտն ուղղակի արջանոց եր (ծափեր և ծիծաղ) :

Հնկերնե՛ր, ի՞նչ արի, վոր յես 1934 թվի 12 ցենտների փոխարեն 1935 թվին ստացա 17 ռւ կես ցենտներ : Առաջին հերթին բրիգադների, ողակների և կոլտնտեսականների ճիշտ բաժանում կատարեցի, դաշտային մասնը լավ կազմակերպեցի : Մյուս կողմից՝ մեր ՄՏԿայանը գարնան վարը լավ կատարեց՝ պահպանե-

լով 20—22 սանտիմետր խորություն : Մենք անցյալ տարի վորուս քանակությամբ քեթմեններ ստացանք, բայց լրիվ չափով չքավարավեցինք : յեթե այս տարի մեր ամբողջ բրիգադներն ապահովվեն քեթմեններով, մենք ավելի լավ արդյունքների կհասնենք :

Այժմ, ընկերնե՛ր, յես խոսք եմ տալիս իմ 58 հեկտար հողեր տալ այնքան բերք, վորքան վաղպատի շրջանի ԶաՓարարտա գյուղի կոլտնտեսությունը խոստացավ (բուռն ծափեր) :

Յես չեմ մոռանա մեր շրջանային ակտիվիտի խորհրդակցությանը տված իմ խոստումը, այն և՝ հեկտարից տալ 30 ցենտներ բամբակ (ծափեր) :



ԸՆԿ. ԱԼ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՃԱՌԸ

Դամարլույի ՄՏԿայանի ավագ-ազրոնում

Ընկերներ, կուսակցությունը խնդիր ե դրել մեր առաջ՝ բարձրացնել բերքատվությունը։ Ինչպիսի՞ նախադրյալներ ե հարկավոր ստեղծել՝ բարձր բերք ստանալու համար։ Նախ՝ վարը։ Մենք այս տարի արդեն ունենք 2500 հեկտար աշնանավար։
ԽԱՆՉՅԱՆ. — Ընդամենը քանի հեկտար ե ձեր պլանը։
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ. — 4950 հեկտար։
ԽԱՆՉՅԱՆ. — Նշանակում ե, 2500 հեկտարը քիչ ե։

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ. — Բնկեր Խանջյան, վարը մեզ մոտ արդեն սկսվել ե։ Մենք մեր բոլոր խորհրդակցություններում խնդիր ենք դրել կոլտնտեսականների առաջ՝ աշնանավարը հերկել յերեք մետրամ, իսկ գարնանավարը՝ յերկու անգամ։ Կարծում եմ, վոր մենք կիարողանանք կատարել այդ։

Մոսկվայում ընկեր ՍՏԱԼԻՆԸ հարցրեց ընկեր Ֆայզուլայելին, թե՝ «ի՞նչ արիք դուք, վոր կարողացաք այդպիսի բարձր բերք ստանալ»։ Բնկ. Ֆայզուլայելը պատասխանեց, վոր բարձր բերքն ստացվել ե չնորհիվ այն բանի, վոր նրանք մի քանի վար են կատարել. յերկու անգամ վարել են, յերրորդ անգամ կրկնավար են կատարել, այնուհետև պարարտացրել են հողը և մեկ անգամ ևս վարել։ Յեթե մենք այս տարի կարողանանք վա-

րել յերեք անգամ, առա դա մի մեծ քայլ կլինի դեպի առաջ՝ բերքատվությունը բարձրացնելու գործում։

Այս տարի մենք պետք ե վորոշ փափոխություններ կատարենք ագրոկանոնների մեջ, վորագեղի կարողանանք բարձրացնել բերքատվությունը։

Մեր շրջանում շաբամեջ ցանքերը տվել են 7 ցենտներ բերք, իսկ Արտաշատ գյուղում՝ 13 ցենտներ։ Սա նշանակում ե, վոր բերքատվությունը կախված է վոչ միայն հողի վորակից։ Դրա համար ել մեքենատրակտորային կայանը վորոշեց այս տարի, յեթե վոչ 100, ապա դոնե 80 տոկոսով մեքենայացնել աշխատանքները (ծափեր)։

Ընդդիմադրել դրան, նշանակում ե չհասկանալ բարձր բերք ստանալու խնդիրը։ Հենց այսպես պետք ե դնել հարցն աղբունքնակազմի առաջ։ Անհրաժեշտ ե կատարել հողժողկոմատի տված պլանը, պարզաբանել այդ հարցերն այն կոլտնտեսականներին, վորոնք թերազնահատում են մեքենայացումը։ Ագրոանձնակազմը պետք ե ոգնի կոլտնտեսականներին՝ տիրապետելու տեխնիկան, վորագեղի, ինչպես ընկեր Ստալինն ե ասել, «թամբենք տեխնիկան ե առաջ մղենք այն, նրանից ստանալով առավելագույն ոգուտը»։

ԶԱՅՆԵՐ ՏԵՂԵՐԻՑ. — Ճի՞շտ ե, նի՞շտ ե (ծափեր)։

Յես խոսք եմ տալիս բոլոր դեպքերում ոգտագործել քեթմենները (բուռն ծափեր)։ Յես լիազորված եմ այսպես խոսելու, վորովհետեւ գիտեմ մեր կոլտնտեսություններում յեղած տրամադրությունը (ծափեր)։

ԶԱՅՆԵՐ. — Ճի՞շտ ե, նի՞շտ ե։

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ. — Հողժողկոմատը պետք ե այստեղ պարտավորություն ստանձնի՝ քեթմեններ տրամադրելու մեջ։ Յես կարծում եմ, վոր շարքերի միջև ընկած տարածությունը պետք ե հավասար լինի 60 սանտիմետրի, իսկ տունկերի միջև յեղած տարածությունը՝ 20 սանտիմետրի։

Այսոր «Խորհրդային Հայաստանում» մենք կարդացինք 38 կոլտնտեսականների դիմումը՝ հասցեյագրված ընկ. Բերիային։ Այդ դիմումի մեջ նրանք խոսք են տալիս հեկտարից ստանալ 30 ցենտներ բամբակ։ Յես կարծում եմ, վոր մեր առաջավոր կոլտնտեսությունները պետք ե միանան այդ դիմումին։

ԿՈՒՐԴԻՆՅԱՆ. — Բոլորս պետք ե միանան։

Խոսք եմ տալիս այս տարի մեր շրջանում հեկտարից ստանալ միջին հաշվով 15 ցենտներ բամբակ (ծափեր)։



ԸՆԿ. ՅԵՐ. ՂԱՐԻԲՅԱՆԻ ՃԱՌԸ

Վաղարշապատի Վերին Խաբունարիս գյուղի «Կոմունիզմի ընտանիք» կողմանը կողմանը բրիգադիր

Ոնկերնե՛ր, յես այստեղ ուզում եմ պատմել, թե ինչպես կատարեցի իմ խոստումը։ Յես խոստացել եյի հեկտարից տալ 16 տեսներ, տվել եմ 16,9 տեսներ։ Բայց այդ հաջողությունը մեր ընդհանուր հաջողությունների Փոնի վրա խղճուկ ե յերեսում։ Յես չկարողացա 16,9 տեսներից ավելի տալ։ Չկարողացա նրա համար, վորովհետեւ այն աղբումիջոցառումները, վորոնց մասին խոսվեց այստեղ՝ այս տարի բերքը բարձրացնելու համար, անցյալ տարի չկատարեցինք։

Ի՞նչ ենք արել այս տարի։ Այս տարի, ընկերնե՛ր, առանց հպարտանալու յես պետք ե ասեմ՝ խոշոր աշխատանք ենք ձեռնարկել։ Դուք գիտեք, վոր մենք եյինք առաջինը, վոր Հայաստանում հայտարարեցինք ստախանովյան տասնորյակ։ Ստախանովյան տասնորյակին չորս որ կողմանը կատարած կայտանից քիմիկան պարարտանյութ եյին տեղափոխում, իսկ վեց որվա ընթացքում մենք դաշտ տեղափոխեցինք 1640 սայլ և 36.000 քթոց

աղք։ Անցյալ ամսի 6-ին յես նամակ ստացա «Կրեսույանսկայա գաղետա» թերթից՝ կոլտնտեսականների համամիութենական յերկրորդ համագումարի տարեղարձը հավերժացնելու վերաբերյալ։ Այդ կապակցությամբ մեր կոլտնտեսության ընդհանուր ժողովը վրոշեց չբավականանալ այդ տասնորյակով և հայտարել ստախանովյան հնդորյակ։ Յեվ պետք ե ասեմ, վոր այս հնդորյակի հաջողություններն ավելի մեծ եյին, քան ստախանովյան առաջին տասնորյակինը։ Անցյալ տարի այս ժամանակ վոչ մի սայլ, վոչ մի քթոց աղք չեյինք փոխադրել դաշտ և վոչ մի հեկտար չեյինք պարարտացըրել։

Ընկերնե՛ր, ինչպէս ենք նախապատրաստվում համամիութենական ստախանովյան որվան։ Նախքան իմ այստեղ գալը, մենք գումարել ենք ակտիվի նիստ, վորտեղ քննության ենք առել ամսի 11-ի որվա նախապատրաստությունը։ Մենք ունենալու յենք շրջիկ խանություններ։ Հացը և ջուրը տեղափոխելու ամբողջ աշխատանքը կազմակերպել ենք։ յուրաքանչյուր բրիգադին առանձին մարդիկ են կցված, վորպեսզի որը ցուրտ լինելու դեպքում կրակ վառեն։ Այդ որը մենք պետք ե 20.000 քթոց աղք տեղափոխենք դաշտ։ Պետք ե ասեմ, վոր մեր գյուղում ընդհանրապես դոմադրը քիչ ե, և մենք տեղափոխում ենք գյուղի հին փլատակների հողերը, վորը չափազանց խոշոր նշանակություն ունի մեր արտերը պարարտացնելու համար։

Այս ստախանովյան հնդորյակը, վոր մենք հայտարարել եյինք, միադամայն նման եր աշնան չանաքին, յերբ գյուղում վոչ վոք չեր մնում։

Ընկերնե՛ր, չառ լավ ե, վոր մեր «Կոլխոզ Փրոնտ» թերթը տպագրեց Թուրքմենստանի բամբակագործների 4—5 անդամ վարանելու փորձը։ Բանն այն ե, վոր այդ փորձը մեզ մոտ ել կիրառենք՝ այս տարի բարձր բերք ստանալու համար։

ԽԱՆՉՅԱՆ. — Ճիշտ ե։


ՂԱՐԻԲՅԱՆ. — Յեթե վոչ 4—5 անդամ, գոնե 3 անդամ պետք ե վարենք։ «Խորհրդային Հայաստան»-ում դրված ե, վոր պետք ե «Հիմիկվանից ծավալել վարը բամբակի դաշտերում և Ուղբեկստանի անվանի մարդու՝ Դիշիբայեվի նման հողը վարել մի քանի անդամ»։

Յես կարծում եմ, վոր իսկույն պետք ե սկսենք վարը։ և բոլոր վերանորոգված տրակտորները դաշտ դուրս բերենք։

Այժմ մեքենաների մասին։ Մենք չունենք շարքացան և սրսկիչ մեքենա, մինչդեռ բոլորիդ հայտնի յե, թե չո՛ հիվանդությունն ինչպիսի մեծ չարիք ե մեղ համար։ Դրա գեմ պետք է լուրջ, չափաղանց կազմակերպված պայքար մղել։

Ընկերնե՛ր, մի քանի խոսք տրակտորային կուլտիվացիայի մասին։ Պետք է ասել, վոր տրակտորային կուլտիվացիան չափաղանց մեծ արդյունք ե տալիս, գրա համար պետք ե մեր բոլոր կոլտնտեսությունները լայնորեն ընդառաջեն բամբակի մեքենայական մշակմանը։

Ընկերնե՛ր, յես վերջացնում եմ։ Մենք վորոշել եյինք յուրաքանչյուր հեկտարից ստանալ 17 ցենտներ, բայց ընդհանուր ժողովում այդ թիվը հասցվեց 20 ցենտների, իսկ իմ բրիդադը պարտավորվեց տալ միջինը 30 ցենտներ, իսկ առանձին ողակներից՝ 40 ցենտներ (ծափեր)։ Յես իմ հերթին մրցման եմ կանչել Վաղարշապատի շրջանից Զարել Բուղաղյանին, Զավեն Վուկանյանին և Ղամարլույի շրջանից՝ ընկեր Հովհաննես Շահբաղյանին։



ԸՆԿ. ՎԱՐԴՈՒՇ ՇԱՀԻՆՅԱՆԻ ՃԱՌԸ

Ղամարլույի շրջանի Քաղաքա գյուղի կուկաս Ղուկասյանի անվան կոլտնտեսության բամբակի հավաքող

Ընկերնե՛ր, յես կպատմեմ այն մասին, թե յես ինչպես եմ կազմակերպել իմ աշխատանքը դարնանացանի ոկրքից մինչև բերքահավաքի վերջը։ Քաղհանի աշխատանքների ժամանակ մեզ քաղհանի 800—840 քառակուսի մետր նորմա տվին, մինչդեռ յես քաղհանում եյի որական 2540 քառակուսի մետր (ծափեր)։

ԳՈՒԼՈՅԱՆ — վորակն ստուգված ե, թե վո՞չ։

ՇԱՀԻՆՅԱՆ — Այո՛, ստուգում եր մեր ագրոնոմը։

ԳՈՒԼՈՅԱՆ — Յեվ գտավ միանգամայն լա՞վ։

ՇԱՀԻՆՅԱՆ — Այո՛։ Յես պետք ե ասեմ, վոր քաղհանի վորակը լավ եր վոչ միայն ինձ մոտ, այլև իմ ամբողջ ողակում։ Միայն թե նրանք ավելի քիչ եյին քաղհանում, յուրաքանչյուրը 1200 քառակուսի մետր։ Դրանով, իհարկե, մենք չենք կարող բավարարվել։ 800 քառակուսի մետրի փոխարեն մենք պետք ե

տանք 2500, իսկ 2500-ի փոխարեն՝ 3000-ական քառակուսի մետր։
ԽԱՆՉՅԱՆ.—Ինչո՞վ եք դուք քաղաքում։

ՇԱՀԻՆՅԱՆ.—Ռւբագոլ։ Իմ ողակը, վոր բաղկացած ե վեց
կանանցից, ուներ 4 հեկտար բամբակի ցանք։ Յուրաքանչյուր
հեկտարից մենք ստացանք 24-ական ցենտներ բամբակ։ Բայց յես
ունեմ մի հեկտար ես, վորից ստացել եմ 30 ցենտներ։

ԲԵՐՔԱԿԱՎԱՔԻ ժամանակ չանաքի որական նորման մոտ 35
կիլո յեր, բայց յես միջին հաշվով որական հավաքում եյի 105
կիլո, իսկ յերբեմն ել նույնիսկ 125 կիլո։ Ամբողջ բերքակավաքի
ընթացքում յես հավաքել եմ 4000 կիլո բամբակ։ Իմ հավաքած
ամբողջ բամբակն ընդունվել ե վորպես ընտիր տեսակի։

ՅԵՍ ԽՈՍՔ Եմ տալիս, վոր 1935 թվականին յուրաքանչյուր
հեկտարից ստացած 18 ցենտներ բամբակի փոխարեն, մենք 1936
թվականին յուրաքանչյուր հեկտարից կհավաքենք 25 ցենտներ,
իսկ իմ ողակը կհավաքի 30 ցենտներ։

ԽԱՆՉՅԱՆ.—Վորքա՞ն փող ես ստացել դրա դիմաց։

ՇԱՀԻՆՅԱՆ.—Մտացել եմ 2330 ռուբլի (ծափեր)։ ՅԵՍ ունեմ
218 աշխոր։

ԽԱՆՉՅԱՆ.—Լավ ե, շատ լավ ե։

ՇԱՀԻՆՅԱՆ.—Այնուհետև յես ուզում եմ ասել, վոր 1936
թվականին մեր նորմաները չպետք ե մնան նույնը, ինչ վոր յե-
ղել ե 1935 թվականին։ Ինչպես քաղհանի, այնպես և բերքա-
հավաքի նորմաները պետք ե բարձրացվեն։ ՅԵՍ խոսք եմ տա-
լիս 1936 թվականին ել ավելի լավ պայքարել բարձր բերքի հա-
մար։ Ընկերներ, իմ կարծիքով, դեռ բալական չե այն, վոր
մենք պայքարում ենք միայն կոլտնտեսականների նյութական
բարեկեցության բարելավման համար։ Սա դեռ բոլորը չե։ Մենք
պետք ե նաև ոգնենք մեր յերկրի պաշտպանումակության ամ-
րացմանը։ Դուք հավանորեն կարդացել եք ընկ։ Մոլոսովի վեր-
ջին ճառը և գիտեք, թե խաղաղության գործին և մեր շինա-
րարությանն ինչպես են սպառնում զանազան իմպերիալիստական
յերկրներ։ ՅԵՍ առաջարկում եմ, վոր բամբակացան չորս շրջան-
ների մեր այս հավաքը գնի չորս ինքնաթիռ և հանձնի դրանք մեր
կարմիր բանակին (բուռն ծափեր)։

Սրանով յես վերջացնում եմ։ Կեցցե՛ մեր սիրելի առաջնորդ
ընկեր ՍՏԱԼԻՆԸ (բոլորը վոտի յեն կանգնում. ուռաներ, բուռն
ծափեր)։



ԸՆԿ. ԲԱՐԳԵՆ ՇԱՀՈՅԱՆԻ ՃԱՌԸ Վաղարշապատի մեքենաստրակտորային կայանի գյուղատնտես

ԸՆԿԵՐՆԵՐ, թույլ տվեք վաղարշապատի շրջանի սոցիալիս-
տական գաշտերի ճարտարապետների կողմից վողջունել կուսակ-
ցության և կառավարության ղեկավարներին և այստեղ հավաք-
ված ստախանովականներին (ծափեր)։

ԸՆԿԵՐՆԵՐ, յես ուզում եմ խոսել միջարքային տարածու-
թյան մասին։ Այստեղ մի քանի ընկերներ կտրուկ կերպով շեշ-
տում եյին, վոր 50 սանտիմետր միջարքային տարածության
վրա կատարված ցանքը վնասաբարություն է։ 1933 թվին ել
նույնն եյին ասում, բայց մենք Զաֆարաբատի կոլտնտեսությու-
նում կարողացանք ցանել 50 սանտիմետրի վրա և վատ արդյունք
չստացանք։

ԽԱՆՉՅԱՆ.—Տրակտորային կուտիվացիա յեք կատարել,
քե ձիու։

ՇԱՀՈՅԱՆ.—Զիու կուտիվացիա։

Բնկերնե՛ր, իմ մի քանի տարվա փորձերն ապացուցեցին, վոր 60 սահմանական տարից ավելի միջարքային տարածություն թողնելու դեպքում՝ պակաս բերք ենք ստանում :

ՀԱՅԻՑ ՏԵՂԻՑ.—Ինչո՞ւ համար :

ՇԱՀՈՅԱՆ.—Վորովհետև բաժբակենին ճյուղավորվում ե :

ՏԵՂԻՑ.—Յերե լավ մշակվի, չի' նյուլավորվի :

ՇԱՀՈՅԱՆ.—Վո՛չ, կճյուղավորվի :

Այժմ խոսեմ ջրի մասին : Կոլտնտեսություններից շատերը գտնում ենին, վոր ծաղկի ժամանակ չի կարելի ջրել, իսկ մենք կարողացանք հասկացնել, վոր միայն ջիլ հողերում չի կարելի ջրել : № 915 սերմի բաժբակենին ծաղկման շրջանում ջուր ե պահանջում :

ԶԱՅՆԵՐ ՏԵՂԵՐԻՑ.—Ճիշտ ե :

ՇԱՀՈՅԱՆ.—Զաֆարաբասում ընկ . Վիրաբ Սարգսյանը դրա չնորհիվ կարողացավ յուրաքանչյուր հեկտարից 20,3 ցենտներ բերք ստանալ :

Մի քանի խոսք ել վնասատուների դեմ մղած պայքարի մասին :

Բնկերնե՛ր, պետք ե ասել, վոր մեր կոլտնտեսություններից շատերն անցյալում թերաղնահատում եյին պոլիտութիւնը : Սակայն մենք այն դորժածեցինք 1935 թվին և լավ արդյունքի հասնեք :

ԶԱՅՆ ՏԵՂԻՑ.—Բայց ինչո՞ւ սերմերը խառնեցիք, այդ մասին ասա :

ՇԱՀՈՅԱՆ.—Դա մեր մեղքը չի յեղել :

ԻԱՆԶՅԱՆ.—Այնուամենայնիվ, դուք պարտավոր եք հսկել, վորպեսզի այդպիսի բան չկատարվի : Դրանով դուք հարվածում եք մեր մյուս կոլտնտեսություններին : Դուք պատասխանատու յեք դրա համար : Այժմ ասեք—այս տարվա համար ի՞նչ եք մտածում, նորից կլսառնե՞ք, քե վոչ :

ՇԱՀՈՅԱՆ.—Վո՛չ, չենք խառնի : Նկատի ունենալով այն ենտուզիազմը, վոր կա մեր կոլտնտեսականների մեջ, կարող ենք խոսք տալ, վոր յուրաքանչյուր հեկտարից այս տարի կտանք 22 ցենտներ :

ԻԱՆԶՅԱՆ .—Ինչո՞ւ վոչ 25: Ուրիշները խոստանում են տալ 25 ցենտներ :

ՃԱՀՈՅԱՆ .—Մենք կոլտնտեսականների հետ վորոշել ենք 22 ցենտներ տալ, բայց լավ կաշխատենք և յուրաքանչյուր հեկտարից կտանք 25 ցենտներ (ծափեր) :

ԿԵՋԵՇ .—Համաշխարհային պրոլետարիատի և մեր կուսակցության առաջնորդ ընկ . ԱՏԱԼԻՆԸ (բուռն, յերկարածև ծափեր) :

ԿԵՋԵՇ .—Անդրյերկոմի քարտուղար ընկ . ԲԵՐԻՄՆ (բուռն ծափեր) :

ԸՆԿ. ՀԱՐ. ՄԻՆԱՍՅԱՆԻ ՃԱՌԸ

Վեդու ՄՏԿայանի վնասատուների դեմ պայքարող
գյուղատնտես

Հնկերներ, թույլ տվեք վողջունելու բամբակագործության
ասպարիզում աշխատող ստախանովականներին:

Նախ և առաջ ուղղում եմ խոսել այն մասին, թե ինչպիսի
պայքար ենք մղել մենք բամբակի չոռ հիվանդության դեմ: Մենք
1935 թվին ցանել ելինք 1217 հեկտար բամբակ, վորը տվել ե
ավելի լավ արդյունք, քան 1934 թվին: Չորս դեմ պայքարն ամ-
բողջապես տարվել ե պոլիտութիւնի սրսկումով: Սրսկած պո-
լիտութիւն ամբողջապես կոլչում ե բամբակի տերեններին և տա-
լիս ե մեծ արդյունք: Յես այդ փորձը կտուարեցի մի հեկտարի
վրա և յեկա այն յեղբակացության, վոր չոռի դեմ պոլիտութի-
ւի միջոցով պայքարն ամենահաջողն ե:

ԶԱՅՆ ՏԵՂԻՑ.—Յերբ բամբակենին ծաղկած ե, պոլիտու-
թիւնի սրսկումն ի՞նչպես ե անդրադանում ծաղկի վրա:

ՄԻՆԱՍՅԱՆ.—Յես այդ փորձը չեմ կատարել:

ԽԱՆՁՅԱՆ (Հարց տվյալն) .—Դուք փորձել եք, ինչպես ե
անդրադանում:

ՏԵՂԻՑ.—Վատ ե անդրադանում:

ՄԻՆԱՍՅԱՆ .—Կա մի վնասատու ես,—դա կարաղը ինան ե:
Բամբակվարչությունը մեզ հրահանգել ե կարաղը ինայի դեմ
պայքարել փարիզյան կանաչի միջոցով, սակայն փարիզյան կա-
նաչն այն եֆեկտը չի տալիս, ինչ վոր պետք ե: Մենք փարիզ-
յան կանաչը սրսկելուց հետո ստիպված յեղանք դարձյալ ձեռքով
համարել այդ վնասատուներին:

Այժմ յես կիսուեմ 1936 թվի մեր անելիքների մասին:

Բամբակի տակ յեղած տարածությունները պարարտացրել
ենք 100 տոկոսով: Հավաքված գոմաղբը դաշտ դուրս բերելու
համար մենք մեր ամբողջ տրանսպորտը վոտքի յենք հանել:

ԽԱՆՁՅԱՆ .—Վո՞ր գյուղերին եք սպասարկում:

ՄԻՆԱՍՅԱՆ .—Կեղու շրջանի դաշտային գյուղերին, հարկ
յեղած դեպքում նաև լեռնային շրջաններին: Բացի այս, մենք
կազմակերպել ենք ագրոխմբակներ, ուր ընդգրկված են 30—40
բրիգադիրներ ու կուսակցական կազմակերպիչներ: Ունեցել ենք
5 ագրողույց՝ ագրոկանոնների մասսայականացման նպաստ-
կով:

ԽԱՆՁՅԱՆ .—Ձեր ջրային ցանցը շատ վատ դրույյան մեջ ե .
առուները ձեր շրջանում լցված են տիղմով, վորի պատճառով ա-
հազին բանակուրյամբ զուր եք կորցնում. յես հարցնում եմ,
ի՞նչ եք անում դուք այդ առուները մաքրելու համար:

ՄԻՆԱՍՅԱՆ .—Այդ մասին ավելի լավ ե դիրեկտորն ասի:

ԽԱՆՁՅԱՆ .—Տեսնո՞ւմ եք, նշանակում ե այդ գծով դուք աշ-
խատանի չեք տանում:

ՄԻՆԱՍՅԱՆ .—Մենք աշխատանք տանում ենք, սակայն յես
այդ մասին չեմ ուղղում խոսել, քանի վոր դիրեկտորն այստեղ
յելույթ կունենա և կասի:

Յես խոսք եմ տալիս 1936 թվի բերքահավաքին տալ հեկտա-
րից 15 ցենտներ բամբակ, իսկ կուտանտեսությունը կտա 20 ցենտ-
ներ:

ԸՆԿ. ԱՄԲՐՈՒԻՄՈՎԻ ՃԱՌԸ

Սերմնաբույծ գյուղատնտես

Յուրաքանչյուր կոլտնտեսական գիտե, թե բնաքատվության բարձրացման համար ինչ խոչոր նշանակություն ունի բամբակի տեսակալոր, մաքուր սերմացուն, իսկ տեքստիլ արդյունաբերության համար՝ միատեսակ պլրոդուկցիան, այսինքն՝ թելի յերկարությունը և բարձրակությունը:

Մինչև Հայաստանի խորհրդայնացումը մեղ մոտ ցանվել է խառը սերմ, այսպես ասած՝ գործարանային խառնուրդ, վորի մեջ կային բոլոր տեսակի սերմեր. այն ժամանակ ցանվում եր «Կինդ», «Նավրոցկի», «Կեվելենտ», «Ռուսել» և այլն:

Հայաստանի խորհրդայնացումից հետո մեր առաջ կարեվորագույն խնդիր ե դրվում՝ կարճ ժամանակամիջոցում հանել մեր դաշտերից այդ խառնուրդը և ցանել այնպիսի տեսակ (սորտ), վորը համապատասխանի մեր հողային, ջրային, կլիմայական պայմաններին ու արդյունաբերության աճող պահանջներին:

Մենք յերկու տարում ազատեցինք մեր դաշտերն այդ խառնուրդից:

Վրաստանի և Աղբբեջանի փորձառաշտերից 1928 թվին բերինք «Կինդ» և «Նավրոցկի» տեսակի սերմերը, վորով Յերևանի գործարանն առաջնորդվեց տեսակալոր, մաքուր սերմացույով: 1929 թվին մենք փոխարինեցինք նաև Հոկտեմբերյանի գործարանի խառը սերմացուն: Դրա հետ միաժամանակ մեր կողմից դրված հետազոտական փորձերը Միջին Ասիայից ստացված № 169 և № 182 սելեկցիոն տեսակների վերաբերմամբ՝ հաջող արդյունքներ չտվին: Հետազայում փորձեր են դրված նույնպես կիրովաբաղի (Աղբբեջան) սելեկցիոն կայանից ստացված սերմերի (№№ 492, 114, 915, 246, 96 և այլն) վերաբերմամբ: Այդ սերմերից մենք կանգ առանք 915 և 246 համարների վրա, վորոնք իրենց վրակային ցուցանիշներով դերազանցեցին «Կինդ» և «Նավրոցկի» տեսակները:

ԶԱՅՆ ՏԵՂԻՑ.—Հայաստանի բոլոր շրջաններում հնարավո՞ր ե այդ տեսակները տարածել:

ԱՄԲՐՈՒԻՄՈՎ..—Այս՝, բոլոր շրջաններում: Այն ժամանակ, յերբ «Կինդը» տալիս ե թելի յերկարություն 25—26 և 26—27 միլիմետր, 915 համարը տալիս ե 28—29 միլիմետր: Յերբ «Նավրոցկին» տալիս եր 27—28 միլիմետր, 246 համարը տալիս ե 29—30 միլիմետր թելի յերկարություն: Ինչպես տեսնում եք, այդ կարճ ժամանակամիջոցում մենք թելի յերկարությունը մեկ միլիմետրով բարձրացրել ենք:

Նույնը պետք ե ասել մազմզուկների յելունքի (выход волокна) մասին: Այն ժամանակ, յերբ «Կինդը» տալիս եր 32—33 տոկոս յելունք, 915 համարը տալիս ե 34—35,5 տոկոս, յերբ «Նավրոցկին» տալիս եր 31—33 տոկոս, 96 և 246 համարները տալիս են 33—33,5 տոկոս յելունք:

1935 թվին յելունքը (выход) յեղել ե ցածր: Այս բացատրվում ե 1935 թ. բացառիկ տարությամբ և ջրի սակալությամբ, ինչպես չեշտեցին շատ կոլտնտեսականներ իրենց ճառերում, հայտնելով, վոր բամբակենին ջրել են մինչև 10 անգամ, բայց և այնպես բամբակենին ծարավ ե մնացել: Այս խիստ տաքությունը, վոր ունեցել ենք հուլիս, ոգոստոս և սեպտեմբեր ամիսներին, ազդել են այդ յելունքի վրա:

ԽԱՆՉՅԱՆ.—Բացասակա՞ն, քե դրական:

ԱՄԲՐՈՒԻՄՈՎ..—Բացասական: № 915 սերմային Փրակցիա-

Ների 35 տոկոսի փոխարեն 1935 թվին ստացել ենք 34—34,5 տոկոս :

ԶԱՅՆ ՏԵՂԻՑ .—իսկ № 246-ից :

ԱՄԲՐՈՒՄՈՎ .—№ 246-ից ավելի ցածր ենք ստացել՝ 31—32 տոկոս : Պետք ե ասել, վոր 246 համարը մենք տալիս ենք հատկապես այն շրջաններին, վրուտեղ ջուրը պահան ե, ինչպես որինակ՝ Վաղարշապատի գնման կայանի դյուզերին և վեղու շրջանին : Յեկ պետք ե ասեմ, վոր ջրով ապահովված տեղերում այդ տեսակը տվել ե բարձր յելունք : Որինակ՝ Հոկտեմբերյան շրջանի Սովետականի կոլտնտեսությունում այդ 246 համարը, վոր ջրվել ե 9 անդամ, տվել ե յելունք 33 տոկոս :

ԿՈՒՐՂԻՆՅԱՆ .—վո՞չ, յեղել ե 32 տոկոս :

ԱՄԲՐՈՒՄՈՎ .—Բնկեր Սուբիասյանն այստեղ ե, և նա կասի ինչքան ե յեղել :

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ (տեղից) .—Առաջին տեսակը՝ 33 տոկոս, իսկ յերկրորդը՝ 32 տոկոս :

ԱՄԲՐՈՒՄՈՎ .—Այս բոլորն ասում են, վոր պետք ե մեր ցանքերն իր ժամանակին ապահովենք ջրով, և պարզենք ջրի սխեմաներն ու նորմաները :

ԿՈՒՐՂԻՆՅԱՆ .—№ 915-ն ինչքա՞ն տվեց :

ԱՄԲՐՈՒՄՈՎ .—Պետք ե ասել, վոր ջրի պատճառով այն ևս քիչ տվեց՝ 33—34 տոկոս :

ՅԵՐԿՐՈՐԴ պարտականությունը, վոր դրված ե մեզ վրա, դա սերմֆոնդի վերանորոգման խնդիրն ե: Ընդունված սիեմայով՝ սերմը դաշտում պետք ե ողտափործել 5 տարուց վոչ ավելի և հինգ տարուց հետո պետք ե հանձնել Ձեթ-ուժառ դործարանին: Սերմի վերանորոգման համար ամեն տարի, մինչև 1934 թիվն ստանում եյինք Վրաստանից և Ադրբեջանից քիչ քանակությամբ առաջին ռեզրուլցիաների մաքուր տեսակավոր սերմեր, վորը բազմացնում եյինք Արբաթի գյուղախմբի սերմաբուժական կոլտնտեսություններում և զտում եյինք Յերկանի գործարանին կից պետք ե կառուցվեր ՄՏԿ-ի ջինդառուզը (փոքր սերմաղուչ գործարան), վորը, դժբախտաբար, մինչեւ այժմ պատրաստ չի:

աշխատանքները տարել ենք յերեք սերմնաբուժական կոլտնտեսություններում և պետք ե ասել՝ ունեցել ենք խոշոր թերություններ այն պատճառով, վոր Վաղարշապատի ՄՏԿ-ի կողմից լուրջ ուշադրություն չի դարձված այդ կոլտնտեսությունների վրա, յակ հողեր չեն հատկացված սերմնաբուժարաններին, բերքի հավաքման շրջանում գյուղատնտեսներին վերցրել են այլ աշխատանքի, վորի պատճառով առաջին ռեզրուլուցիան Գոյրդյումբեթի սերմնաբուժական կոլտնտեսություններում խառնվել ե:

ԽԱՆՉՅԱՆ .—Հակոբյանն այստեղ ե :

ՏԵՂԻՑ .—Այստեղ ե :

ԽԱՆՉՅԱՆ .—Դուք գրված եք քստ եյության խոսելու. նկատի ունեցեք, վոր ձեր յելայրում այդ խնդրի մասին ընկ. Ամբուլունվին պետք ե պատասխանեք :

ԱՄԲՐՈՒՄՈՎ .—ՄՏԿայանը հումս ամսին, բամբակի ծաղկելու շրջանում, պետք ե մաքրեր 95 և բարձր տոկոս մաքրություն ունեցող բամբակի ցամքերը վոչ տիպիկ թփերից, մինչդեռ այդ աշխատանքները ՄՏԿ-ն տարել ե սեպտեմբերի 27-ից մինչև հոկտեմբերի 28-ը: Այն գյուղատնտեսները, վորոնք պետք ե գլավորելին բերքահավաքի աշխատանքները, սերմնաբուժական կոլտնտեսություններում զբաղված եյին վերև հիշած թփերը մաքրելու գործով:

ԵԼԻՄԱՅԻՆ մատերիալը, առաջին և յերկրորդ ռեզրուլուցիաները գործարան չուղարկվելու և այստեղ այլ սերմերի հետ չխառնելու համար, ինչպես և առանձին մաքրելու համար, Յերեանի գործարանին կից պետք ե կառուցվեր ՄՏԿ-ի ջինդառուզը (փոքր սերմաղուչ գործարան), վորը, դժբախտաբար, մինչեւ այժմ պատրաստ չի:

ԽԱՆՉՅԱՆ .—Ինչո՞ւ պատրաստ չե, ո՞վ պետք ե պատրաստեր, դո՞ւ, թե ՄՏԿ-ն:

ԱՄԲՐՈՒՄՈՎ .—Շինությունը պետք ե պատրաստեր տրեստը, իսկ մոնուաժը՝ Հողժողկոմատը: Մարտի մեկին պատրաստ կլինի:

Այսպիսով, սերմերի վերանորոգման հարցը մեղ մոտ պետք ե համարել կանոնալորված:

Այժմ այն մասին, թե ինչ նախապատրաստական աշխատանքները տարել 1936 թվի սերմացույի համար: Առաջինն այն ե, վոր 1935 թվին տեղում սերմացուն մաքրել են ձեռքով. դժբախտա-

բար, այդ գործն այնքան լավ չի տարված: Մաքրելու ժամանակ վոչ տիպիկ, վասորակ ու վտիտ սերմերի հետ միասին ջոկել են նաև առողջ ու տիպիկ սերմեր, վորոնց տոկոսը զանազան կուտնտեսություններում հասնում եր 25—45%-ի:

ԽԱՆՉՅԱՆ.—1935 թվին կատարված աշխատանքի մասին եք խոսում:

ՍՄԲՐՈՒԽՈՎ.—Այո՛, յես խոսում եմ 1936 թվի համար 1935 թվին կատարված նախապատրաստական աշխատանքների մասին: Վորպեսզի չկրկնվեն նման յերեսութներ, Հողգողկոմատը ներկայումս պատրաստում է ետալուններ, այսինքն՝ սերմերի այնպիսի նմուշներ, վորոնք պետք են ընտրվեն ընդհանուր մասսայից: Ամբողջ պատրաստած սերմֆոնդը յենթարկվել է լաբորատորիական անալիզի. սերմացվի միջին ծլունակությունն է 85 և ավելի տոկոս:

ՄԵՐ ՀԵՏԿԵՐԱԼ աշխատանքը յեղել ե բամբակի դաշտերը յենթարկել ապրոբացիայի՝ մասսայական սերմացու պատրաստելու համար:

ՄՏԿ-ՆԵՐՆ այս աշխատանքների վրա հատուկ ուշադրություն չեն դարձրել, վորի համար շատ անորմալ յերեսութներ են տեղի ունեցել:

ՄԵԾ ՎԵԴՈՒ կոլտնտեսությունում ապրոբացիայի ընթացքում հայտաբերված եր միայն վեց հեկտար բամբակի ցանք՝ պիտանի սերմ պատրաստելու համար, վորտեղից սպասվում եր 50—60 ցենտներ բամբակ, այնինչ կոլտնտեսությունն այդ տարածությունից սերմացույի համար հանձնել ե դնման կայանին մոտ 280 ցենտներ սերմացու բամբակ՝ խառնելով նրա հետ վոչ սերմային դաշտերից ստացած բամբակը:


ԱՆՀՐԱԺԵԾՄ ե, վոր ՄՏԿ-ՆԵՐԸ լուրջ ուշադրություն դարձնեն ապրոբացիայի աշխատանքներին և սերմացվի համար ստացվելիք բամբակը հավաքեն ու առանձին հանձնեն դնման կայաններին՝ կցելով նրանց համապատասխան ետիկետներ և պասպորտներ:

Կոլտնտեսություններում շատ հաճախ դնման կայանից ստացած սերմացուն մեխանիկորեն խառնում են կերի հունդի հետ, վորպեսզի կարելի լինի խուսափել նման դեպքերից, հարկավոր ե յուրաքանչյուր կոլտնտեսությունում բամբակի ցանքի ժամանակ ունենալ հատուկ պատասխանատու ահճ, վորը սերմացուն

ստանա գնման կայանից, ստուդի, թե արդյոք համապատասխանում է սերպիֆիկատին, թույլ չտա, վոր սերմացուն նույն ֆուրգոնում տեղափոխվի՝ կերի հունդի հետ, ստուգի տոպրակները, վոր լինեն մաքուր այլ բամբակի սերմերի մնացորդներից և ինքն ել սերմերը բաժանի բրիգադիքներին՝ ցանելու համար:

Վերջում յես պետք ե նշեմ, վոր այն յերկու տեսակները, վորոնց վրա մենք կանգ ենք առել, վերջնական չեն: Մենք այդ գծով այս տարվանից կազմակերպելու յենք բուսական տեսակների վորձեր՝ հայտաբերելու այնպիսի տեսակ, վոր ավելի համապատասխան լինի մեր պայմաններին, ավելի բերքատու լինի, վնասատուների դեմ դիմացկուն և համապատասխան տեքստիլ արդյունաբերության պահանջին:

Յես համոզված եմ, ընկերներ, վոր յեթե մենք սերմնաբուծության գործը գնենք առողջ հիմքերի վրա, և լրիվ կիրառենք բոլոր ապրոկանոնները, մենք կկատարենք ընկեր Խանջյանի խոստումը, վոր նա տպել ե ընկեր Ստալինին (ծափեր):



ԸՆԿ. ՎԻՐԱԲ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՃԱՌԸ

Վաղարշապատի շրջանի Զափարաբադ գյուղի «Աշխատանք» կոլտնտեսության բրիգադիր

Պաֆարաբադի կոլտնտեսությունը 1935 թվականին ցանեց 75 հեկտար բամբակ և յուրաքանչյուր հեկտարից միջին հաշվով ստացավ 18,3 ցենտներ բամբակ: Մենք տվել ենք 7 տոկոս բարձր և 92 տոկոս միջին տեսակի բամբակ:

Իմ բրիգադը ցանել եր 16 հեկտար բամբակ: 10 հեկտարի վարը մենք կատարել եյինք աշնանը, իսկ 6 հեկտարին՝ դարնանը: Բացի այդ, մենք ճիշտ ինտերվալներ պահպանեցինք շարքերի միջև: Դրա հետևանքն այն յեղավ, վոր մեր բրիգադը միջին հաշվով ստացավ հեկտարից 23 ցենտներ բամբակ: Դրան զուգընթաց, մեզ հաջողվեց կրծատել ցանքի ժամկետները: Յեթե առաջ մենք ցանքը կատարում եյինք 10 որվա ընթացքում, ապա 1935 թվականին կատարեցինք 5 որում: Մեր աշխատանքի փորձը ցույց է տալիս, վոր ինչքան ավելի քիչ ժամանակ ենք ծախսում մենք ցանքի համար, դրա հետևանքով այնքան ավելի յե բարձրանում բերքատվությունը: Ցանքի ժամկետների կրնառումը բերքատվությունը բարձրացնում է առնվազն 20 տոկոսով:

Քաղհանի աշխատանքները նույնպես մենք կատարել ենք վորակապես բարձր: Առաջ մեր բրիգադը կատարում եր 4—5 քաղհան, իսկ 1935 թվականին կատարեց 6—7 քաղհան:

Այժմ՝ ցանքերը ջրելու մասին: Անհրաժեշտ է, վոր բամբակը ջրելու մեր փորձն ոգտագործեն նաև մյուս կոլտնտեսությունները: Մենք անցնում ենք հնդաշարք ցանքի սիստեմին, այդ հեշտացնում է աշխատանքը:

Յես արդեն ասացի, վոր մեր կոլտնտեսությունը հեկտարից ստացել ե 18,3 ցենտներ բերք:

ԽԱՆՁՅԱՆ — Զեր կոլտնտեսության համար դա քիչ է:

ՍԱՐԳԱՅԱՆ — Բնկեր Խանջյանը միանդամայն ճիշտ է մատնանշում, վոր մեր կոլտնտեսության համար այդպիսի բերքատվությունը բարձր չէ: Այդպիսի բերք ստացվեց այն պատճառով, վոր 1935 թվականին չոռով վարակվեցին մեր համարյա բուլոր ցանքերը: Մինչդեռ առաջ մենք դաշտում ոգտագործում ենինք ընդամենը մեկ սրսկիչ, 1935 թվականին մենք ստիպված յեղանք գործի դնել 25 սրսկիչ: Յել չնայած մեր այս պայքարին, կորուստը հասավ 20 տոկոսի: Չորս դեմ ավելի հաջողությամբ պայքարելու համար անհրաժեշտ է լցնել հին առուները և անցկացնել նորերը՝ համապատասխան մեր հողերի պլանավորմանը:

Այս տարի իմ բրիգադն անցյալ տարվա 16 հեկտարի փոխարեն պետք է ցանի 23,5 հեկտար բամբակ, վորովհետեւ այժմ մեր բրիգադները խոշորացվել են: Չորս բրիգադի փոխարեն աշխատելու յեն յերեք ավելի խոշոր բրիգադ:

Մեր բրիգադն արդեն ակսել է պարարտացումն ինչպես տեղական, այնպես և հանքային պարարտանյութերով: Բնդամենը՝ կոլտնտեսությունը արդեն պարարտացված է 10 հեկտար տարածություն: Վորմանք գտնում են, վոր մեկ հեկտարի պարարտացման համար բավական ե 45 սայլ գոմաղթ, իսկ յես գտնում եմ, վոր դա քիչ է, հարկավոր ե 100 սայլ:



ԸՆԿ. Պ. ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆԻ ՃԱՌԸ

Գյուղատնտեսական ինստիտուտի պրոֆեսոր

Ակերներ, բոլորիդ հայտնի յե, թե ինչպիսի հսկայական նշանակություն ունեն արհեստական պարարտանյութերը բերքատվության բարձրացման գործում։ Մեր կոլտնտեսականները շատ լավ են հասկանում այդ, դրան ապացույց է հանդիսանում այն փաստը, վոր նրանք մեկը մյուսի ձեռքից են խլում պարարտանյութերը։ Անցյալ տարի մենք փորձնական նպատակների համար պարարտանյութ փոխադրեցինք նորացեն, բայց այդ պարարտանյութերը, կարելի յե ասել, մեզանից ուղղակի «գողացան» և դաշտ փոխադրեցին։

Սակայն պարարտանյութերը դաշտ փոխադրելը և շաղ տալը դեռ բավական չե։ Հարկավոր նաև դիտենալ, թե ի՞նչ պարարտանյութով և ի՞նչ քանակությամբ պետք է պարարտացնել հողը։ Մենք ունենք ընդհանուր տվյալներ, վորոնք վկայում են, վոր մեր դաշտերը պահանջում են ազոտ և ֆոսֆոր, բայց թե ի՞նչ քանակությամբ ազոտ և ֆոսֆոր է հարկավոր, այս մասին մենք տվյալներ չունենք։ Միայն յերկրորդ տարին ե, ինչ մենք հե-

տախուզական աշխատանքներ ենք կատարում Հոկտեմբերյան շրջանի հողերում։ Մենք կազմել ենք այդ շրջանի և յուրաքանչյուր կուտնտեսության հողերի հողա-ագրոբիոմիական քարտեղները, վորոնք ցույց են տալիս, թե ինչպիսի՝ հողեր ինչպիս են պարարտացված յեղել անցյալ տարի, ի՞նչ պետք է ցանվի այդ հողամասում այս տարի և ինչո՞վ պետք է պարարտացվի։

Այդ քարտեղները կազմվել են վերջերս, բայց վորոշ տեղերում տրամադրություններ կան խախտելու դրանք։ Մենք ուզում ենք այդ պլանները պահպանել մինչև 1942 թվականը, բայց վորովհետեւ հնարավոր ե, վոր հողամասերի սահմանները փոփոխվեն, ուստի պետք ե, վոր մենք անհրաժեշտ փոփոխություններ կատարենք պլանների մեջ և հանձնենք դրանք կոլտնտեսություններին։

ԽԱՆՉՅԱՆ — Ի՞նչ ե հարկավոր անել հողերի ուսումնասիրման գծով։

ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ — Միութենական Հողժողկոմատը մեզ համար առանձնացրել ե մեկ շրջան (մենք ինդրում ենք յերկու շրջան) և միջոցներ առանձնացված են միայն մեկ շրջանում կատարվելիք աշխատանքների համար։ Հավանորեն դա կը իմանի Համարույցի շրջանը։

ԶԱՅՆ ՏԵՂԻՑ — Մի՛ մոռանաք Վաղարշապատը։

ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ — Ձենք մոռանա այնքան, վորքան այնտեղ մենք ունենք փորձնական կայան, վորն այդ ուղղությամբ մեծ ոգնություն ե ցույց տալիս Վաղարշապատի շրջանին։

Կոլտնտեսությունների համար կազմված հողային քարտեղներում մատնանշված ե, վոր այն դաշտերը, վորոնք անցյալ տարի պարարտացված են յեղել հանքային պարարտանյութերով, այս տարի չպետք է պարարտացվեն, քանի վոր պարարտանյութերի ներգործությունը հաջորդ տարում դեռ մեծ ե լինում։

ԿՈՒՐԴԻՆՅԱՆ — Դա կապված ե դոգմաների հետ։

ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ — Իհարկե, այնտեղ, վորտեղ հարկավոր ե, կարելի յե տալ լրացուցիչ դոզաներ։ Բայց մեր դիտողությունները ցույց են տալիս, վոր մեզ մոտ պարարտացման Հետեւանքները փոքր չեն լինում, մասնավորապես կալցիում-ցիանամիզով պարարտացնելու դեպքում։

Յերկու դեպքումն ել պարարտանյութերը հաջորդ տարում իրենց ներգործությունն ունենում են վոչ պահաս, քան 60 տո-

կոսով : Այս բանն ապացուցված է և այս տարի գարնանը մենք պետք ե այնպես անենք, վոր այն հողերը, վորոնք անցյալ տարի պարարտացված են յեղել հանքային պարարտանյութերով, այս տարի պարարտացվեն միայն տեղական պարարտանյութերով, իսկ այն հողամասերը, վորոնք անցյալ տարի պարարտացված են յեղել տեղական պարարտանյութերով, այս տարի պետք ե պարարտացնել հանքային պարարտանյութերով : Պետք ե աշխատել, վոր այս հաջորդականությունը պահպանվի, այն ժամանակ մենք կկարողանանք բարելավել հողերի բերրիությունը :

Այս տարի մենք ուսումնասիրեցինք արհեստական պարարտանյութերի վիճակը Վաղարշապատի և Հոկտեմբերյանի ըջաններում : Պարզվեց, վոր պարարտանյութերն այնտեղ լավ չեն պահպառմ :

Մի քանի խոսք տեղական պարարտանյութերի մասին : Մեր տեղական պարարտանյութերը, վորոնք գոմաղբ են կոչվում, գիտական տեսակետից իսկակես գոմաղբ չեն, քանի վոր իսկական գոմաղբը հավաքվում է անտառների տակը փուլած հարդի հետ միասին : Այդպիսով, նրա հատկությունն ել ավելի յել լավանում :

Մեզ մոտ կունտեսություններում բազմաթիվ մեծ գոմեր ու ախոռներ են կառուցվում, բայց նրանցից և վո'չ մեկին կից չեն պատրաստվում գոմաղբը պահելու համար փոսեր, վորպեսզի չկորցվի գոմաղբի լավագույն հատկությունը : Այստեղ ասացին, թե 400 սայլ գոմաղբ են փոխադրում դաշտ : Դա սխալ ե : Մեզ մոտ, չայսաստանում, պայմաններն այնպիսին են, վոր որդանական նյութերն արագ են քայլքայվում, ուստի և շատ ավելի ձեռնտու յել յուրաքանչյուր հեկտար հողամասի համար փոխադրել 20—30 տոնն գոմաղբ, այսինքն՝ մոտավորապես 40—60 սայլ : Մեզ մոտ ավելի լավ ե քիչ-քիչ, բայց ավելի համախ պարարտացնել, ըստ վորում գոմաղբը պետք ե փուլի ամբողջ դաշտում հավասար կերպով :

Մի քանի խոսք այն մասին, թե քանի անդամ պետք ե ջրել բամբակենին մինչև ծաղկելը : Յես միանդամայն ճիշտ եմ գլունում պրոֆեսոր Շարովի առաջարկած վոռոզման մեթոդը : Բամբակենին մինչև ծաղկելը ջրելը վատ չե նաև այն տեսակետից, վոր այդ ճանապարհով մենք նույնպես կկարողանանք բարձրացնել բերքատվությունը : Յես չգիտեմ, թե ինչու մեզ մոտ կոլ-

տնտեսություններում գտնում են, վոր բամբակենին պետք ե յերկար ժամանակ առանց ջրելու թողնել, վորպեսզի բույսը խորն արմատներ գցի : Ինչո՞ւ յե անհրաժեշտ ունենալ 15—20 սանտիմետրից խորն արմատներ, յերբ բամբակենին այդ խորության վրա ևս հողից վերցնում ե այն ամենը, ինչ անհրաժեշտ ե : Բայց դրա հետ միասին չպետք ե տարվել, և ջրել՝ ինչքան պատահի : Մինչեւ ծաղկելը կարելի յե ջրել յերկու ամողամ և վոչ թե 3—4, ինչպես այստեղ ասացին, վորովհետեւ մեծ խոնավությունը կարող ե բացասարար անդրադառնալ բերքի վրա :

Յես կարծում եմ, վոր յեթե մենք պարարտացման գծով կտարենք այս բոլոր ձեռնարկումները, ապա կկարողանանք բարձրացնել բերքատվությունը և կատարել ընկեր Ստալինին տված մեր այն խոսքը, թե մենք հետ չենք մնա Ուզբեկստանից և կկարողանանք առաջ անցնել նրանից (ծափեր) :

ԸՆԿ. ՆՇԱՆ ԲԱՐՍԵՂՅԱՆԻ ՃԱՌԸ

Հոկտեմբերյանի մեքենատրակտարային կայանի
տրակտորային բրիգադիր

Նկերնե՛ր, թույլ տվեք նախ մեր շրջանի կողմից վողջունել Հայաստանի բամբակացան շրջանների ստախանովականների այս առաջին հավաքը (ծափեր):

Այժմ յես կպատմեմ, թե ինչպես աշխատեցի անցյալ տարի և ինչպես եմ աշխատելու այս տարի:

Անցյալ տարի յես ունեյի 3 «ՍՏԶ» տրակտոր, վորոնց միջոցով կատարել եմ 1565 հեկտար փափուկ վար, ապա զիգզագով փոցիւել եմ: Վորպես փորձ, անցյալ տարի 91 հեկտար կուտիվացիա կատարեցի տրակտորով, բայց վորովհետև միջարքային տարածությունը 80 սանտիմետրի վրա յեր, և աճաղին աղաս հող եր մնում, դրա համար ել քիչ բերք ստացվեց, իսկ յեթե միջարքային տարածությունը 60 սանտիմետրի վրա լիներ, հեկտարից 20—25 ցենտներ բերք կստանայի:

Այս տարի ինձ պլան և տրված 400 հեկտար տրակտորով կուլտիվացիա կատարել՝ 60 սանտիմետր միջարքային տարածությամբ: Յես խոսք եմ տալիս յերեք անդամ կուլտիվացիա

կատարել և հնարավորության սահմաններում խոր, վորպեսզի բարձր բերք ստանամ:

Ինձ այս տարի պլան և տրված նույնպես 600 հեկտար բամբակացանի ցրտահերկ կատարել, յես պարտավորվում եմ այդպլանը լիովին կատարել և ազատել մեր լծկաններն այդ աշխատանքից:

Անցյալ տարի մենք 6 շանդանոց 2 տուրման-վակուումներով 22,3 տոնն բամբակ տվինք: Կան մարդիկ, վորոնք թերագնահատում են տուրման-վակուումը, բայց մենք կարողացանք առանց պարապուրդի աշխատեցնել այդ մեքենաները և դրական արդյունքի հասանք: Այս տարի մենք պետք ե ամբողջովին տիրապետենք նրա տեխնիկային: Յես խոսք եմ տալիս նույն տուրման-ներով այս տարի հավաքել 45 տոնն բամբակ:

ԶԱՅՆ.—ինչպիսի՞ բամբակ ստացաք:

ԲԱՐՄԵՂՅԱՆ.—Լավ վորակի բամբակ. յեթե դուք ել սովորեցնեք ձեր շանդիստներին, նրանք կարող են տալ առաջին տեսակի բամբակ:

Հնկերնե՛ր, յես խոսք եմ տալիս նույնպես յուրաքանչյուր «ՍՏԶ» սիստեմի տրակտորի բեռնվածությունը հասցնել 1000 հեկտարի և մեր ունեցած յերեք տրակտորով վարել 3000 հեկտար հող:

Մեր կալսիչն այս տարի անխափան աշխատելով կալսել ե 600 տոնն ցորեն: Մենք հունձը կատարեցինք լենինականի կոմբայններով, իսկ այս տարի ունենք արդեն մեր սեփական կոմբայնները:

Անցյալ տարի մենք 800 հեկտարի վրա վերացրինք բոլոր միջնակները. այս տարի նույն աշխատանքը կշարունակենք և հույս ունեմ, վոր մեր բոլոր հողամասերի միջնակները կվերացնենք:

Մեր բոլոր տրակտորները վերանորոգված, պատրաստ են: Վարն արդեն ակտել ենք, և միայն անձրեների պատճառով ընդհատվեց:

Հնկերնե՛ր, յես 1924 թվից սկսած վար եմ մնում և իմ վորձերից յենելով, գտնում եմ, վոր պետք ե Հողը 2—3 անգամ վարել: Առաջին վարը պետք ե կատարել 25 սանտիմետր խորու-

Թյամբ: Յերկրորդ վարի խորությունն ել դրանից պակաս չպետք ե լինի, վորպեսզի բամբակենու արմատները հետությամբ խորը գնան :

Կեցցե՛ բոլորին սիրելի առաջնորդ ընկ. ՍՏԱԼԻՆԸ, վորը մեղ տանում ե հաղթանակից հաղթանակ (ծափեր) :

Կեցցե՛ Անդրյանկոմի քարտուղար ընկ. ԲԵՐԻԱՆ (ծափեր) :

Կեցցե՛ Հայկոմկուսի Կենտկոմի քարտուղար ընկ. ԽԱՆՁՅԱՆ (ծափեր) :

ԸՆԿ. ԳՐԻՇԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՃԱՌԸ

Արարատի Մեթենատրակտորային կայանի դիրեկտոր

Լիկերնե՛ր, թույլ տվեք նախ մի քանի խոսքով կանգ առնել
1935 թվի պլանների կատարողականի վրա:

ԽԱՆՁՅԱՆ.—կարիք չկա, առանց այն ել ճեր պլանները քերակատրվել են:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ.—ձիւտ ռեզլիկա տվեց ընկ. Խանջյանը.
Երոք այս տարի մենք չկարողացանք կատարել այն խոստումը,
վոր անցյալ տարի տվել եյինք Կենտրոնական Կոմիտեյին: Նախ՝
2210 հեկտար ցանքի պլանի դիմաց մենք կատարել ենք 2164 հեկ-
տար: Պլանի թերակատարման հիմնական պատճառն այն եր,
վոր շրջանի բամբակի ցանքի 50 տոկոսը մենատեսները պետք
ե կատարելին, վորոնք վոչ միայն թերակատարեցին քանակական
ցուցանիշները, այլև չկարողացան բամբակը լավ մշակել և
բարձր բերք ստանալ: Ահա ինչու 1834 տոննի վոլխարեն 1606
տոնն բամբակ հանձնեցինք, վորը կազմում ե պլանի 88 տոկոսը,
թեև մենք կոնտրակտացման պլանը կատարեցինք 102 տոկոսով:
Սակայն բամբակի տեսակի խնդրում մենք կատարել ենք

կենտրոմի վորոշումը՝ տալով 80 տոկոս առաջին տեսակի բարձրակ:

Վեղու շրջանի առանձին կոլտնտեսություններ, ինչպես ընկ. գուլոյանն իր զեկուցման մեջ ասաց, տվել են ավելի բարձր բերք, քան շրջանի միջինը: Ինչպես որինակ՝ Ավշարը տվել ե Հեկտարից 16,6 հեկտոներ, Շիդլուն՝ 14,4 ցենտոներ, Արարատը՝ 11 ցենտոներ և այլն:

Յեղել են առանձին բրիգադներ, վորոնք տվել են ավելի բարձր բերք, որինակ՝ Ավշարի կոլտնտեսության բրիգադավար ընկ. Յեփրեմ Արրահամյանը տվել է 20 ցենտոներ, իսկ Արարատի կոլտնտեսության բրիգադիր ընկ. Մամիկոն Հովսեփյանը՝ 14,4 ցենտոներ:

ԽԱՆՉՅԱՆ. — Իսկ նրանց կոլտնտեսությունն ինչքա՞ն ե տվել:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅՅԱՆ. — 11 ցենտոներ:

ԽԱՆՉՅԱՆ. — Ինչո՞ւ տարբերությունն այդքան մեծ է:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅՅԱՆ. — Վորոնչեաւ այդ կոլտնտեսությունների հողերի մի մասն ընկել եր Արագայանի ջրանցքի տակ, բայց ջրանցքը ժամանակին բավարար ջուր չստացավ, դրա համար ել քիչ բերք ստացվեց:

ԶԱՅՆ ՏԵՂԻՅ. — Ընկ. Դանիելյանն ասում ե՝ նիշտ չե:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅՅԱՆ. — Յեթե ասում ե ճիշտ չե, ապա իր յելութում թող խոսի այդ մասին:

ԽԱՆՉՅԱՆ. — Նշանակում ե ջրանցքն ե մեղավոր:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅՅԱՆ. — Մենք ել ենք մեղավոր, ջրանցքն ել: Մեղավոր են այն մարդիկ, վորոնք զեկավարում են այդ ջրանցքը: Ղամարլույի ընկերները յերեկ այստեղ ասում եյին, վոր իրենք 9—10 անգամ բամբակը ջրել են. ինչո՞ւ նրանք պետք ե այդքան ջրելին, իսկ մենք քիչ: Ղամարլուն մեր հաշվին 600 լիտր ջուր ավելի յե ոդտագործել:

Ընկեր Խանջյան, դուք գիտեք, վոր անցյալ տարի մեր շրջանից կոլտնտեսականների համամիութենական համագումարին մասնակցող ընկ. Ալիյելը տվել եր յուրաքանչյուր հեկտարից 12 ու կես ցենտոներ, իսկ այս տարի նույն ընկերը տվեց 8 ցենտոներ: Շիրազլուն անցյալ տարի տվեց 10 ցենտոներ, իսկ այս տարի՝ 5 ցենտոներ: Ինչո՞ւ. մի՞թե մենք չենք պայքարում բարձր բերքի համար:

Պայքարը, իհարկե, յեղել ե, բայց վորոշ կոլտնտեսություններում, բայց ջրի պակասությունից, նաև քաղհանի աշխատանքը լավ կազմակերպված չի յեղել:

Անցյալ տարի բոլորին տրված եր միատեսակ քեթմեն. յերբ կանանց տալիս եյինք այդ քեթմենները, նրանք հրաժարվում են յին: Պետք ե անպայման ունենալ յերկու տեսակի քեթմեն, ինչ պես կա Նախիջևանում:

Անցյալ տարի լավ չկազմակերպվեց նույնակես պարարտացման գործը. մենք ընդամենը պարարտացրել ենք 300 հեկտար քիմիական պարարտանյութով, իսկ 200 հեկտար տեղական պարարտանյութով: Այս տարի մենք ձեռնարկել ենք, յեթե վոչ հարյուր տոկոսով, գոնե 90 տոկոսով պարարտացնել Հողերը: Ի՞նչ ենք արել մենք այդ ուղղությամբ: Մենք տեղական պարարտանյութերից 8000 սայլ արդեն փոխադրել ենք դաշտ: Մենք նախատեսել ենք պարարտացնել առնվազն 500 հեկտար, այնինչ Հողժողկոմատը մեզ 200 հեկտարի պլան ե տվել:

ԽԱՆՉՅԱՆ (Մամիկոնյանին). — Ինչո՞ւ յե 200 հեկտար տվել:

ՄԱՄԻԿՈՆՅԱՆ. — Այդ նորման մենք չենք տվել, Բամբակվարչությունն ե տվել:

ԽԱՆՉՅԱՆ (Մամիկոնյանին). — Այսալ եք կատարել:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅՅԱՆ. — Մեքենայացման գործը մենք անցյալ տարի նույնակես չկարողացանք կազմակերպել, լավագույն տրակտորիստներով չափահանվեցինք, նախապես չեյինք ուսումնասիրել հողերը, թե վորտեղ կարելի յե մեքենայացում անցկացնել: Այդ պատճառով մեզ մոտ մեքենայացման գործը կաղաց: Դժվարությունները կանխելու համար պետք ե նախորդություննասիրել այդ հողերը: Սակայն այս տարի մենք հնարավորություն ունենք կենտրոնական կոմիտեյի սահմանած պլանի համաձայն մեքենայացում անցկացնել:

Անցյալ տարվա թերությունները չկրկնելու համար մենք նախաձեռնել ենք առուները մաքրելու գործը, վորպեսզի և վո՞չ մի կաթիլ ջուր չփչանա: Զրային վարչությունը հենց այսորվանից պետք ե մտածի ջրի պաշար տնտեսելու մասին: Այս տարի մեր սարերում ձյուն չկա, անհրաժեշտ ե կառուցել փոքր լճեր՝ յեղած ջրերը տնտեսելու համար: Բացի զրանից, պետք ե կանոնա-

վորել ջրամատակարարման գործը, վորպեսզի անցյալ տարվա նման մեր և զամարլույի միջև վեճեր չառաջանան ջրի շուրջը, և մեր շրջանն ել հավասար չափով ջուր ստանա:

Վերջացնելով խոսքս, յես այստեղ համարձակ կարող եմ հայտարարել, վոր մենք կկատարենք հեկտարից 15 ցենտներ բամբակի այն խոստումը, վոր լրնկ. Խանջյանը տվել է ընկեր Ստալինին:

ԽԱՆՉՅԱՆ.—Ամեն տարի խոստանում եմ, բայց չեմ կատարում. այս տարի տեսնենք:



ԸՆԿ. ԶԱԲԵԼ ԲՈՒԴԱՇՎԱՆԻ ՃԱՌԸ

Վաղարշապատի շրջանի Արշալույս գյուղի «Արշալույս» կոլտնտեսության շքանշանակիր բրիգադիր

Ընկերներ, յես ուզում եմ մի փոքր ծանոթացնել ձեզ, թե ինչպես 1935 թվին մենք բարձր բերք ստացանք: Մենք ունեյինք 140 հեկտար բամբակի ցանք, վորի ամեն մի հեկտարը տվեց 20 ցենտներ բամբակ: Իմ բրիգադը մշակել է 22 հեկտար, և յուրաքանչյուր հեկտարից ստացել է 27 ցենտներ բամբակ (ծափեր):

Յերբ յես Մոսկվայում եյի, աշխարհի ամենամեծ մարդուն խոսք տվի, վոր 1936 թվին հեկտարից կտանանք 30 ցենտներ բամբակ (ծափեր), 40 ցենտներ ցորեն, 140 ցենտներ խաղող (ծափեր):

Այդ խոստումը գործ դարձնելու համար, մեր կոլտնտեսությունն իմ վերադառնալուց առաջ ժողով եր ունեցել, և բոլորը ցանկություն եյին հայտնել հնուց գյուղում կուտակված աղբը սայլերով, Փուրդոններով, պարկերով և զամբյուղներով դաշտ փոխադրել: Թե՛ տղամարդիկ, թե՛ կանայք և թե՛ դպրոցի յերեխաները հանգստյան որերին աղբը տեղափոխում եյին դաշտ:

Մենք ունենք հողեր, վորոնք գյուղից 2—3 կիլոմետր հեռաւ վրության վրա յեն դժուռում: Իմ բրիգադն իմ վերադարձից առաջ փոխադրել եր 258 Փուրգոն աղք: Իմ վերադառնալուց հետո փոխադրված ե 480 սայլ: Ուրեմն, ընդամենը 738 Փուրգոն և սայլ աղք ե փոխադրված դաշտերը:

Իմ բամբակի հողամասը հերկել ենք յերկու անգամ: Ամսի 3-ից հողամասը բաժանել եմ առանձին ողակների:

Իմ բրիգադում կա 40 աշխատող ձեռք: Մշակում ենք, բացի բամբակից, 23 հեկտար ցորեն, 8 հեկտար այգի, 6 հեկտար լորի: Ինձ մոտ աշխատում են 25 կին և 15 տղամարդ: Մեր խոստումը գործի վերածելու համար մենք հայտարարեցինք ստախանովյան հնդորյակ, վորը հետո դարձրինք տասնորյակ: Յերբ մեր նախադահը գնացել եր Սնդրկենտգործկոմ զեկուցման, մենք պարտավորություն վերցրինք ամբողջ գոմաղբը դաշտերը փոխադրել: Յեկ այդ վորոշումը մենք կատարել ենք: Պետք ե ասել, վոր իմ հողամասը յես մի յերես պարարտացրել եմ հանքային պարարտանյութով:

Կոլտնտեսությունը փոխադրել ե 6518 սայլ տեղական աղք: Բացի այդ, փոխադրված ե 11·498 տոպրակ աղք: Վարված ե 148 հեկտար հող, վորից 20 հեկտարը 2 անգամ:

Մոսկվայից իմ վերադառնալուց հետո մեր բոլոր բրիգադները պարտավորվեցին միջին բերքատվությունն ամեն մի հեկտարից հասցնել վոչ պակաս 30 ցենտների: Մենք մրցման մեջ ենք իրար հետ և նպատակ ենք դրել կատարել մեր մեծ առաջնորդին իմ տված խոստումը: Յեկ մենք հույս ունենք, վոր այդ անպայման կկատարենք, քանի վոր վոչ մի տարի աշխատանքն այնպես չեյինք կազմակերպել, ինչպես այս տարի: Մենք անցյալ տարի կրկնավար չենք կատարել, անցյալ տարի աղքը դաշտերը չենք տեղափոխել: Այս տարի մենք տեղափոխում ենք: Մենք անցյալ տարի առուները չեյինք մաքրել, այս տարի կազմակերպել ենք առուների մաքրման գործը: Յեկ այն առուները, վորոնք 10—20 տարի չեյինք մաքրվել, այժմ մենք կարողացել ենք մաքրել և մեր դաշտերը ջրով ապահովել:

Անցյալ տարի մենք ունեցել ենք յերկու բրիգադի համար մի առու, դրա պատճառով հաճախ մի բրիգադն իր դաշտերը ջրում եր, իսկ մյուսը հնարավորություն չեր ունենում ջրելու, և այդ աղղում եր բերքատվության բարձրացման վրա: Այժմ

մենք հնարավորություն ենք ստեղծել, վոր յուրաքանչյուր բրիգադը ունենա իր առուն և ջրով ապահովի իր դաշտերը: Այս բոլորը մեզ թույլ են տալիս ասելու, վոր մենք կկատարենք մեր սիրելի և մեծ առաջնորդ ընկ: Ստալինին տված խոստումը: Յեմ մրցման մեջ եմ մտել Վերին Խաթունարիս գյուղի կողմնտեսության բրիգադի ընկ: Յերկանդ Ղարիբյանի հետ և այժմվանից պայքարում եմ այդ մրցությունից հաղթանակով դուրս դալու համար (ծավիք):



ԸՆԿ. ԱՐՇԱԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՃԱՌՈ Բամբակտրեստի դիրքեկտոր

Ընկերներ, թույլ տվեք բամբակի գործարանների և գնման կայանների ստախանովականների կողմից վողջունել մեր սոցիալիզմական դաշտերի առաջավոր կոլտնտեսականներին (ծափեր):

Ընկերներ, յես ուզում եմ նախ 1935 թվի աշխատանքների մասին մի փոքր ինֆորմացիա տալ: Ինչպես գիտեք, մենք Հայաստանում բամբակի հանձնման պլանը կատարել ենք 114,2 տոկոսով, իսկ առանձին շրջաններն իրենց պլանները կատարել են այսպես. Ղամարլում՝ 121,5 տոկոսով, Հոկտեմբերյանը՝ 116,9 տոկոսով, Վաղարշապատը՝ 115 տոկոսով, Վեդին՝ 87,2 տոկոսով:

Հստ շրջանների կոլտնտեսային սեկտորները պլանները կատարել են այսպես. Ղամարլում՝ 123,9 տոկոսով, Հոկտեմբերյանը՝ 118,3 տոկոսով, Վաղարշապատը՝ 122,6 տոկոսով, Վեդին՝ 97,8 տոկոսով:

Անհատական տնտեսությունները, բացի միայն Ղամարլույի շրջանից, իրենց պլանները թերակատարել են: Հոկտեմբերյա-

նում անհատական սեկտորը պլանը կատարել է 91 տոկոսով, Վաղարշապատում՝ 83,8 տոկոսով, Վեդիում՝ 74,9 տոկոսով:

Թերքատվությունն ըստ հեկտարների. — Հոկտեմբերյանը տվել է միջինը 10,29 ցենտներ, Ղամարլուն՝ 10,73, Վաղարշապատը՝ 10,52, Վեդին՝ 7,24: Միջինը՝ Հայաստանը տվել է 10,1 ցենտներ:

Թերքատվությունն ըստ սեկտորների. — Կոլտնտեսությունները Հոկտեմբերյանում տվել են հեկտարից 10,43 ցենտներ, Ղամարլուում՝ 11,13, Վաղարշապատում՝ 11,51, Վեդիում՝ 8,59: Միջինը՝ 10,75 ցենտներ:

Անհատական սեկտորը Հոկտեմբերյանում տվել է 7,65 ցենտներ, Ղամարլուում՝ 8,59, Վաղարշապատում՝ 6,92, Վեդիում՝ 5,83, միջինը՝ 7,04 ցենտներ:

Յերբ բերքատվությունը համեմատում ենք 1934 թվի հետ, Հոկտեմբերյանը և Ղամարլուն ամի տեսակետից առաջին տեղն են բռնում, իսկ Վաղարշապատը և Վեդին՝ հետ են մնում:

Սակայն տեսակների կողմից Ղամարլուն արդեն հետին տեղն ե բռնում, մինչդեռ մեր արդյունաբերությունը մեղանից պահանջում ե բարձրորակ բամբակ:

Առաջին տեսակի բամբակ Ղամարլուն տվել է 72,8 տոկոս՝ 1934 թվի 75,2 տոկոսի փոխարեն, Հոկտեմբերյանը՝ 80,3 տոկոս՝ 1934 թվի 81,4 տոկոսի դիմաց, Վաղարշապատը՝ 85,7 տոկոս՝ 1934 թվի 76,2 տոկոսի դիմաց, Վեդին՝ 78,9 տոկոս՝ 1934 թվի 56,3 տոկոսի դիմաց: Մի խոսքով, 1935 թվին տրված ե ընդամենը 79,4 տոկոս առաջին տեսակի բամբակ՝ 1934 թվի 86 տոկոսի դիմաց: Պետք ե նշել, վոր Ղամարլուն 5-րդ տեսակից տվել է 10 տոկոս:

Ղամարլույի Մեքենատրակտորային կայանի ավագ գյուղատնտես ընկեր. Սաշայի կարծիքով ցածր տեսակ տալիս են այն հոգածառերը, վորտեղ ջրի պակաս կա. այդպիսի գյուղերն են՝ Արտաշատը, Դվինը և այլն: Յես գտնում եմ, վոր այդ տեսակետը սիսալ է: Հարցը նրանում չե, թե վորքան ջուր ե տրվում, այլ հարցը նրանումն ե, թե ջուրը յերբ ե տրվում, ժամանակի՞ն, թե վոչ: Ղամարլուն չատ ջուր ե վերցրել, և ճիշտ են ասում Վեդիու ընկերները, վոր նրանք խելել են Վեդիու բաժին ջուրը, սակայն դարձյալ վատորակ բամբակ են տվել:

Ընկերներ, յես ուզում եմ ձեզ այստեղ ցույց տալ, թե ինչ-

պլսի բամբակ ենք ստացել (նա ցույց է տալիս մի վատորակ բամբակ) : Ընկերներ, առաջին տեսակների բամբակի պարկերի մեջ խառնել են այս վատորակ բամբակը :

Այս բամբակը տվել են Վաղարշապատի շրջանից և Ղամարդույի Նարիմանովի գյուղակամբից : Սա այնպիսի բամբակ է, զոր վոչ մի զտող մեքենա չի կարող զտել. սա ուղղակի խոտան է :

Ընկերներ, բավական չե, զոր քանակը շատ լինի, հարկավոր և տեսնել, թե ինչ եք տալիս, հարկավոր և խմանալ, թե այդ բամբակն ո՞ւր և գնում : Տեքստիլ արդյունաբերությանն անհրաժեշտ է լավ բամբակ, այս բամբակից (ցույց և տալիս) թել հանել չի կարելի :

Այժմ թույլ տվեք մի քանի թվեր բերել բամբակի դիմաց մեր շրջաններին արված գումարի մասին : 1934 թվին մենք յուրաքանչյուր տոնն բամբակի դիմաց միջին հաշվով տալիս եյինք 309 ռուբլի, իսկ 1935 թվին՝ 1930 ռուբլի : Հստ շրջանների հանձնված բամբակի ընդհանուր արժեքի դիմաց՝ Ղամարլուն ստացել և հիմնական գումար՝ 8.564000 ռուբլի և 1.999.000 ռ. ել վորպես պարզե-հավելում :

Այդպիսով, Ղամարլույի շրջանն ստացել և ընդամենը 10.559 հազար ռուբլի փող : Հոկտեմբերյան շրջանն ստացել և ընդամենը 12.128.000 ռուբլի, զորից բամբակի հիմնական արժեքի դիմաց 10.310.000 ռուբլի, իսկ պարզե-հավելում՝ 1.885.000 ռուբլի : Վաղարշապատի շրջանն ստացել և ընդամենը 9.583.000 ռ., զորից պարզե-հավելում՝ 1.755.000 ռուբլի : Վեգու շրջանն ստացել և ընդամենը 2.821.000 ռուբլի, զորից պարզե-հավելում՝ 275.000 ռուբլի : Բոլոր շրջանները միասին ստացել են 35.111.000 ռուբլի, զորից պարզե-հավելում՝ 5.844.000 ռուբլի : Պարզե-հավելումից անհատներն ստացել են չնչին գումար, ընդամենը՝ 268.000 ռուբլի :

Կան այնպիսի կոլտնտեսություններ, վորոնք 250.000 ռուբլուց ավելի պարզե-հավելում են ստացել, ինչպիսիք են՝ Գեշըրումնի, Զանֆիդան և Բամբակաշատը : Գյոյշութեթին ստացել են 200.000 ռուբլի, Արշալույսը՝ 150.000 ռուբլի և այլն :

Այն կոլտնտեսություններում, վորոնք տվել են բարձր բերք և ստացել են պարզե-հավելում, բամբակի միջին գինն անհամեմատ ավելի բարձր և յեղել սահմանված միջին գնից : Դուք գիտեք, վոր բամբակի միջին արժեքը յուրաքանչյուր տոննի հա-

մար 1610 ռուբլի յե : Սակայն ահա առաջավոր Գյոյշությունը թուամ միջինը բարձրացել է 2552 ռուբլու, վորովհետեւ նա հեկտարից տվել է 18,2 ցենտներ բերք և ստացել է 200.000 ռուբլի պարզե-հավելում :

Այսպես, պլանների կատարումից հետո Զաֆարաբադում բամբակի ամեն մի տոննի արժեքը բարձրացել է 4181 ռուբլու, Արտաշատում՝ 2130 ռուբլու, Զահմեթում՝ 2381 ռուբլու, Արբաթում՝ 2000 ռուբլու և այլն, իսկ սրանց կողքին ունենք այնպիսի կոլտնտեսություններ, վորոնց բամբակի մի տոննի միջին արժեքը յեղել է 1610 ռուբլուց ել ցածր, որինակ՝ Հաջի-Ելլասում միջինը յեղել է 1060 ռուբլի, վորովհետեւ այդ կոլտնտեսությունները չեն պայքարել բարձր բերքատվության հասնելու համար :

Ինչպես ասացի, 1935 թվին բամբակի բերքը բարձր և յեղել մեր առանձին կոլտնտեսություններում, առանձին ողակներում՝ հասնելով ամեն մի հեկտարից մինչև 27 ցենտների : Առաջավորների այդ փորձն, ընկերներ, ասում ե այն մասին, վոր մեր բոլոր կոլտնտեսությունները հողից դեռևս չեն վերցնում այն, ինչ նա կարող է տալ, վոր մենք հողի վրա չենք կատարում այն աշխատանքը, ինչ անհրաժեշտ է կատարել : Յեթե Զաֆարաբադը տվել և 18 ցենտներ, ինչո՞ւ նրա կողքին գտնվող Արբաթը, Փարաքարը և մնացած գյուղերը չպետք է այդքան տան : Այստեղ պատճառը չպետք է վերադրել ջրին, այլ պետք է վերադրել այն բանին, թե ինչպես են աշխատանքը տանում : Ճիշտ ե, ջուրը վորոշ գեր կատարել ե, բայց դա գլխավոր պատճառ լինել չի կարող : Յերբ ժողկոմիորհուած խորհրդակցություն կար, և այնտեղ ջրի պակասության մասին խոսք յեղավ, ընկ . Դանիելյանն ասաց, վոր մենք չըով ապահոված ենք, բայց Վեգու ընկերները չբողոքեցին, իսկ հիմա նրանք ջուրն են պատճառ բռնում, մինչդեռ գլխավոր պատճառն այն ե, վոր Վեգու ընկերները վատ են աշխատել, շատ վատ, կրկնավարի վրա ուշադրություն չեն դարձել, քաղհանը լավ չեն կատարել :

Ճիշտ ե, վոր բամբակի ցանքի ներկա տարածությունից մենք վոչ մի տարի 18.200 տոնն բամբակ չենք ստացել, սակայն հաշվի առնելով մեր այսորվագուանինը, և մեր ունեցած հնարավորությունները, դա քիչ ե մեզ համար : Ուղբեկստանը, Թուրքմենստանը տալիս են ավելի բարձր բերք : Աղրբեջանի

Զանդիւանի շրջանը տվել է միջինը 17 տեսներից ավելի բերք, Կիրովաբարի շրջանը՝ 15 տեսներից ավելի, մինչեռ մեղ մոտ առանձին կոլտնտեսություններն են միայն տվել միջինը 15 տեսներից բարձր։ Յեթե համեմատում ենք Միջին Ասիայի և Ադրբեյջանի մի բամբակագործ աշխատավորի ծանրաբեռնումը մեր մի բամբակագործի ծանրաբեռնման հետ, տեսնում ենք, վոր մեղ մոտ դրությունն ավելի բարենպաստ է։ Այն ժամանակ, յերբ մեղ մոտ մի աշխատավորի ընկնում է 0,9 հեկտար, Մուղանում և Շիրվանում (Ադրբեյջան) մի աշխատավորին ընկնում է 2 և կես հեկտար տարածություն։ Մեզ մոտ՝ Հոկտեմբերյան շրջանի Մեծ Շահրիար, Զափարաբաղ, Գիշըլու գյուղերում, վորոնք համարվում են բամբակացան առաջավոր գյուղեր, ամեն մի բամբակացանին քառորդ հեկտարից ավելի չեղ ընկնում։

Դեռ մի հանգամանք ել չպետք է մոռանանք, վոր մեր մեքենատրակտորային կայաններն ավելի լավ են կահավորված։ Հենց թեկուզ վերցնենք Հոկտեմբերյանի մեքենատրակտորային կայանը։ նման կահավորություն չունի Անդրկովկասի և վոչ մի մեքենատրակտորային կայան։ Յես համարյա ամեն տեղ յեղել եմ։

Այժմ մի քանի խոսք այն մասին, թե ինչպես պետք է կաղմակերպել գործը, վորպեսզի բարձր բերք ստանանք։ Ճիշտ է, տեղական գոմաղբով պարարտացման գործը մեղանում այս տարի բավական հաջող է ընթանում, բայց պետք է ասել, վոր Միջին Ասիայում, դրա հետ միասին դաշտ են տեղափոխում նաև փլածաների հողերը, տիղմը, վորոնք բավականին բարձրացնում են բերքատվությունը։

Կան տեղեր, վորտեղ բամբակենու թուփը չեն հանել, այլ թողել են դաշտում։ Յես այս դաշտում եմ սխալ, վորովհետեւ բամբակենու արմատին կպած են լինում սնկային հիվանդություններ, վորոնք կվարակեն աղաղա բամբակենին։

Մեզ մոտ շոշափելի աշխատանք չի տարվում հողը հարթեցած համար։ Զուրը տեղ-տեղ սերմը տանում է, իսկ տեղ-տեղ ել լճանում։ Այս թերությունը պետք է վերացնել։

Յես, ընկերներ, գյուղատնտես չեմ, բայց կասեմ, վոր յեթե առաջին անգամ ջրելուց հետո բամբակի արմատները լավ են ջուր ծծում, կարիք չկա յերկրորդ անգամ ջրելու, իսկ յեթե 2—3 անգամ ջրում են մինչև ծաղկելը, բամբակի արմատը խս-

րը չի դնում և բարձրանում է գեղի վերև։ Սխալ է այն տեսակետը, թե պետք է բամբակը շատ ջրել, վորովհետեւ շատ ջրելուց, ինչպես ասացի, բամբակենու արմատը խորը չի դնում և բամբակի բերքը քիչ է լինում։

Մի քանի խոսք մեքենայացված վարի, ցանքի, չշակման և միջարքային տարածության մասին։ Յես գտնում եմ, վոր 40—45—50 սանտիմետր միջարքային տարածություն թողնելը սխալ է։

Այն հողի վրա, վորտեղ մենք պետք են մեքենայացված ցանք կատարենք, յես կարծում եմ, վոր հանրավոր է թե՛ № 246 և թե՛ № 916 սերմերը ցանել 70 սանտիմետր միջարքային տարածության վրա։

Մեր բոլոր աշխատանքների հիմքը պետք է լինի մեքենայացումը։ Բամբակի հավաքումը մեքենայացնելու տեսակետից ընկածոյանի փորձը վորջունելի պետք է համարել (ծափեր)։ Մենք պետք է վերջ տանք ձեռքով աշխատանքին։ Ի վերջո, ընկերներ, յես կարծում եմ, մենք այս տարի կարող կիմնենք կատարել այն խոստումը, վոր տվել է մեր ղեկավար ընկածում։ Խանջյանը մեծ Ստալինին, այն է՝ 1936 թվին հեկտարից տալ վոչ պակաս 15 տեսներ բամբակ (ծափեր)։



ԸՆԿ. ԱՎԵՏԻՍ ՍԱՖԱՐՅԱՆԻ ՃԱՌԸ

Ղամարլույի շրջանի Քյալարա գյուղի Ղուկաս Ղուկասյանի
անվան կոլտնտեսության նախագահ

Լնկերնե՞ր, ի՞նչ ենք արել մենք անցյալ տարի, վորպեսզի
մեր շրջանում, մեր գյուղում աշխատանքներն ավելի հաջող
դնան։ Մենք նախ և առաջ կարողացել ենք դարնան սկզբին հո-
ղերը՝ վարել ինչպես պահանջվում է։ Վարը կատարել ենք տրակ-
տորներով։

Քաղհանը մեր գյուղում պետք է հինգ անգամ լիներ։ Մենք
վեց անգամ քաղհանեցինք, իսկ վորոշ հողերում նույնիսկ ուժ
անդամ։ Մեր գյուղում կան մի քանի կտոր հողամասեր, վորոնք
միատեսակ ջուր չեն պահանջում։ մեկն ավելի շատ ե պահան-
ջում, մյուսը՝ քիչ։

Մենք մեր ամբողջ բամբակը հավաքեցինք առանց կորուստի։
Մենք լարեցինք մեր բոլոր ուժերը և վերջին հաշվով այս տա-
րի հեկտարից ստացանք միջինը 17,8 ցենտներ բամբակ։

Հիմա հիմնական այն է, թե մենք ինչպես ենք նախա-
պատրաստվել 1936 թվի գարնանացանին։


Նախ և առաջ մենք պատրաստել ենք մեր բոլոր գյուղա-

միջյան և հանդամիջյան ճանապարհները, ինչպես և բոլոր ա-
ռուները։ Աշնանը չկարողացանք բամբակենու ցողունները հա-
վաքել և այժմ անցել ենք այդ աշխատանքին։ Մինչև այժմ տե-
ղական պարարտանյութերից տեղափոխած ե այնքան, վորքան
պլան ե տրված յեղել մեքենատրակտորային կայանի կողմից։
Առանձնապես գոմաղբ փոխադրել ենք 1200 սայլ։

Մենք այս դարի վորոշել ենք, վորքան կարելի յե շատ գո-
մաղբ տեղափոխել դաշտերը։ Պետք է 170 հեկտար պարարտաց-
նենք հանքային պարարտանյութով, իսկ 40 հեկտար՝ տեղական
աղբով։ Ինչ վերաբերում ե գյուղատնտեսական գործիքներին,
արդեն նորոգումը լրիվ ավարտել ենք։

Ընկերնե՞ր, յեթե շարացանն ուղիղ գծով չլինի, ինչպես և
մարդերն ուղիղ չլինեն, չի ապահովվի բարձր բերքը։ Դրա հա-
մար ել այդ խնդրին այս տարի պիտի լուրջ ուշադրություն
դարձնել։

Յես խոսք եմ տալիս մեր 106 հեկտար բամբակի հողամասի
յուրաքանչյուր հեկտարից ստանալ 25 ցենտներ բամբակ, իսկ տ-
անձին հեկտարներից՝ նույնիսկ 30 ցենտներ (ծափեր)։



ԸՆԿ. Կ. ԴԱՆԻԵԼՅԱՆԻ ՃԱՌԸ

Հողժողկոմատի Զրային վարչության պետ

Ընկերներ, թույլ տավեք Զրային տնտեսության աշխատակիցների կողմից վոռջումնել բամբակի բարձր բերքի համար պայքարող մարտիկների այս խորհրդակցությունը (ծափեր) :

Ընկերներ, այստեղ քիչ խոսեցին բամբակի բերքատվության բարձրացման համար վճռական նշանակություն ունեցող ջրի մասին:

Այստեղ Վեդու ընկերներից խոսեցին բամբակի ջրի սակագության մասին: Խնչակ մենք, նույնպես և Վեդու շրջանային աշխատազները, յեթե ավելի լուրջ աշխատելին, ջուրը ուսցիոնալ ողագործելով, հնարավոր կլիներ ավելի մեղմացնել ջրի պահապ, վորով Վեդին 1935 թվին կկատարեր բամբակի պլանը: Վեդիում ջուրը 24 ժամ անընդհատ չեր ողագործվում: Գիշեր-

ները շատ գյուղերում կոլտնտեսությունները բամբակենին չելին ջրում:

Այս տարի, կլիմայական պայմաններից յելնելով, պետք է ասել, վոր ջուր շատ քիչ ենք ունենալու: Վորպեսզի այդ ճեղքվածքը ծածկենք, Վեդու շրջանում աշխատանք ե կատարվում Արաքս գետից ավելի շատ ջուր ստանալու: Կառուցում ենք նոր ջրհան մեքենաներ: Արագդայանի ջրանցքի մաքրումը կատարվում ե լավագույն մեքենաների միջոցով: Վեդու ջրանցքի համար պատրաստվում են յերկաթյա ջրարգելակներ (շյուղներ), վորպեսզի Վեդուն հասանելիք ջուրը լրիվ տեղ համանի: Ցեթե ջրանցքն անցյալ տարի տալիս եր 300—400 լիտր ջուր, մենք աշխատանք ենք ծավալում, վորպեսզի այս տարի ջրի քանակությունը հասցնենք 700 լիտրի: Միջոցներ ենք ձեռք առել մեծացնելու լեռնային մասում գոյություն ունեցող ջրամբարը՝ Վեդի-չայից ավելի ջուր ստանալու համար:

Ղամարլույի շրջանի Աղբաշ և մի շարք այլ գյուղերի ջուր տալու խնդիրը կազմած ե Ղոերի ջրանցքի հետ: Մենք շուտով կավարտենք յերկու գյուկերի կառուցումը, վորով մենք կկարողանանք 12—15 խորանարդ մետր ջուր ստանալ, իսկ Ղոերի ջրանցքի այն մասերում, վորտեղ ջուրը շատ ե ծծվում ու կորչում, մենք բետոնացում ենք կատարում:

Ամառը ջրի խոշոր պակասություն ե զգացվում նաև Վաղարշապատի շրջանում: Վաղարշապատի ջրանցքի վերանորոգումից հետո այդ ջրանցքի ջուրը կավելանա 200 լիտրով: Մենք մի շարք այլ միջոցներ ենք ձեռք առել, վորպեսզի այս տարի բամբակի ամբողջ ցանքն ապահովինք ջրով:

Պետք ե ասել, վոր առուների մաքրման գործով ներկայումս լավ են աշխատում Վաղարշապատի և Վեդու շրջանները, իսկ Ղամարլույի և Հոկտեմբերյանի շրջաններն այս գործում դեռ հետ են մնում: Մենք պետք ե լողունդ ընդունենք, վոր այս տարի վոչ մի կաթիլ ջուր չկորչի անտեղի: Զրաշնարարության գծով աշխատելու համար մենք բաց ենք արել դասընթացներ: Այդ գաղանթացներում ընդդրկված են 100 տեխնիկներ: Տեխնիկներին պետք ե աշխատեցնել ըստ իրենց մասնագիտության: Զպետք ե թույլ տալ անցյալ տարվա գրությունը, յերբ կոլտնտեսությունները

ջրային տեխնիկներին աշխատեցնում ելին այլ ասպարեզներում:

Նկատի ունենալով այս տարվա ջրասակալությունը, մենք պետք եւ համապատասխան ագրոմիջոցառումների դիմենք՝ դրա հետեանքները մեղմացնելու համար: Յեթե մինչև այսոր բամբակի դաշտերը միխրացնում ելինք 2—3 անգամ, այս տարի պետք եւ փխրացնենք 4—5 անգամ, վորպեսզի հնարավոր լինի 1936 թ. ապահովել բամբակենու բարձր բերքատվությունը (ծափեր):



ԸՆԿ. Ս. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՃԱՌԸ Վաղարշապատի շրջանային քերթի խմբագիր

Նկերներ, կրեմլում Հայաստանի պատվիրակության ընդունելության ժամանակ ընկ. Ստալինը Հայաստանի կոլտնտեսականների առաջ խնդիր դրեց՝ բամբակի բերքատվության բարձրացման բնագավառում հասնել Ուղբեկստանին: Ընկ. Խանջյանը, պատասխանելով առաջնորդին, խոստացավ անպայման հասնել: Մենք մեր աշխատանքը հենց այդտեղից ել սկսեցինք:

Նախ՝ մենք թերթում տպագրեցինք Ուղբեկստանի առաջավոր բամբակացանների ճառերը, վորոնց միջոցով մեր կոլտընտեսականները ծանոթացան ուղբեկների աշխատանքի փորձի հետ:

Ծանոթանալով ուղբեկների փորձին, Զահմեթի կոլտնտեսականները պարտավորություն վերցրին հեկտարից տալ 25 տեսաները բամբակ և կոչ արին չըջանի բոլոր կոլտնտեսականներին՝ պայքարել հենց այս տարի Ուղբեկստանին հասնելու համար:

Զահմեթցիների կոչը մենք տպագրեցինք մեր թերթում, մասսայականացրինք բոլոր կոլտնտեսություններում և կազմակերպեցինք այդ կոչի գործնական արձագանքը: Զահմեթցիների կոչին արդեն արձագանքել են ավելի քան 15 կոլտնտեսականներ,

վորոնք պարտավորություն են վերցրել Հեկտարից ստանալ առանձազն 25 ցենտներ բամբակ, իսկ Արշալույսի ու Վ. Այնալի կոլտնտեսությունները՝ 30 ցենտներ :

Վերջերս խմբագրությունն ստուգեց, թե վո՞ր կոլտնտեսությունն ինչպես է կատարում իր վերցրած պարտավորությունը : Ստուգում ից պարզեց, վոր մրցան մեջ մտած կոլտնտեսություններից շատերն արդեն թերը քշտած՝ աշխատանքի յեն լըծվել :

Մի շարք կոլտնտեսություններ (Զահմեթ, Ղարաղլաղ, Վ. Զերլա), վորոնք անցյալում վոչ մի սայլ աղբ չելին փոխադրում դաշտ, այս տարի արդեն մի քանի հազար սայլ ու ֆուրտոն տեղական պարարտանյութ են փոխադրել : Վ. Այնալի կոլտնտեսությունն արդեն դաշտ է փոխադրել տասը հազար սայլ պարարտանյութ, «Անաստվածը», «Արշալույսը»՝ 6000-ական սայլ, Ն. Խաթունարիսը՝ մոտ 2000 սայլ և 70 հազար զամբյուղ ու քթոց : Շրջանում մինչեւ ամսի 6-ը դաշտ է փոխադրել 30.000 սայլ և 150.000 զամբյուղ ու քթոց գոմալը և փլատակների հող : Այս փաստերը ցույց են տալիս, վոր Վաղարշապատի կոլտնտեսականները վո՞չ թե խոսքով, այլ գործով պայքարում են Ուզբեկստանին հասնելու համար :

Վաղարշապատում արդեն սկսել են գործադրել Ուզբեկստանի առաջավոր բամբակագործների փորձը : Իհարկե, խնդիրը միայն աղբը փոխադրելը չե, այլ, ինչպես մեր շքանշանակիր ընկ . Զաբել Բուղազյանն ել ասաց, հողը կրկին անգամ վարելը : «Անաստվածի» Դեմչենի կոյի անվան բրիգադը ևս յերեք անգամ ե վարել, նույնը մի շարք ուրիշ բրիգադներ, վորոնք իրենց առաջ խնդիր են դրել՝ առնվազն յերեք անգամ վարել բամբակի դաշտերը :

Սա ցույց է տալիս, վոր մեր շրջանն ոգտագործում է Ուզբեկստանի առաջավոր բամբակագործ կոլտնտեսականների փորձը, և մենք կերպարանանք հասնել նրանց :

Յերբ Ուզբեկստանի առաջավոր կոլտնտեսականները խոսում են իրենց աշխատանքի ու բարձր բերքի մասին, առաջին հերթին նրանք կանգ են առնում մեքենայացման վրա : Այս խնդրում ել մենք ուզբեկ ընկերներից պետք է որինակ վերցնենք : Մենք առանց մեքենայացման չենք կարող մեր դաշտերի բերքատվությունն այնպես բարձրացնել, ինչպես այդ անհրաժեշտ :

Յես զարմանում եմ, վոր մեր զյուղատնտեսներն իրենց յելույթներում մեքենայացման մասին և հատկապես մեքենայացման գծով աշխատող կադրերի պատրաստման մասին շատ քիչ բան ասացին : Ինձ թվում ե, վոր Հողժողկոմատը, հողային որդաններն այս գործի մասին պետք է մտածեն և այժմյանից միջոցներ ձեռք առնեն՝ այդ ուղղությամբ կադրեր պատրաստելու համար :

Ուզբեկ բամբակագործ ընկեր Իքրամովն իր ճառում ինդիր եր գնում մեկ հեկտարի վրա ունենալ 100—110 հազար բույս, իսկ մեզ մոտ շատ դեպքերում 60—70 հազար բույս ել լինում . հազվագյուտ դեպքում ե, վոր բույսերի քանակը 80—90 հազարի յե հասնում : Դրանից, ինչ խոսք, վոր տուժում է բամբակի բերքատվությունը :

Ինձ թվում ե, վոր այս խորհրդակցությանը մասնակցող ընկերները, նույնպես և մյուսները պետք է լուրջ ուշադրություն դարձնեն և մտածեն այս ուղղությամբ :

Յես իմ խոսքը վերջացնում եմ մեր կոլտնտեսականների կողմից առաջ քաշված լողունզովլ . ընկեր Խանջյան, հենց այս տարի ձեր խոսքը գործ կդարձնենք և բամբակի բերքատվության բարձրացման գործում Ուզբեկստանին կհասնենք :

Յես այստեղ բերել եմ մի ալբոմ, վորի մեջ կան մեր շրջանի լավագույն բամբակագործների նկարները, վորոնք խոստացել են հեկտարից միջինը 25—30 ցենտներ բամբակ՝ ստանալ :

Այս ալբոմը յես հանձնում եմ կուսակցության կենտրոնական կոմիտեյին և Խորհրդային Հայաստանի կառավարության անդամներին : Հույս ունեմ, վոր յեկող տարի մենք նորից առաջալոր բամբակագործների խորհրդակցություն կունենանք, վորտեղ այս ընկերներից կպահանջմիլ ղեկուցել, թե ո՞վ ինչպես ե կատարել իր խոստումը (ծափեր) :

Ճիշտ ե, ընկերներ, ալբոմն այնքան ել չքեզ չե, բայց միջի ըովանդակությունը լավ ե :

Կեցցե՛ բոլոր ժողովուրդների առաջնորդ ընկեր Ստալինը : Կեցցե՛ Համբկ (թ)կ Անդրկովկասի բուշկեկյան ջոկատի ղեկավար ընկեր Յերիան : Կեցցե՛ ընկեր Խանջյանը (բուռն ծափեր) :



ՀՆԿ. Բ. ՍՈՒԶՅԱՆԻ ՃԱՌԸ

Նորագավթի ազրոխմբի գյուղատնտես

Ընկերներ, յես այսոր ինձ չափաղանց ուրախ ու յերջանիկ եմ դգում, նախ՝ նրա համար, վոր մասնակցում եմ այս խորհրդակցությանը, յերկրորդ, վոր յես գերակատարել եմ պլանը կատարելու իմ խոստումը, վոր տվել եյի ընկ. Խանջյանին, յերբ նա ստուգում եր թաղաղյուղի դաշտերը:

Իմ աղբոյնմբի 1934 թվի միջին բերքատվությունը յեղել է 10 ցենտներ, իսկ 1935 թվին՝ 14 ցենտներ: Իհարկե, մենք դրանով չենք կարող հանգստանալ. անցյալ տարի մենք ունեցել ենք նաև թերություններ, վորոնք ուղղելով՝ մենք այս տարի կարող կլինենք 15 ցենտներից ել բարձր բերք ստանալ:

Յես գեմ եմ այն ընկերներին, վորոնք ասում են, թե յերեք անգամ վարելուց հողերը կարող են փոշիանալ: Յես դեմ եմ նույնպես 50 սանտիմետր լայնության վրա ցանք անելուն, վորը վոչ մի եփեկտ չի կարող տալ:

Շատ աղբոնոմներ ասում եյին, թե 70 սանտիմետր միջարքային տարածությամբ ցանքը լավ արդյունք չի տա: Ճիշտն ասած, յես ել այդ խնդրում թերահավատ եյի: Թաղաղյուղում


մեր ցանած 70 հեկտար բամբակից 20 հեկտարը 70 սանտիմետր միջարքային տարածություն ունենք: Յես այդ ցանքերում կարողացա 4 անգամ տրակտորային կուլտիվացիա կատարել, վորի շնորհիվ այդ ցանքերը տվին հեկտարից 21,5 ցենտներ բամբակ: Նշանակում ե՝ 70 սանտիմետր միջարքային տարածությունը հնարավորություն և ստեղծում չորս անգամ տրակտորային կուլտիվացիա կատարելու և խոչոր չափով նպաստում և բերքատվության բարձրացմանը:

Ընկերներ, այս տարի, ինչպես յերկում ե, մենք ջրասակավություն կունենանք. պետք ե, ուրեմն, միշտ կուլտիվացիա կատարել, վորպեսզի հողը փուխը մնա: Այս պայմաններում արաքն ել խոչոր նշանակություն կունենա:

Քեթմեններն անցյալ տարի լավ արդյունք տվին. մենք պետք ե այս տարի ամենուրեք մասսայականացնենք քեթմենի գործածությունը: Սակայն պետք ե ուսումնասիրել, թե մեր պայմաններում քեթմենների վո՞ր տեսակն ավելի նպատակահարմար և ուղարկործել: Բացի դրանից, կանանց քեթմենները պետք ե տարբերվեն տղամարդկանց քեթմեններից:

Ընկերներ, մեր գիտա-հետազոտական հիմնարկների աշխատանքները հաճախ մեղ, շրջաններում աշխատողներին համար անհայտ են մնում. յեթե նրանք հնարավորություն չունեն իրենց աշխատությունները հրատարակելու կամ կենտրոնական մամուլի միջոցով հրատարակելու, գոնե թող ուղարկեն շրջանային թերթերին, վորպեսզի մենք կարողանանք նրանց փորձերից ողտվել:

Աղբոկանոնների մեջ պետք ե ջրի քանակը փոխել. յեղել են ցանքեր, վորոնք յես ջրել եմ 13 անգամ: Հայտնի յե, վոր № 915 սերմը ջուր շատ և սիրում: Նորագավթի կոլտնտեսությունն այս տարի հեկտարից ստացալ 15 ցենտներ բամբակ՝ աշխատանքը լավ կազմակերպելու, ջրի բաշխումը ճիշտ դասավորելու չնորհիլ: Նույն նորագավթին այս տարի հեկտարից կտա 18 ցենտներ և ավելի բամբակ (ծափեր):



ԸՆԿ. ԶԱՎԵՆ ՎՈՍԿԱՆՅԱՆԻ ՃԱՌԸ

Վաղարշապատի «Անսատված» կոլտնտեսության Դեմչենկոյի
անվան բրիգադի բրիգադիք

Ընկերներ, մենք գյուղատնտեսության մեջ դեռ այնպիսի
թերություններ ունենք, վորոնք խանդարում են բերքատվու-
թյան բարձրացմանը։ Որինակ՝ սերմերի զտմանն ու ախտահան-
ժանը մի շարք տեղերում կարեռություն չեն տալիս, թերա-
գնածատում են բամբակենու մշակման աշխատանքների մեքենա-
յացումը, հաճախ բացահայտորեն դեմ են դուրս գալիս մեքենա-
յացմանը։

Մենք պետք են պայքարենք նման յերեսությունների դեմ և աշ-
խատենք մեր ամբողջ ցանքն ու մշակումը տրակտորով կատա-
րել։

Ընկերներ, մեր բրիգադը, վոր կոչվում են Դեմչենկոյի ա-
նունով, կազմել են ագրոխորհուրդ։ Ունենք նույնպես լարուատո-
րիա։ Յուրաքանչյուր խնդիր տեղափոխում ենք ադրոխորհուրդ, առաջարկություններին լուծում ենք տալիս այնուել, նոր առա-

ջարկությունները գրում ենք խորհրդի գրքում և աշխատում ենք
մեր փորձը տեղափոխել նաև մյուս բրիգադները։

Յերբ մենք կարգացինք Ուղբեկստանի կենտրոմի քարտու-
ղարի և առաջավոր կոլտնտեսականների ճառերը՝ բամբակի հողը
վարելու, պարարտացնելու և քաղհանելու մասին, վորոշեցինք
այդ փորձը կիրառել նաև մեզ մոտ։ Յեւ պետք են ասեմ, վոր
հետեւելով նրանց որինակին՝ արդեն բամբակի հողերը յերկու
անգամ վարել ենք և յերկու անգամ պարարտացրել՝ մեկը քի-
միական, մյուսը՝ տեղական պարարտանյութով։ Իսկ իմ բրի-
գադը նույնիսկ վարել են 4 անգամ։

Ընկերներ, մենք պետք են նոր հեղաշրջում մտցնենք մեր
գյուղում նաև տեղական պարարտանյութերի ոգտագործման աս-
պարիզում։

Դուք գիտեք, վոր մինչև վերջերս եւ սովորություն չկար
արտաքնոցի և թուչունների աղքն ոգտագործել։ Իսկ այսոր մեր
տղամարդիկ և կանայք այդ թանգարժեք պարարտանյութերի
ոգտագործման համար ունեն հատուկ արկղներ։ Յես կերեմ
հատկանշական մի փաստ։ 15 տարեկան կոմյերիտուհի ոգակա-
վար ընկ։ Թամարա Փանոսյանը տեսնում է, վոր Եջմիածնի մա-
տենաղարանի կտուրում շարունակ աղավնիներ են հավաքվում։
Նա մտածում է այդ աղավնիների ծեռոն ոգտագործելու մասին։
Պարզում է, վոր կտուրում տասնյակ տարիների ծեռոտ կա կու-
տակված։ Ընկ։ Թամարան այնտեղից հանում է յերկու տոնն
ծեռոտ, վորը մանրելուց հետո պետք է շաղ տա իր ողակի հողա-
մասում։

Մենք այժմ սկսել ենք ոգտագործել նույնպես տիզմը, վոր-
պես պարարտանյութ։ այդ ուղղությամբ մենք մեծ աշխատանք
ենք ծավալում։

Հմանական խնդիրներից մեկն եւ ձմեռային ըրջանում աշխա-
տանքն առանց ընդմիջումի կազմակերպելն է։ Նոյեմբերի 27-ին
մեր բրիգադը կոչ արեց բոլորին՝ աշխատանքի դուրս գալ և նո-
յեմբերի 28-ից մինչև այսոր մենք կանոնավոր աշխատում ենք։
Այդպիսով, մենք մեր տրամադրության տակ շատ ժամանակ ենք
ունենում։ նախացանքային աշխատանքները վորակով կատարե-
լու և աղբոկմաղեքաը ճիշտ կիրառելու համար։

Սակայն մենք չպետք ե բավականանանք մեր ունեցած աշխատանքի փորձով, այլ պետք ե նորանոր գիտելիքներ ձեռք բերենք։ Մենք պետք ե բամբակագործության մեջ կատարենք դիտահետազոտական աշխատանքներ։

Այս տարի մեր բրիգադը պետք ե տասը հեկտար ցանի թըմբերի վրա։ Դրա առաջին առավելությունն այն է, վոր լավ հողն ընկնում ե անմիջապես սերմի վրա։

ՅԵՆԳԻԲԱՐՅԱՆ. —Դուք ազրովսմբակներ ունե՞ք, և աշխատում են նրանք։

ՎՈՍԿԱՆՅԱՆ. —Այո՛, ունենք և աշխատում են։

Հիմա, ընկերնե՛ր, ի՞նչ առավելություն ունի թմբային սիստեմը։ Թմբային սիստեմի առավելությունն այն է, վոր արեւլավ և ընկնում բույսի վրա, մոլխոտեր քիչ են լինում, և ջրելու ժամանակ քանդումներ չեն լինում։ Այդ բոլորն ապահովում ե բարձր բերքատվությունը։ Բացի դրանից, մենք վորոշել ենք խաչաձև կուլտիվացիա կատարել։

Յես այստեղ մի այլ կարևոր խնդիր եմ դնում։ Քաղհանը պետք ե կատարել դեպի հետ գնալով։ այդ առթիվ մեր ագրոխմբակը վորոշում ե կայացրել, և յես պրոֆեսոր Քալանթարյանի կարծիքն եմ հարցրել։ Նա հավանություն ե տվել այդ ձեի քաղհանին։ Դրա առավելությունն այն է, վոր հողը չի տրորվում վոտների տակ, և բամբակենու աճումն ավելի արագ ե լինում։

Մի քանի խոսք քեթմենների մասին։ Մենք քեթմենները վերափոխել ենք։ Քեթմենի յերկու կողմերում կան յեզրներ, մենք դրանք հանել ենք. դա ավելորդ է։ Այդ վերափոխումը մեզ հնարավորություն ե տալիս ավելի լավ քաղհանել։

Մի ուրիշ կարևոր խնդիր։ Մեր արդյունաբերության մեջ մտցված ե պարտադիր տեխնիկանումը, իսկ գյուղատնտեսության մեջ այդ բանը չկա։ Յես խնդիր եմ դնում՝ պարտադիր տեխնիկանում մտցնել նույնպես գյուղատնտեսության մեջ։

Այժմ յերկու խոսք մեր արվեստի և գրականության Փրոնտում աշխատողներին։ Նրանք պետք ե վերակառուցեն իրենց աշխատանքները, պետք ե գրեն ստախանովականների—ընկերներ Բուղաղյանի, Մարջանյանի, Մացակ Պալյանի մասին։

Իմ բրիգադը հանձնարարել ե ինձ՝ դիմել այս խորհրդակցությանը, վոր անդրկովկասյան մասշտաբով սահմանվի յերեք ստախանովյան դրությամբ բամբակի, ցորենի և խաղողի բարձր բերքատվության առաջավորների համար։

Մենք վորոշել ենք՝ հեկտարից տակ 30 ցենտներ բամբակ, 35 ցենտներ ցորեն և 200 ցենտներ խաղող, և մենք կկատարենք մեր խոստումը (ծափեր)։

ԸՆԿ. Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՃԱՌԸ
Հոկտեմբերյան շրջանի Բամբակաշատի պարուրչանի
գյուղատնտես

նկերներ, մեր յենթաշրջանը բամբակի պլանը գերակատա-
րեց : Առանձին կոլտնտեսություններ հեկտարից միջինը տվել են
12—15 տեսաներ բամբակ : Այս տարբերությունը հետևանք է
վոչ միայն հողերի զանազանության, այլև մշակման վորակի :
Այն կոլտնտեսությունները, վորոնք մշակման բոլոր պրոցեսնե-
րը կովկին կատարել են, ինչպես որինակ՝ Սովետականը, ստացել
են բարձր բերք :

Սովետականը բաղհանը կատարել ե ֆերմենտ ; և միջին
բերքն այնանդ յեղել ե 15 տեսաներ :

Զրելու համար բոլոր հողերի ու սերմերի վերաբերմանը
միատեսակ նորմա չի կարելի սահմանել : Մեղանում հողեր կան,
վորոնք 5—6 անգամ ջուր են պահանջում, իսկ կան հողեր ել,
վորոնք ավելի քիչ ջրի կարիք ունեն : Բացի գրանից, Հոկտեմ-
բեր գյուղում, վորտեղ մենք ցանել եյինք № 915 սերմը, ցան-
քերը ջրել ենք 12 անգամ, իսկ Սովետականի կոլտնտեսության

ցանքերը ջրվել են 6—8 անգամ, վորովհետեւ այնտեղ ցանված եր
№ 246 սերմը :

Այս տարի իմ յենթաշրջանի Հոկտեմբեր գյուղում կատար-
ված ե նույնպես թմբային ցանք, և պետք ե ասել՝ մեծ ար-
դյունք ե տվել :

Պարարտացման դողան, վոր առաջարկվում է այստեղ (Հեկ-
տարին 65 կիլո), յես քիչ եմ գտնում : Յեթե մենք խնդիր ենք
դնում բամբակի բերքը հասցնել հեկտարից 18—20 տեսաների,
ապա պարարտացման դողան պետք է ընդունենք առնվազն 90
կիլո :

Ի՞նչ ենք արել մենք 1936 թվին բարձր բերք ստանալու հա-
մար : Իմ աղբոշրջանում կատարել ենք 1900 հեկտար աշնանա-
վար . մնացած 100 հեկտարն ել կատարել ենք, յեթե յեղանակները
նպաստավոր լինեն : Այնուհետեւ մենք կսկսենք ամռան ցելի
կրկնավարը :

Սակայն պետք է նշեմ, վոր իմ աղբոշրջանն ապահովված-
չե գյուղգործիքներով և մեքենաներով : Մեղանում 70 հեկտարին
ընկնում է չորս սրակիչ մեքենա : Մեզ անհրաժեշտ են սրակիչ
մեքենաներ, տրակտորային շարքացան և զիգզագներ :

Իմ աղբոշրջանը հանձն ե առնում 1935 թվի 13,5 տեսաների
փոխարեն՝ 1936 թվին տալ 18 տեսաներ բամբակ : Յեվ յես հույս
ունեմ, վոր մենք պատավով դուրս կդանք կուսակցության ա-
ռաջ :

Ընկերնե՛ր, մենք բամբակի քաղհանի ժամանակ նույնպես լավ ենք աշխատել. ինձ որական պլան եր տրված հինգ լիտր, յես կատարել եմ 15 լիտր քաղհան՝ միանդամայն վորակով և դաշտերը մաքրել եմ մոլախոտերից: Բերքահամաքը նույնպես հաջող անցկացրի: Ընկերնե՛ր, այս բոլոր աշխատանքների մեջ մեզ կոնկրետ զեկավարություն ե ցույց տվել մեր շրջկոմի քարտուղար ընկ. Կուրդինյանը:

Յես ձեր բոլորիդ առաջ խոսք եմ տալիս՝ այս տարի հեկտարից տալ 30 ցենտներ բամբակ (ծափեր):

Ընկերնե՛ր, մեր բրիգադը կրում ե ընկ. Խանջյանի անունը: Մենք խոսք ենք տալիս նրա անունը բարձր պահել և նրա առաջ պարզերես դուրս դալ:

Կեցցե՛ մեր առաջնորդ ընկ. ԱՏԱԼԻՆԸ (բուռն ծափեր):

Կեցցե՛ մեր զեկավար ընկ. ԽԱՆՋՅԱՆԸ (ծափեր):

ԸՆԿ. ՇՈՂԱԿԱԹ ՂՈԶԱՂՅԱՆԻ ՃԱՌԸ

Հոկտեմբերյանի Բամբակաշատ գյուղի «Փարոս»

կոլտնտեսության ողակավար

Ընկերնե՛ր, թույլ տվեք Հոկտեմբերյան չրջանի Բամբակաշատ գյուղի կողմից վողջունել ստախանովականների այս հավաքը (ծափեր):

« Ընկերնե՛ր, յես մեր կոլտնտեսության № 1 բրիգադի ողակավարն եմ: Պետք ե ասել, վոր 1933 թվին մենք մեր աշխատանքները լավ չեյինք կաղմակերպում, դասակարգային թշնամին աշխատում եր խանգարել մեզ: Սակայն մենք վերջին տարիներում կարողացել ենք աշխատանքները չափազանց լավ կաղմակերպել. այժմ՝ հասկացել ենք, թե ինչ բան է կոլտնտեսությունը և ինչ ոգուտ ե տալիս մեզ, դրա համար ել ամեն մեկս աշխատում ենք վորակով գործ անել:

Յեթե իմ ողակը 1934 թվին 12 ցենտներ բամբակ տվեց, ապա մենք 1935 թվին պլանով սահմանված 13 ու կես ցենտներ բամբակի դիմաց տվինք 17 ցենտներ (ծափեր):



ԸՆԿ. ԽԱԶԻԿ ՀԱԿՈԲՉԱՆՅԱՆԻ ՃԱՌԸ

Վաղարշապատի մեթենատրակտորային կայանի դիրեկտոր

Պ

արդ ե, ընկերներ, վոր այս տարի բամբակի բերքատվության բարձրացման դուրսում մենք ձեռք ենք բերել խոչոր նվաճումներ : Այդ նվաճումները հետևանք են այն բանի, վոր մեր կոլտնտեսությունների աշխատանքի հիմքում դրված ե արտելի ստալինյան կանոնադրությունը, վոր մեր կուսկազմակերպությունները կարողացել են գլխավորել կոլտնտեսական մասսայի արտադրական բուռն վերելքը և կոլտնտեսականների համար աշխատանքը դարձնել պատմի գործ : Մենք մեր գործնական աշխատանքների ընթացքում թեև հանդիպեցինք դասակարգային թրշնամու դիմադրությանը, սակայն մեր կուսկազմակերպությունների գլխավորությունը մենք կարողացանք ջախջախել նրա դիմադրությունը և ապահովել բամբակի բարձր բերքատվությունը, տալով հեկտարից միջինը 10 ցենտներ բամբակ : Կոլտնտեսությունները մեծ ոգում ստացան բամբակի մշակութից : Դա խոչոր ապահով էր այն ոպորտունիստական տարրերին, վորոնք գտնում եին, թե չայաստանում բամբակ ցանելը նշանակում է կոլտնտեսություններին նյութապես սնանկացնել :

Ընկերներ, մեր արակտորային պարկն ապահովում է բամբակի յերկու վարը, իսկ առանձին տեղերում՝ յերեքը : Կցվող գործիքներից մենք ունենք 56 գութան, 7 շարքացան, վորոնք նոր են ստացված և պետք է վորոշ ձևափոխման յենթարկվեն : Ունենք 13 կուլտիվատոր, վորոնց մեջ նույնպես վորոշ փոփոխություն պետք է մատնենք և հարմարեցնենք մեր դաշտերին : Իսկ ի՞նչ ենք արել մենք մեր սպասարկած կոլտնտեսություններում :

Հանքային պարարտանյութերով պարարտացրել ենք 2000 հեկտար : Մեր կոլտնտեսություններն, իրենց հերթին, մինչեւ փետրվարի 8-ը բամբակի դաշտերն են փոխադրել մոտ 30.000 սայլ գոմաղը (բոլոր կոլտնտեսությունների տեղեկությունները գեռնս չկան) :

Ընկերներ, ինչպես այստեղ պլոտի . Քաղանթարյանն ասաց, ամեն մի հեկտարի համար միջին պարարտացման նորման պետք է լինի 40 սայլ : Սա ճիշտ է, և մեր կոլտնտեսություններն այդպես ել անում են : Նրանք այժմ աշխատանքը են ծալվալում, վորապես հարցուր տոկոսով դաշտերը պարարտացնեն :

Այժմ մի քանի խոսք այն մասին, թե ինչ ենք մտադիր ներկայումս անելու : Մեր ՄՏԿ-ի միջոցով մենք առաջին հերթին պետք ե կատարենք տրակտորային ցանքը, վորը լինելու յի 1000 հեկտար և կուլտիվացիան՝ 800 հեկտար :

Ընկերներ, պետք է նշել, վոր անցյալ տարի մեր մեքենատրակտորային կայանի սպասարկած կոլտնտեսությունները տվել են ամենաբարձր բերքը, բայց հակառակ դրան, միջինը դեռևս ցածր է : Դրա պատճառն այն է, վոր մեր ըրջանում կոլեկտիվացման տոկոսը գեռ ցածր է, իսկ դա խիստ է մեր դաշտերի բերքատվության բարձրացմանը : Մենատնտեսներն իշեցնում են շըրջանի միջին բերքատվությունը : Յեթե մեր ըրջանի կոլտնտեսությունները միջին բերքը հեկտարից տվել են 11,5 ցենտներ ապա մենատնտեսները տվել են 7-8 ցենտներ, իսկ մեզ մոտ բամբակի ցանքի $\frac{1}{4}$ -րդը համարյա մենատնտեսներին է պատկանում : Պետք ե հիմնական միջոցներ ձեռք առնել՝ բարձրացնելու նույն պես մենատնտես հատվածի բամբակի բերքը :

Մյուս հիմնական հարցն աշխատանքի կազմակերպումն է : Հասկանալի յի, վոր աշխատանքը լավ կազմակերպելու համար նախ և առաջ լավ հիմքերի վրա պետք է դնել աշխատանքի հաշվառումը :

իսկ ինչպես և կատարվում մեղ մոտ աշխատանքի հաշվառումը: Պետք ե ուղղակի ասել, վոր այդ աշխատանքը մեղ մոտ վատ և դրված: Մենք չենք կատարում ճիշտ հաշվառում և՛ կատարված աշխատանքի քանակի, և՛ վորակի վերաբերյալ:

Մեր բոլոր բրիգադիրները, թեկուզ ամենից լավերը, հնարավորություն չունեն բրիգադի կատարած աշխատանքը հաշվառման յենթարկելու և այնպէս ընդունելու: Մենք պետք ե ունենանք աղատ բրիգադիրներ, վորակեսդի նրանք ժամանակ ունենան դրադիլու հաշվառման ինդիրներով: Պատահել են դեպքեր, յերբ աշխորեր չեն դրանցվել. այդ մասին բաղմաթիվ անդամ դրվել ե մամուլում: Յես կարծում եմ, վոր տարվա մեջ 5 ամիս բրիգադիրը պետք ե աղատ լինի արտադրության մեջ անմիջապես աշխատելուց:

Մի քանի խոսք ագրոձեռնարկումների և մեխանիզացիայի մասին: Վորակեսդի մենք կարողանանք ագրոձեռնարկումները կոլտնտեսություններում լավ անցկացնել, պետք ե անսպայման կազմել հողի պասպարտը: Անթույլատրելի յե, վոր մինչև այժմ մեր գյուղատնտեսները և կոլտնտեսականները չգիտեն, թե ինչ տեսակ հող ունեն:

Հողի պասպարտը կազմելուց հետո, մենք ըստ հողի պահանջի ել պետք ե կազմենք ագրոձեռնարկումները:

Ընկեր Յերվանդ Ղարիբյանի յելույթն ընդհանրապես հիանալի յելույթ եր, բայց յես համաձայն չեմ նրա այն տեսակետի հետ, թե նորմանները պետք ե գյուղում կազմել, թեև ճիշտ ե, վոր անհրաժեշտ ե հաշվի առնել կոլեկտիվ տնտեսության փորձը:

Իմ կարծիքով պետք ե հրավիրել կոլտնտեսականների խորհրդակցություն, նրանց փորձերը հաշվի առնել և տալ նորմաններ:

Մի յերկու խոսք ել միջարքային տարածությունների մասին: Իմ կարծիքով ճիշտ չեն այն ընկերները, վորոնք գտնում են, թե հիմնականում այդ տարածությունը պետք ե լինի 70 սանտիմետր: Յես գտնում եմ, վոր այն պետք ե լինի 60 սանտիմետր: Մի շարք ուսումնասիրություններ ցույց են տվել, վոր հնարավոր ե այդ տարածությամբ ցանքերը մեխանիզացիայի յենթարկել: Մենք մի կուլտիվատոր ենք աշխատեցրել և փորձը ցույց ե տվել, վոր հնարավոր ե աղատ կերպով 60 սանտիմետր միջարքային տարածության մեջ աշխատել:

Այստեղ խոսվեց նաև տրակտորային ցանքի մասին, իսկ վեդու ընկերները տրակտորային ցանքից կարծես խուսափում են. նրանց տրակտորային ցանքի պլան ե տրված 2000 հեկտար, բայց նրանք կարծես հրաժարվում են. յեթե 1500 հեկտար ել տրվի, յերեւի նրանք նորից կհրաժարվեն (ձայներ տեղերից .—ճիշտ ե): Մա, իմ կարծիքով, անուղղակի կերպով մեքենայացման դեմ դուրս գալ ե նշանակում: Մենք անցյալ տարի տրակտորային ցանքի պլանը կատարել ենք և գրական արդյունքի հասել: Տրակտորային շարքացանն աշխատանքը կատարում ե բարձր վորակով, հեշտացնում ե գյուղացու աշխատանքը և ազատում քաշող ուժը, վոր այդ ժամանակաշնթացքում կարող ե պարարտանյութի տեղափոխման կամ ուրիշ աշխատանքի համար ոգտագործել: Ինչո՞ւ, ուրեմն, հրաժարվել տրակտորային շարքացանից:

Մենք, ընկերներ, պարտավորություն ենք վերցնում ՄՏԿ-ի սպասարկած կոլտնտեսություններից 1936 թվին միջին հաշվով բերք տալ հեկտարից 18 ցենտներ, իսկ շրջանի միջինը հասցնել 15 ցենտների (ծափեր):

ԸՆԿ. ՄՈՒՐԱԴ ՊՈՂՈՍՅԱՆԻ ՃԱՌԸ

Հոկտեմբերյանի մեթենատրակտորային կայանի դիրքետոր

Ընկերներ, այստեղ ընկ. Հակոբջանյանը և մի շարք գյուղատնտեսներ թվեցին այն կարեռ ագրոձեռնարկումները, վորոնցով բամբակացան շրջանները կարողացան 1935 թվին միջինը հեկտարից ստանալ 10 ցենտներ բամբակ:

Յես այստեղ մի յերկու խնդիր պետք է շոշափեմ, վորոնք անմիջապես կապված են բերքատվության բարձրացման հարցի հետ:

1935 թվի գարնանը մեր առաջ խնդիր եր դրված՝ կատարել ցրտահերկ և 2-րդ վարչ Յերկրորդ վարն ընկերներից շատերն ընդունում են վորպես կրկնավար և 8—10 սանտիմետրից վոչ ավելի խորությամբ:

Մեր մեքենատրակտորային կայանի տրակտորային պարկի փորձը, սակայն, ուրիշ բան և ասում մենք յերկրորդ վարը կատարեցինք առաջին վարի խորությամբ և նույն գութաններով. արդյունքը վատ չեր:

Մեր շրջանում հուլիս, ողոստոս ամիսներին ունենում ենք մեծ քանակությամբ ցորեն և առվույտ, վորոնց հունձը և

կալսումը բավականին բանվորական ուժ են խլում մեղանից: Անհրաժեշտ ել լրիվ կերպով մեխանիզացիայի յենթարկել ցորենի և առվույտի քաղը և այդպիսով բանվորական ուժն ամբողջովին տրամադրել բամբակի մշակման աշխատանքներին:

Բերքատվության բարձրացման գործում մեծ նշանակություն ունի ցրտահերկը: Այս գիտակցությամբ ել անցյալ տարվա 3000 հեկտարի դիմաց այս տարի մենք կատարել ենք 4.500 հեկտար ցրտահերկ, այն ել ավելի լավ վորակով: Մենք այս տարի տշնանցան հողերից 1000 հեկտար պարարտացրել ենք:

Միջարքային տարածությունը, իմ կարծիքով, չպետք է 60 սանտիմետրից ավելի լինի, իսկ 60 սանտիմետր միջարքային տարածության մեջ մեխանիզացիա կիրառելը, յես կարծում եմ՝ միանգամայն հնարավոր և տուրմանը շատ լավ աշխատամ և անդամ՝ 50—55 սանտիմետր միջարքային տարածության մեջ: Դժվար չենոք բերել 55—60 սանտիմետր լայնությամբ 70 կուտիվատոր, վորը հսկայական ոգուտ կտա մեզ: Յեթե դա ել հնարավոր չե, ապա կարելի յե մեր ունեցած կուլտիվատորները փոփոխության յենթարկել:

Յերկրորդ վտանգը միջբույսային լայն տարածության մեջ է: Մենք մեծ կորուստ ենք ունենում, յեթե միջբույսային տարածությունը թողնենք 30 սանտիմետր, փոխանակ 12—18 սանտիմետրի:

Մեր ամենամեծ դժվարությունը շարքացմանի պակասն է. մենք շարքացաններ չունենք: Անցյալ տարի ժողկոմխորհի կողմից հրավիրված խորհրդակցությունում մենք խնդիր դրինք ժամանակին շարքացաններ տալ մեղ. մի քանի անդամ նույն հարցը բարձրացրել ենք, բայց մինչեւ այժմ ել դեռ չենք բավարարած:

Անցյալ տարի մենք խնդրեցինք լնկ. Մամիկոնյանին, վորպեսզի մեկ կոմբայն տրվի: Չնայած մի շարք ընկերների պընդումներին, թե հնարավոր չե կոմբայնն աշխատեցնել բամբակացան շրջաններում, մենք 3 կոմբայնով 10 որվա ընթացքում հնձեցինք 300 հեկտար տարածություն (ծափեր): Ընկերներ, կոմբայնի այդ արտադրողականությունը զեռևս արժանի չե ծափահարության: Մենք այս տարի կունենանք մեր սեփական կոմբայնները և կապահովենք նրանց բարձր արտադրողականությունը:

Ընկերներ, այս տարի բոլորիս խնդիրը պետք է լինի բարձրացնել բամբակի դաշտերի բերքատվությունը և հասնել մեր ուղղեկ ընկերներին։ Մեր շրջանի բոլոր կոլտնտեսականները խոստացել են արդեն բերքատվությունը բարձրացնել միջինը 15—18 ցենտների։ Դա լավագույն պատասխանը կլինի այն բարձր պարզեցի, վորին արժանացան մեր ղեկավարները։ Յես վստահ եմ, վոր Հայաստանի բամբակացան բոլոր շրջանների համար պատվի գործ կլինի ընկ։ Խանջյանի տված խոստման կատարումը (ծափեր)։



ԸՆԿ. Ն. ԱԴՐՅԱՆԻ ՃԱՌԸ

Հողժողկոմատի Բամբակվարչության պետ

Ընկերներ, դուք պետք ե միշտ հիշեք, վոր միայն մեր կուսակցության գծի ճիշտ կիրառմամբ, միայն դասակարգային պայքարում թշնամուն ջախջախելու միջոցով ե, վոր ճեռք ենք բերել այն հաղթանակները, վորոնց մասին դուք խոսեցիք այսեղ։

Այժմ խնդիրն այն է, վոր ոգտագործենք բոլոր հնարավորությունները՝ այս տարի բերքատվությունը մեծ չափով բարձրացնելու համար։

Ընկերներ, հանքային և տեղական պարարտանյութերի ողտագործման այս տարվա վորձը գրական արդյունք տվեց։ Հոկտեմբերյան շրջանում քիմիական պարարտանյութով պարարտացված վորձագաւառը տվել է հեկտարից 2 ու կես ցենտներ ավելի բերք, Վաղարշապատում՝ 2,7 ցենտներ, Ղամարլում՝ 3,1 ցենտներ, Վեդիում՝ 1,4 ցենտներ։ Տեսնում եք, ուրեմն, վոր հանքային պարարտանյութերը հանդիսանում են կարևոր գործոններից մեկը՝ բերքատվության բարձրացման խնդրում։

Ներկայումս մեր գործածած պարարտանյութերին պետք է ավելացնենք նաև ավագը։ Ինչ վոր խլել ենք հողից, պետք ե վերաբարձնենք, վորակեսղի վերականգնենք հողի բերքատվության ունակությունը։

Դասնանք ջրի խնդրին: Պետք է ասեմ, վոր յերբ 2—3 որ չարունակ ջուրն ուժեղ քանակությամբ է արվում, բամբակը դեղնում է: Շատ անդամ ել ջուրը չի հասնում բամբակենում: Սա նշանակում է, վոր մենք բամբակենին նորմալ չենք ջրում:

Ընկերնե՛ր, յես այստեղ ուզում եմ դնել մի հիմնական խրնդիր. դա մարդոցի վերացման խնդիրն է: Կոլտնտեսականները շատ լավ գիտեն, թե մարդոցումը վորքան աշխոր է խլում յուրաքանչյուր կոլտնտեսությունից: Իմ կարծիքով, մենք հնարավորություն ունենք այս տարի վերացնել մարդոցը: Բացի աշխորի մսխումից, ագրոնոմիական տեսակետից ել մարդոցն ոգտակար չե: մարդոցի ժամանակ հողի լավագույն մասը հավաքվում է մի կողմ և անձրեկ ու արեկ տակ տարրալուծվում է՝ առանց բույսին ոգուտ տալու:

Մարդոցի վերացման հետ միաժամանակ յես անհրաժեշտ եմ դանում բութ ակոսների կատարումը միջարքային տարածության մեջ: Ընկերնե՛ր, դուք գիտեք, վոր առաջին քաղհանից հետո մենք փիսրացում ենք կատարում: Աս պետք է անել կուլտիվացիայի միջոցով: այստեղ ե, վոր մենք բութ ակոսների խրնդիր ենք դնում: շատ պարզ ե, վոր այս գեղքում ջուրը դնում է մարդերի միջով, վորի չնորհիվ ել մենք ջրի խնայողություն ենք ունենում: Բացի դրանից, որա առավելություններից մեկն ել այն ե, վոր բամբակի մակերեսը չի կեղեակալում և քիչ է մոլախոտերով ծածկվում: Ահա այս առավելություններից յելնելով ե, վոր ինդիր ենք դնում մարդոցելու սիստեմից անցնել բուքակոսային սիստեմին:

ԶԱՅՆԵՐ ՏԵՂԵՐԻՑ.—Այդպիսի փորձ յեղե՞լ ե:

ԱԴՈՅԱՆ.—Այո՛: Այդպիսի փորձ յերեք տարի շարունակ յեղել ե Աղյամղալույի հենակետային տնտեսությունում և չափազանց հաջող արդյունք է տվել:

Յես այս խնդրի մասին խոսել եմ մեր գյուղատնտեսների հետ. նրանք չեն առարկել որան, բայց գեռ յուրաքանչյուրը վախենում է, վոր կարող ե վորոշ բան պատահել, բայց թե ի՞նչ, իրենք ել չգիտեն:

Ընկերնե՛ր, այժմ անցնենք մեքենայացված ցանքի և կուլտիվացիայի խնդիրներին: Խորհրդակցության ընթացքում վիճարանության առարկա գարձավ 60—70 սանտիմետր, թե 40—55 սանտիմետր միջարքային տարածություն թողնելու ինդիրը:

Ընկերներից վոմանք կարծում են, թե 60—70 սանտիմետրի վրա յեթե ցանք կատարվի, հողի վատնում կառաջանա, ինչ վոր իմ կարծիքով սիալ է: Մենք պետք ե 60—70 սանտիմետր միջարքային տարածությամբ ցանք կատարենք:

Ընկերնե՛ր, վոր սերմն ուզում եք վերցրեք, միենույն է, յեթե մինչև ծաղկումը մենք կարողանանք յերեք ջուր տալ, դա կոզնի բամբակենու ցողունի բարձրացմանը՝ նվազեցնելով նրա արմատի խորացումն ի հաշվով իր ցողունի:

Ընկերնե՛ր, միջրույսային տարածության խնդիրը չի կարէ: միանգամից պարզել և ասել, վոր այդ տարածությունը պետք է լինի 15—20 սանտիմետր: Իմ կարծիքով, այդ տարածությունը պետք ե վորոշել ըստ հողամասերի վորակի. վորոշ տեղեր կարելի յե ընդունել 10—15 կամ 15—20, վորոշ տեղեր նույնիսկ 25 սանտիմետր:

Այժմ, ընկերնե՛ր, նոսրացման մասին: Նոսրացումը չափաղանց կարեոր գեր ունի բամբակագործական աշխատանքներում: Կան ընկերներ, վորոնք պնդում են, թե ցածրորակ բամբակն ստացվում է ջրի պակասության հետևանքով, ինչպես բացատրում են Վեդիում: Յես կարծում եմ, ընդհակառակը, ցածրորակ բերքը հետևանք է վատ կատարված նոսրացման և վոչ ջրի պակասության:

Ընկերնե՛ր, մենք իսկապես ունենք հնարավորություններ բարձր բերք ստանալու համար: Այն խոստումը, վոր տվեց ընկ. Խանջյանը կուսակցության առաջնորդին՝ ընկ. Ստալինին, մենք հնարավորություն ունենք կատարելու և կկատարենք: Այս տարի մենք մեր բամբակի գաշտերից 10.000 հեկտարը պարաբռացմելու յենք հանքային պարաբռայութով և 5000 հեկտարը՝ տեղական պարաբռայութով: Բացի դրանից, 1400 հեկտար առվույտի հողամասը ցանքաշրջանառության հետևանքով այս տարի անցնում է բամբակի տակ: Այս բոլորը բամբակի բարձր բերք ստանալու նախապայմաններն են: Մենք ունենք նույնպես քեթմեններ, և, վերջապես, մենք աշխատելու յենք ստախանովյան մեթոդներով, ունենք պատրաստված կաղըրեր, մեր կոլտնտեսականների մեջ տիրում է անհախընթաց վոգենորություն: Սրանք բոլորը յերաշխիք են, վոր մենք կկատարենք այն առաջադրանքը, վոր տրված է մեզ՝ բամբակի ֆրոնտի աշխատողներիս՝ (ծափեր):



ՀՍԽՀ ՀՈՇՎՈՐԱԿՈՄ ԸՆԿ. Վ. ՄԱՄԻԿՈՆՅԱՆԻ ՃԱՌԸ

նկերնե՞ր, այս յերկու որվա ընթացքում մենք լսեցինք առաջակոր բամբակագործներին, կոլտնտեսությունների նախադաշներին, բրիգադիերներին ու ողակավարներին—բարձր բերքատվության վարպետներին։ Այդ վարպետներն այս ամբիոնից պատմեցին մեզ այն ձեռնարկումների մասին, վորոնց կիրառումը հնարավորություն տվեց նրանց արդեն 1935 թվականին յուրաքանչյուր հեկտարից ստանալ միջին հաշվով 15-ից մինչև 25 տեսաներ բամբակ, մինչդեռ բամբակի միջին բերքատվությունը չայստանում հասնում էր տասը ցենտների։

Զի կարելի հաշտվել դեռ վորոշ տեղերում տարածված այն մտքի հետ, թե իր այդ առանձին կոլտնտեսություններն ու բրի-

գաղները բարձր բերք են ստացել այն պատճառով միայն, վոր այնտեղ հողն ու կլիմայական պայմաններն ավելի նպաստավոր են։ Վո՛չ, ընկերներ, յեթե մենք այդպես մոտենանք հարցին, դա սխալ կլինի։ Մեր առաջավորների հիմնական հաջողությունն արդյունք է այն բանի, վոր նրանք կարողացան ոգտագործել այն հնարավոր ուեղերվները, վոր տալիս է մեր կոլտնտեսային կարգը, բերքատվության բարձրացման այն ուեղերվները, վորոնք մինչև այժմ չեյին ոգտագործվում մեր կողմից։ Մենք չենք տարակուսում, վոր ոգտագործելով այդ բոլոր ուեղերվները, մեր կոլտնտեսությունները 1936 թվականին եւ ավելի խոշոր նվաճումներ ձեռք կրերեն։

Մեր կոլտնտեսությունների աճումը, բերքատվության բարձրացման ասպարիզում յերկրում յեղած ամենահարուստ հնարավորությունները, առաջավոր մարդկանց մինչև այժմ գեռ յերեվան չբերված պրակտիկան ու փորձը, բերքատվության բարձրացման լրացուցիչ ուեղերվները և մեր կոլտնտեսականների ձըդտումը՝ յերևան բերելու դրանք, այս ամենը հայաստանի կ(բ)կ կենտկոմի քարտուղար ընկեր Խանջյանին թույլ տվին խոստանալու ընկեր Ստալինին, վոր բամբակի բերքատվության տեսակետից 1936 թվականին մենք հասնենք ուղբեկներին։ Մեր առջև խնդիր և դրված՝ 1936 թվականին յուրաքանչյուր հեկտարից ստանալ առնվազն 15 ցենտներ բամբակ։ Այդ նշանակում և 1936 թվականին բամբակի բերքատվությունը բարձրացնել 50 տոկոսով։ Պետք է լրջորեն մտածել այս մասին։ Մենք պետք ե այնպես նախապատրաստվենք բամբակի ցանքին, վոր ցանքն սկսվի ու ավարտվի ժամանակին և կատարվի վորակական բարձր ցուցանիշներով։ Մենք այժմ չենք կարող արձանագրել, թե ամեն ինչ արված է այդպիսի բարձր բերք ապահովելու համար։ Խոչըր նշանակություն ունի հողի նախապատրաստման հարցը։ Միության ժողկոմիուրհի վորոշմամբ հայտառանում բամբակի ցանքին հատկացված ամբողջ տարածությունը, այսինքն՝ 18.000 հեկտարը, մենք պետք ե աշնանավար կատարելինք, սակայն կատարել ենք միայն 10.000 հեկտար։ Ճեղքվածքը գոյություն ունի և մենք պետք ե այնպես նախապատրաստենք հողը, վոր կարողանանք ծածկել այդ ճեղքվածքը։ Դա նշանակում է՝ այն հողամասերը, վորտեղ աշնանավար չե կատարվել, պետք ե գարնանը, ցանքից առաջ, հերկվեն առնվազն յերեք անգամ, իսկ աշ-

նանը հերկված հողամասերը՝ առնվազն յերկու անգամ։ Դրա համար մենք հնարավորություններ ունենք։ Անհրաժեշտ է միայն, վոր մեր մեքենատրակտորային կայանները կաղմակերպեն տրակտորային պարկի անընդմեջ աշխատանքը և ոգտագործեն այդ նվատակի համար բարենպաստ բոլոր որերն ու ժամերը։ Սակայն վո՞չ բոլոր մեքենատրակտորային կայաններն են այսպես մոտենում այդ հարցին։ Որինակ՝ յերկու որ սրանից առաջ կարելի յեր հիմանալի կերպով հերկել, քանի վոր կլիմայական պայմաները միանդամայն բարենպաստ եյին, բայց մեր տրակտորները դաշտ դուրս չեկան։

Յերկորդ խնդիրը պարարտացումն է։ Պատկերավոր դարձնելու համար յես ցանկանում եմ մի քանի թիվ բերել պարարտանյութերի կերառման եֆեկտիվության վերաբերյալ։ Այսպես՝ անցյալ տարի Վաղարշապատի շրջանը հանքային պարարտանյութերով պարարտացրած յուրաքանչյուր հեկտար հողամասից 2,7 ցենտներով ավելի բերք ստացավ, քան չպարարտացված հողամասերից, կամ՝ 28 տոկոսով ավելի։ Հոկտեմբերյան շրջանում այդ աճումը կաղմում է 25 տոկոս։ Վեղու շրջանի Ռեհանլույի կոլտնտեսությունում զուտ գոմաղբով պարարտացված յուրաքանչյուր հեկտար հողամասից 60 տոկոսով ավելի բերք և ստացվել, քան չպարարտացված հողամասից։ Ի՞նչ են ցույց տալիս այս թվերը։ Դրանք վկայում են այն խոշոր հնարավորությունների մասին, վոր մենք ունենք բերքատվության բարձրացման գործում, յեթե միայն ինչպես հարկն է, առավելագույն չափով պարարտացնենք հողամասերն ինչպես հանքային, այնպես և սեղական պարարտանյութերով։ Սակայն այդ գործին, առանձնապես գոմաղբի փոխադրմանը, ամեն տեղ չե, վոր լուրջ ուշադրություն և գարձագում և ամեն տեղ չե, վոր համապատասխան ուշադրություն և նվիրվում գոմաղբի պահպանմանը՝ նախքան դաշտ փոխադրելը։ Անհրաժեշտ է վճռական միջոցներ գործադրել 1936 թվականին առնվազն 10.000 հեկտար հանքային պարարտանյութերով և 5000 հեկտար տեղական պարարտանյութերով պարարտացնելու պլանը լրիվ կատարելու համար։

Յերքատվության բարձրացման գործում պակաս նշանակություն չունի նաև ցանքը ծլունակ ու դաշտ սերմերով կատարելը։ Սակայն 1935 թվականին վորքան ել մենք աշխատեցինք լիովին դաշտ սերմացուն, այնուամենայնիվ մեր շատ կոլտնտե-

սություններում և մի շարք բրիգադներում հնարավոր չեղակդուռ մերմացուն։ Քիչ չեյին այնպիսի դեպքերը, յերբ դժվար եր ջոկել, թե վոր սերմացուն և դոված և վորը՝ վոչ, քանի վոր վորոշ տեղերում սերմացվի դուռմը կատարվել եր անբարեխիզմ կերպով, անորակ մարդկանց ձեռքով։ Այս տարի պետք է հարյուր տոկոսով ձեռքով զոել ամբողջ սերմացուն, և զոել այնպիսի մարդկանց միջոցով, վորոնի լավ հասկանում են այդ գործը։

Բամբակենու աճումը կախված է նաև թվերի ճիշտ դասավորումից, այսինքն՝ պետք է ունենալ բամբակենու նորմալ խտություն և ապահովել նրա նորմալ վեգետացիոն գարգացումը։

Հայտնի յե, որինակ, վոր բամբակենու նորմալ խտությունը մեկ հեկտարի վրա պետք է հասնի 100—120 հազար թվի։ Յեթե յուրաքանչյուր հեկտարի վրա թիվերի թիվը դրանից պակաս է, մենք բամբակի ընդհանուր բերքի մեջ, այսինքն՝ բերքատվության ասպարիզում կորուստ կունենանք, իսկ չափից ավելի խտությունը կանգրադառնա բույսի աճման վրա և կիշեցնի նրա բերքատվությունը։ Այս հարցն անմիջականորեն կապվում է շարքերի միջև թողնվող տարածության հետ, այսինքն՝ այն հարցի հետ, վորն անցյալ տարի ևս ճիշտ լուծում չստացավ մեզ մոտ։ Մենք պետք ե շարքերի միջև ընկած տարածությունն ընդունենք 60-ից մինչև 70 սանտիմետր, վորովհետև հաշիվները ցույց են տալիս, վոր շարքերի միջի տարածությունը 70 սանտիմետր թողնելու դեպքում, շատ հեշտությամբ կարելի յե մեկ հեկտարի վրա տեղավորել 140.000 թուփ, այսինքն՝ յերկուական թուփ յուրաքանչյուր թմբի վրա, մեկը մյուսից 20 սանտիմետր հեռավորությամբ։ Այն ընկերները, վորոնք կողմնակից են շարքերի միջև ընկած տարածությունը 50 սանտիմետր դարձնելուն, փորձում են ապացուցել, թե այդ դեպքում կարելի յե ավելի շատ բերք ստանալ։ Այդ սխալ և այդպես արտահայտվողներն որյեկտիվորեն դեմ են դուրս գալիս բամբակենու մշակման մեքենացմանը, այսինքն՝ տրակտորային ցանքին ու տրակտորային կուտիվացիային, լավ իմանալով, վոր շարքերի միջև ընկած տարածությունը 50 սանտիմետր անելու համար մենք չունք չամապատասխան տրակտորներ և կուլտիվացտորներ։ Դրան զուգընթաց պետք ե աշխատել, վոր մեր հեկտարներն ու թմբերը լիարժեք ու ճիշտ ցանված։

Մյուս հարցը, վորի մասին յես ցանկանում եմ խոսել՝ ցանքերը ջրելն ե:

Յես սիսակ եմ գտնում առաջին չետո բամբակենին ջրելը, քանի վոր այդ յերկարացնում ե բամբակենու վեգետացիոնը, կնդուղներն ուշ են բացվում և բամբակն այդ գեղաքում լինում ե վոչ լավ վորակի (կուրագ): Յեթե ընկերները վերցնում են Միջին Ասիայում կատարված պրակտիկան, վորտեղ բամբակենին ջրում են առաջին յերկու չանաքից հետո, ապա դա չի նշանակում, թե նույն պրակտիկան կարելի յե կիրառել նաև մեկ մոտ: Այդ վոռոզումը կատարվում ե վոչ այնքան տվյալ տարրական բերքատվությունն ապահովելու, վորքան հողը գալիք տարրական համար նախապատրաստելու նպատակով: Կնդուղները ժամանակին բացվելու դործում մեղ համար թանգ ե յուրաքանչյուր որը և մենք պետք ե բամբակի դաշտերն այնպես ջրենք, վոր չերկարացվի բամբակենու վեգետացիոն շրջանը, հետեւապես 1936 թվականին պետք ե խուսափել այս բնագավառում 1935 թվականին թույլ տրված սիալներից: Պետք ե նաև հանձնարարել բամբակենու մասնակի ջրումը, բայց վոչ խոշոր դոզաներով: Այս գործում մեր վոռոզման ասպարիզում աշխատողները պետք ե ոգնեն շրջաններին:

Քեթմենների ոգագործման հարցին 1935 թվականին բավարարություն չնվիրվեց: Նույնիսկ բերված քեթմեններն ել լրիվ չոգտագործվեցին: Բացակայում եր քեթմենների նշանակության համապատասխան, ամելի խոր պարզաբանումը: Այս թերություններից ընթացիկ տարում պետք ե խուսափել:

Բերքատվության բարձրացման համար անհրաժեշտ ե ուսումնասիրել բամբակի թափիվելու պատճառները և համապատասխան միջոցներ ձեռք առնել դրա դեմ, վորպեսզի հնարավորի չափ ամելի մեծ քանակությամբ կնդուղներ ցողունի վրա պահվեն: Մեր վորոշ մասնագետներ բամբակենու թափիվելը բացատրում են միայն Փիզիոլոգիական ազդեցություններով: Յես գտնում եմ, վոր նըանք այնքան ել ճիշտ չեն և կարծում եմ, վոր ագրոձեռնարկումների ամբողջ կոմպլեքսի ճիշտ կիրառումը կապահովի առավելագույն չափով կնդուղների պահպանումը թվերի վրա: Յես հանձնարարում եմ մեր կոլտնտեսություններին, մասնագետներին և գիտա-հետազոտական կազմակերպություններին՝ 1936 թվականին լրջորեն զբաղվել այս հարցով, քանի վոր այս-

տեղ նույնպես բամբակի բերքատվության բարձրացման մեջ ուղղերվ ե թագնված: Յերկրորդ հարցն այդ կնդուղների միջին բամբակի քաշն ե: Կնդուղի մեջ յեղած բամբակի միջին քաշը մեղ մոտ հասնում է մինչև 3,5 գրամի, իսկ մի քանի փորձադաշտերում մեր առանձին մասնագետները կնդուղի մեջ յեղած բամբակի քաշը հասցը են 5,5—6 գրամի: Իհարկե, ինդիք գնել, թե մեկ տարրական ընթացքում բոլոր տնտեսություններում կնդուղները պետք ե այդպիսի քաշի հասցնել, գտ գուցե շատերի համար ուժից վեր բան լինի, բայց մենք առաջին տարում կարող ենք ավելի համեստ խնդիր գնել մեր առաջ, այն ե՝ կնդուղի քաշը հասցնել 4—5 և նույնիսկ 5 գրամի: Հաշվի առեք, վոր կնդուղի քաշի յուրաքանչյուր գրամ ավելացնումը բերքատվությունը բարձրացնում է մինչև 20 տոկոսվ: Այստեղ, իհարկե, գործն ամբողջապես կախված ե աղբոձեռնարկումների կոմպլեքսի ճիշտ կիրառումից և մեր մասնագետները, կոլտնտեսականները, բրիդաղիներն ու ողակավարները պետք ե ամենալուրջ ուշադրությունը դարձնեն այս ուղերձին:

Վերջապես բամբակենու ծայրահատման հարցի մասին: Մեր փորձնական ցանքերում կատարվեց բամբակենու ծայրահատությամբ, վորը վերին աստիճանի դրական արդյունքներ տվեց՝ 2—3 ցենտուներով ավելացնելով բերքատվությունն այն ցանքերի համեմատությամբ, վորտեղ բամբակենու ծայրահատում չեր կատարվել: Յես այժմ խորհուրդ չեմ տա այդ կիրառել վորպես մասսայական յերեույթ, բայց կհանձնարարել մեր կոլտնտեսություններին՝ 1936 թվականին իրենց մոտ փորձել կատարել, վորը մենք հետազում կուսումնասիրենք, կընդհանրացնենք և համապատասխան յեղակացություններ կանենք 1937 թվականի համար:

Մի քանի խոսք վնասատուների դեմ պայքարելու մասին: Մենք պետք ե խոսունվանենք, վոր այդ պայքարն այնքան ել կազմակերպված չի ընթանում, համախ մենք պաշտպանում ենք, և վոչ քե հարձակվում: Մենք չոսի դեմ պայքարում ենք այն ժամանակ, յերբ նա արդեն յերեան ե դալիս մեր դաշտերում, մինչդեռ այդ պայքարը հարկավոր ե սկսել նախապես: Իհարկե, չոսի դեմ մղվող պայքարում հսկայական նշանակություն ունեն նաև աղբոձեռնարկումները, բայց դրա հետ միասին մենք պետք ե պայքար կազմակերպենք քիմիական միջոցներով, ժամանակին համապատասխան նյութեր շաղ տանք մոլախոտերի վրա, բամ-

բակի դաշտերի շուրջը՝ մեր բամբակի դաշտերում չոռի լայն տարածումը կանխելու համար։ Իսկ չոռը մեզ մոտ բավականին հաստատուն կերպով ու հիմնավոր նստած է մոլախոտերի վրա։ Մենք չենք կարող հույս գնել վնասատուների դեմ պայքարելու մեծ քանակությամբ նոր սարքալորում ստանալու վրա։ Մենք պետք է ստուգենք մեր ունեցած ամբողջ ապարատուրան, վորոշենք նրանց սլիտանիությունը և վճռական միջոցներ ձեռք առնենք՝ դրանք վերականգնելու ու վերանորոգելու ուղղությամբ։

Այժմ մեքենայացման մասին։ Մենք պետք է տրակտորային ցանք կատարենք առնվազն 6000 հեկտար տարածության վրա և տրակտորներով մշակենք 23—24 հազար հեկտար։ Դրա համար մենք հնարավորություններ ունենք։ Առանձին կոլտնտեսությունների 1935 թվականի պրակտիկան ապացուցեց բամբակի մեքենայացման հակառակորդների տեսության վողջ անպետքությունն ու վնասակարությունը, վորոնք այդ հարցը կազում եյին շարքերի միջն յեղած տարածության հետ։ Առանձին հողամասերում, ինչպես այստեղ ասաց Ղամարլույի մեքենատրակտորային կայանի աղբոնոմ ընկեր Սուրյանը, տրակտորային ցանքի ու տրակտորային մշակման հողամասերում հեկտարից ստացված է 18 ցենտներ բամբակ։ Այդ պլանը կատարելու համար մենք հնարավորություններ ունենք, անհրաժեշտ է միայն ժամանակին համապատասխան հաշիվ կատարել, կազմել համապատասխան պլան, վորոշել հողամասերը, յեղած կուլտիվատորները հարմարեցնել ՈՒ—1 և ՈՒ—2 տրակտորներին և անպայմանորեն կատարել բամբակի մշակության մեքենայացման պլանը։

Յես ցանկանում եմ կանգ առնել դարձյալ մի հարցի վրա—այդ մեր աղբոնոմների աշխատանքն է։ Մեր բամբակացան շըրջաններում մենք բավական թվով աղբոնոմներ ունենք, սակայն նրանց մեջ զեռևս կան այնպիսիները, վորոնք այնքան ել լավ կապված չեն արտադրության ու կոլտնտեսությունների հետ, կան այնպիսի աղբոնոմներ, վորոնք զբաղվում են միայն հաշվառմամբ ու տեղերում յեղած գրությունը լուսանկարելով և չեն գլխավորում մեր կոլտնտեսությունների աշխատանքը, հաշվի չեն առնում առանձին կոլտնտեսությունների դրական փորձն ու նրա արդյունքները, չեն կազմակերպում փորձի փոխանակում և չեն գլխավորում այդ աշխատանքը։ Անհրաժեշտ է, վոր մեր բոլոր աղբոնոմները համակեն այն խանդակառությամբ, վորով վա-

բակված են մեր կոլտնտեսությունները, անհրաժեշտ է, վոր աղբոնոմները գլխավորեն մեր կոլտնտեսությունների լավ ու ողտակար նախաձեռնությունը և ողնեն կոլտնտեսություններին՝ ստանալու այնպիսի բերք, վորն այս խորհրդակցությանը նրանք խոստացան կուսակցությանն ու կառավարությանը։

Վերջապես մի քանի խոսք մեքենատրակտորային կայանի աշխատանքի մասին։ Պլանների կատարման ու բերքատվության բարձրացման գործում չափազանց շատ բան է կախված մեքենատրակտորային կայանների և կոլտնտեսությունների փոխհարաբերությունից։ Մի՞թե անցյալ տարի քիչ դեպքեր են յեղել, յերբ տրակտորներն աշխատել են խայտառակ ձևով, յերբ տրակտորները ժամանակին կոլտնտեսության այս կամ այն հողամասը չփոխադրելու հետեւանքով տապալվել են վարի կամ ցանքի ժամկետները։ Մի՞թե քիչ դեպքեր են պատահել, յերբ վարը կատարվել է յերեսանց ու կոչտերով, իսկ մեքենատրակտորային կայանների դիրեկտորներն այդպիսի յերեսութների կողքով են անցել։


Պայմանագրերի կատարման գործում փոքր նշանակություն չունի ժամանակին ու համապատասխան վերահսկողություններներնց իսկ կոլտնտեսությունների ու կոլտնտեսային բրիգադների կողմից։ Անհրաժեշտ է, վոր կոլտնտեսությունների բրիգադները տրակտորների աշխատանքի ընթացքում ամբողջ ժամանակ դաշտում լինեն և հետեւն տրակտորային պարկի աշխատանքին, աշխատանքի վորակին և ընդունեն անորակ կատարված աշխատանքը։

Գյուղատնտեսական արտադրության և բերքատվության բարձրացման գործում պակաս նշանակություն չունի աշխատանքի կազմակերպումը։ Յես ցանկանում եմ կանգ առնել միայն ողակների աշխատանքի վրա։ Մենք պետք է ամեն կերպ պայտարենք դիմապղկության դեմ, վորը գեռ մեծ տեղ է զբաղում մեր գյուղատնտեսական արտադրության մեջ և հարվածում է մեր աշխատանքի վրակին։ Պետք է բոլոր կոլտնտեսություններում կաղմակերպել մշտական ողակներ և գյուղատնտեսական աշխատանքի ամբողջ ժամանակաշրջանում նրանց ամրացնել վորչ հողամասեր։ Անհրաժեշտ է, վոր ողակն իր հողամասի համար պատասխանատու լինի հողը նախապատրաստելու մոմենտից սկսած, մինչև բերքահավաքի վերջը։ Անհրաժեշտ է նաև

կազմակերպել ինչպես ամբողջ բրիգադի, այնպես և ողակի աշխատանքի առանձին հաշվառում :

Յես կարծում եմ, վոր կատարելով ազգութեանիկայի բոլոր պահանջները, ուշադրություն դարձնելով աշխատանքի վորակին ու ժամանակին կատարելուն, լայնորեն ծավալելով մասսայական աշխատանքն ու մրցությունն առանձին շրջանների, կոլտնտեսությունների, բրիգադների և ողակների միջև, մեր կոլտնտեսություններում, բրիգադներում ու ողակներում արմատացնելով աշխատանքի ստախանովյան մեթոդները, մենք կարող ենք և պետք ե կատարենք բերքատվության բարձրացման վերաբերյալ ընկեր Ստայինին տված մեր խոստումը :

Անդրյերկոմի և նրա քարտուղար ընկ. Լավրենտիյ Բերիայի, Հայաստանի կոմկուսակցության Կենտրոնական կոմիտեյի բոլշևիկյան դեկավարությամբ թևակոխենք գարունը, հանուն միջին հաշվով հեկտարից 15 ցենտներ բամբակի (ծափեր) :



ԸՆԿ. Մ. ՅԵՆԳԻԲԱՐՅԱՆԻ ՃԱՌԸ

Մեր այս խորհրդակցության առանձնահատուկ նշանակությունն այն է, վոր դա հրավիրվել ե մի այնպիսի ժամանակ, յերբ Հայաստանը թևակոխին ե իր խորհրդայնացման 16-րդ տարին, մի տարի, վորը պետք ե լինի ստախանովյան տարի, վորը պետք ե հանդիսանա մեր մեծ առաջնորդ ընկեր Ստալինին տված խոստումների անթերի կատարման տարի :

Այս բոլորը, ընկերներ, խոշոր պատասխանատվություն ե գնում խորհրդակցությանը մասնակցող յուրաքանչյուր պատվիրակի վրա :

Այս վերջին յերեք տարվա ընթացքում մենք կարողացել ենք մեր բամբակենու բերքատվությունը կրկնապատկել՝ 1933 թվի 5,4 ցենտների փոխարեն՝ 1934 թվին մի հեկտարից ստանում 7,6 ցենտներ, իսկ 1935 թվին՝ 10,1 ցենտներ։ Այն ծրագիրը, վոր տրված ե յեղել մեզ, մենք գերակատարել ենք զգալի չա-

Գովզ: Վորոշ չափով կարողացել ենք բարձրացնել նաև բամբակի առաջին տեսակների քանակը:

Ըստ շրջանների՝ ընդհանուր պլանի կատարման տեսակետից առաջին տեղը բռնում է Ղամարլույի շրջանը, վորն իր պլանը կատարել է 121,25 տոկոսով (ծափեր), իսկ միայն կոլտնտեսությունների գծով այդ շրջանը պլանը կատարել է 123,9 տոկոսով: Ղամարլուն բերքատվության ծրագիրը գերակատարել է 13,73 տոկոսով, բայց տոկոսային հարաբերությամբ բոլոր շրջաններից հետ ե մենում իր հանձնած առաջին տեսակների բամբակով: Հոկտեմբերյան շրջանը, ընկերներ, վորը հանդիսանում է մեր բամբակացան ամենամեծ շրջանը,—այս տարի բռնում է յերկրորդ տեղը: Նա պլանը կատարել է 116,9 տոկոսով: Իր մյուս ցուցանիշներով (բերքատվությունը և տեսակը) տեղը զիջել է Վաղարշապատին, վորն ընդհանուր պլանը կատարել է 115,0 տոկոսով, գրամելով յերրորդ տեղը: Վաղարշապատի կոլտնտեսությունները պլանը կատարել են 122,6 տոկոսով՝ գրամելով յերկրորդ տեղը, իսկ բամբակի առաջին տեսակներով վաղարշապատը բամբակացան չորս շրջանների մեջ գրավում է առաջին տեղը (ծափեր): Հետո գալիս ե վեցու շրջանը, վորը համարյակը բոլոր ցուցանիշներով գրավում է վերջին տեղը:

Ահա, ընկերներ, ինչպես տեսնում եք, բացի մի շրջանից, մնացած բամբակագործական շրջաններն ունեն զգալի նվաճումներ:

Բայց մեր ամենամեծ նվաճումը և ամենամեծ հարստությունը հանդիսանում է այն, վոր կուսակցությունն անեցրեց նոր մարդիկ, բամբակի բարձր բերքատվության վարպետներ, կուսակցական և վոչ կուսակցական բոլշիկներ, վարոնք ցույց տվին տցիալիստական աշխատանիքի հիմնալի որինակներ: Այդ նվաճումներին մենք կարողացել ենք հասնել չնորհիվ այն բանի, վոր մեր աշխատանիքներում անշեղ կերպով դեկավարվել ենք մեր մեծ կուսակցության վորոշումներով, մեր աշխատանիքում կենսագործել ենք իմաստուն ցուցումները և կամքն այն մարդու, վորը հանդիսանում է կոլտնտեսականների լավագույն բարեկամը, վորը հանդիսանում է Լենինի մեծ գործի հանճարեղ շարունակողը, այն մարդու, վորի անունը մեր պայքարի դրոշն ե—մեր պողպատյա դեկավար, մեր հարազատ, մեր սիրելի, մեր մեծ ՍՏԱԼԻՆԻ

(ուրուն ծափեր, բոլորը վոտքի յեն կանգնում, «ուռաներ», ովացիաներ):

Մեր նվաճումները, ընկերներ, զգալի յեն, բայց մենք դեռ շատ ժիշ ենք ոգտագործում բարձր բերքատվության ուեզերվերը: Այժմ այդ հարավորություններն ոգտագործելու մասին է, վոր մտածում են լավագույն բամբակագործները, մեր մեծ հայրենիքի, մասնավորապես ստալինյան արշավի մեջ մտնող Ուզբեկստանի և Տաջիկստանի լավագույն բրիգադիրները: Հենց այս հանդամանքը մենք յելակետ պիտի ունենանք 1936 թվականի խնդիրների մասին խոսելիս: Վորոնչք են այդ խնդիրները:

ԱՌԱՋԻՆ ԽՆԴԻՐԸ—մարդկանց աշխատանքի լավագույն կազմակերպումն ու դասավորությունն է: Այս գործում գոյություն ունի դանդաղկոսություն: Շատ տեղերում դեռ բրիգադները և ողակները չեն կազմակերպված, հողամասերը չեն վորոշված: Իսկ միթե պարզ չե, վոր վորքան շուտ ողակը տեսնի և վորոշի իր հողակտորը, այնքան շուտ կակսի իսկական մրցումը:

Աշխատանքի կազմակերպման խնդրի կապակցությամբ անհրաժեշտ է կանգ առնել այն հիմնալի շարժման վրա, վորը մի ամբողջ եպոսա յե բնորոշում և, վորի մեջ ընդգրկվել ե մեր կոլտնտեսական մասսան: Խոսքս ստախանովյան շարժման մասին է: Կան մարդիկ, վորոնչք կարծում են, թե ստախանովյան շարժումը կարող է լինել միայն արդյունաբերության և տրանսպորտի մեջ, վորովհետեւ այնտեղ բարձր տեխնիկա կա, իսկ գյուղատնտեսության մեջ այնքան բարձր տեխնիկա չկա, ուստի և այստեղ ստախանովյան շարժումը դժվար է, հնարավոր չե ծավալել և այն: Սա, ընկերներ, սիալ, վիասակար տեսակետ է:

Ստախանովյան շարժումը գյուղատնտեսության մեջ տալիս է փայլուն արդյունքներ: Այդ դարագլուխ բաց անող շարժումը ծավալելն ու գլխավորելը մեր բոլոր կուսակցական կազմակերպությունների կարևորագույն խնդիրը պետք է լինի:

Պետք է ասել, վոր վորոշ դեկավերում ստախանովյան շարժման գոեհկացում և նկատվում: Այստեղ անհրաժեշտ է նորից վերհիշել այն սպառիչ բնորոշումը, վոր տվեց ստախանովյան շարժմանը Համեր(բ)Կ կենտրոնի դեկտեմբերյան պլենումը.

«Ստախանովյան շարժումը նշանակում է աշխատանքի կազմակերպում նոր ձևով, սեխնոլոգիական պրոցեսների ուսցինակացում, աշխատանքի նիշտ բաշխում արտադրության մեջ, վո-

բակյալ բանվորների ազատումը յերկրորդական, նախապատրաստական աշխատանիքներից, աշխատանիքի տեղի լավագույն կազմակերպում, աշխատանիքի արտադրողականության արագ աճման ապահովում, բանվորների ու ծառայողների աշխատավարձի զգալի աճման ապահովում»:

Ստախանովյան շարժման գոեհկացման փաստերը բացառիկ չեւ կարելի համարել: Այս կապակցությամբ պետք եւ ընդգծել, վոր առանց աշխատանիքի նորման վորոշելու, խոսք չի կարող լինել արտադրական նորմաների գերակատարման մասին և այդպիսի գեղքերում ստախանովյան շարժման եյության աղավազումն ու գոեհկացումն անխուսափելի յէ:

Ընկերներ, իհարկե, չի կարելի ստախանովյան շարժման բոլոր ձեւերը, վորոնք գոյություն ունեն արդյունաբերության և տրանսպորտի մեջ, մեխանիկորեն նույնությամբ տեղափոխել գյուղատնտեսության մեջ, վորովհետև գյուղատնտեսությունն ունի իր առանձնահատուկ կողմը. սակայն մի՞թե պարզ չէ, վոր ինչ բնագավառ ել վերցնելու լինենք՝ ստախանովյան մեթոդի եյությունը նույն ե մնում. դա աշխատանիքի արտադրողականության բարձրացումն է: Մենք մեր մեքենատրակտորային կայաններում արդեն ունենք ստախանովյան աշխատանիքի լավագույն նմուշներ: Վերցնենք Հոկտեմբերյանի մեքենատրակտորային կայանի հղկող տոկար Մուշեղ Հովհաննիսյանին: Աշխատանիքի տեխնիկային տիրապետելով, նա նորմայով սահմանված չորս ծնկաձև առանցքի փոխարեն որական հղկում է 10—11 առանցք և ամսական 300 ոռուբլու փոխարեն ստանում է 800—850 ոռուբլի:

Ստախանովյան աշխատանիքի փայլուն որինակներ ունենք նաև Լենինականի մեքենատրակտորային կայանում, վորտեղ կոմբայնավար ընկ. Գուրգեն Մարգանյանն իր կոմբայնը վերանորոգեց 48 աշխատանիքային ժամում՝ նախատեսված 110 ժամվագույնարեն: Շքանչանակիր տրակտորիստ ընկ. Ալեքսան Պոլոսյանը և Սպիրիդոն Տոնյանը վերանորոգման որական նորման կատարեցին 160 տոկոսով, տոկար ընկ. Գուրգեն Նազարյանն որվա նորման կատարել է 200 տոկոսով: Այստեղ ստախանովյան շարժմանը մեծ ոժանդակություն է ցույց տվել Հողժողկոմատի ինժեներ-մեխանիկ ընկ. Ալիս Մարգանյանը, ինչպես և տեղում աշխատող ավագ մեխանիկ Արծրունի Զատիկյանը:

Ընկերներ, այստեղ հարց է առաջ գալիս նորմաների մասին:

Պետք է ասել, վոր ինչպես արդյունաբերության մեջ, այնպես ել գյուղատնտեսության, նկատվում է զանդաղկոտություն մեր տնտեսական մարմինների և պրոֆմիությունների կողմից: Նրանք չափազանց հետ են մնում այս բնագավառում:

ՎԱՐԴԱԱՅԱՑԱՆ (տեղից) — Ճիշտ է:

— Ճիշտ է, սակայն դրան վերջ պետք է տալ: Մեր Հողժողկոմատը չի գլխավորում այդ շարժումը, այնինչ նա պետք է գլխավորի և նորմաները ժամանակին մշակի: Պետք է դործով ողնել մեր ստախանովականներին:

Ստախանովյան շարժումը մեր գյուղատնտեսության ասպարեզում սկսել է ծավալվել մեծ հաջողությամբ: Մենք ունենք լավագույն ստախանովականներ, և հարկավոր ե պայքարել այն բոլոր փորձերի դեմ, վորոնք գալիս են կաշկանդելու ստախանովյան շարժումը: Միաժամանակ պետք է պայքարել այն փորձերի դեմ, վորոնք այդ շարժումը գոեհկացնում են: Պետք է լավ հաշի առնել ստախանովյան աշխատանիքները, պետք է լուսաբանել ստախանովականների կատարած գործը, անհատ ստախանովականներից պետք է անցնել ստախանովյան ողակների, առանձին ստախանովյան որից պետք է անցնել ստախանովյան հնդորյակի, տասնորյակի և այլն:

ՅԵՐԿՐՈՐԴԻ ԽՆԴԻԲՐԸ՝ հողի մշակումն ու պարարտացումն է: Յես ցանկանում եյի ձեզ այստեղ հաղորդել մեր տեղական պարարտանյութերը դաշտ տեղափոխելու պլանի կատարման ընթացքն ըստ շրջանների, բայց գժրախտաբար մեր Հողժողկոմատից յես այդ թվերը չկարողաց ստանալ: Ստացածս թվերն այս խորհրդակցության ընթացքում յերեք անգամ փոփոխվեցին: Այս փաստը ցույց է տալիս, վոր թե՛ մեր Հողժողկոմատի ապարատը և թե՛ շրջանային մարմիններն անհրաժեշտ ուշադրություն չեն դարձնում այդ կարեոր գործին:

Աշնանավարի մասին: Ղամարլույի շրջանը չնայած կատարել է պլանի 95 տոկոսը, սակայն վարել է բամբակի բոլոր հողերի 49 տոկոսը միայն, մնացած 51 տոկոսը պետք է նոր վարի: Միմիայն Հոկտեմբերյան շրջանն է, վոր գերակատարել է իր պլանը (ծափեր). սակայն պետք է ասել, վոր նա ևս իր բամբակի բոլոր հողերի 76 տոկոսն է միայն վարել: Վեղին ամբողջ բամբակի հողերը վարել ե 75 տոկոսով, իսկ Վաղարշապատը,

Վորը վարի պլանը կատարել է 99 տոկոսով, վարել է իր բամբակի հողերի միայն 49 տոկոսը:

Սա ցույց է տալի, վոր այս ուղղությամբ մենք մեծ աշխատանք ունենք կատարելու: Իհարկե, ընկերնե՛ր, մենք վոչ մի դեպքում չենք կարող համաձայնել ընկ. Արշակ Հովհաննիսյանի հետ, վորը յերեկի կրկնելով վորոշ մասնագետների պատահական միտքը, մեզ զդուշացնում է «Հողի փոշիացման վասնդից»: Այն ժամանակ, յերբ գեռ մեր հողերի կեսն ենք վարել, փոշիացման խոդիր դնել այստեղ յես համարում եմ միանգամայն սխալ և վնասակար:

ՅԵՐՐՈՐԴ ԽՆԴԻԲԸ. — Յես կցանկանայի մի յերկու խոսք առել միջշարքային տարածությունների և տրակտորային ցանքի մասին: Ի՞նչ կասկած, ընկերնե՛ր, վոր այստեղ հիմնական յելակետը պետք է հանդիսանա բարձր բերքատվությունը: Իսկ բերքը կախված է վոչ միայն բամբակի թփերի քանակից, այլև կընդուղների քանակից և բամբակի կնդուղների քաշից: Տարակույս չկա, վոր տրակտորային ցանքն ապահովում է բամբակի նորմալ քվերի քանակը: 70 սանտիմետր միջշարքային տարածությունը միանդամայն ապահովում է թփերի քանակը (ծափեր): Ընկեր Ղարիբյանը միանդամայն սխալ է իր հաշիվներում: Յեվ, վերջապես, ինչո՞ւ չվերցնենք փաստերը:

Անցյալ տարի Նարիմանկույի կոլտնտեսության մեջ 50 հեկտար ցանվել եր տրակտորով՝ 70 սանտիմետր լայնությամբ. այդ հողամասից ստացվեց 13 ցենտներ, իսկ մնացած տեղերից, վոր ցանել եյին 55—60 սանտիմետր լայնությամբ, ստացվեց 9 ցենտներ: Յուվայի կոլտնտեսության նախագահ ընկեր Ներսես Սարգսյանն այստեղ կարող եր պատմել, թե ինչպիսի հարված ստացավ իրենց մոտ բամբակի բերքատվությունը միջշարքային տարածության արհեստական նեղացման պատճառով:

Պետք է խնամքով ցանել, այդ դեպքում կստանանք թփերի անհրաժեշտ քանակություն նաև 70 սանտիմետր լայնության վրա. ապա տրակտորային լավ մշակման չնորհիվ կստանանք փարթամ թփեր, ծանր կնդուղներ և մի քանի անդամ ավելի բերք, քան թե բազմաթիվ, բայց մոլախոտով խեղդված մանրմունը թփեր ունենալիս:

Այս տեսակետից միանդամայն վողջունելի յե Ղամարլույի դյուզատնտեսների այն առողջ պահանջը, վոր նրանք իրենց ա-

վագ գյուղատնտես ընկեր Սաշա Հովհաննիսյանի բերանով այս տեղ արին:

ԶՈՐՐՈՐԴ ԽՆԴԻԲԸ. Անդմարդության խնդիրն է: Այս տեղ չատ խոսվեց սերմնաբուծության մասին: Ընկեր Աբրումովը մանրամասն կանգ առավ այդ խնդրի վրա: Զի կարելի ժխտել այն հանդամանքը, վոր Հայաստանը սերմնաբուծության բնագավառում ունի խոչոր նվաճումներ: Սակայն հիմնականն այն է, վոր սերմնաբուծությունը լինի վոչ միայն մասնագետների ու զոնալ կայանների գործը, այլև դասնա բոլորիս գործը, դրանով պիտի ն գրադիտն շրջանի դեկալար կազմակերպությունները: Կոլտընտեսականներն իրենք ևս պետք է զբաղվեն այդ խնդրով:

ՀԻՆԴԵՐՈՐԴ ԽՆԴԻԲԸ. Զրի խնդիրն է: Այս տարվա տվյալները խոսում են այն մասին, վոր մենք պետք է աշխատենք ջրի յուրաքանչյուր կաթիլն ոգտագործել ռացիոնալ կերպով: Յեվ այդ հարցով հենց այսորվանից պետք է զբաղվենք:

ՎԵՅԵՐՈՐԴ ԽՆԴԻԲԸ. Մեր կադրերի և տեխնիկական ուսուցման խնդիրն է: Այդ ուղղությամբ մենք թույլ, չատ թույլ ենք աշխատել: Մեր մեքենատրակտորային կայաններում ունենք այնպիսի աշխատողներ, վորոնք լավ չեն տիրապետում տեխնիկային. որինակ՝ ունենք կուտիվատորիստներ, ցանողներ, տուրմանխատներ, վորոնք լավ չեն տիրապետում իրենց գործին: Կադրերի խնդրով մենք այժմյանից պետք է զբաղվենք: Պետք է առհասարակ այժմյանից մտածել վոչ միայն ցանքին, այլև մշակմանը նախապատրաստիլու բոլոր աշխատանքների մասին: Այս տարի չաետք է լինի այն դանդաղկոտությունը, վոր տեղի ուներ անցյալ տարի և հատկապես չպետք է լինի այն վնասակար հերթականության հիվանդությունը, վորով վարակված եյին շատերը թե՛ կենտրոնում և թե՛ շրջաններում:

Այստեղ ներկա յեն Հայաստանի բոլոր ազգությունների ներկայացուցիչները. այստեղ կան հայ, թուրք և տառի կոլտնտեսականներ, վորոնք հավաքվել և մեր կուտակցության ու կառավարության ղեկավարների հետ միասին քննում են կոլտնտեսային դաշտերի բերքատվության բարձրացման խնդիրները: Ազգերի այդ յեղբայրությունը, այդ համախմբվածությունը հետևանք է այն բանի, վոր մեղ մոտ, վոչ միայն Հայաստանում, այլ ամբողջ Միության մեջ և հատկապես Անդրկովկասում, մենք կարողացել ենք հաջողությամբ լուծել հեղափոխության կարեոր

Խնդիրներից մեկը՝ աղքերի յեղայրության խնդիրը։ Մեր աղջային համերաշխության, յեղայրական աշխատանքի լավագույն գրավականն է հանդիսանում Անդրկովկասյան Ֆեղերացիան։ Անդրկովկասյան Ֆեղերացիայի ուժն այն է, վոր այդ Փեղերացիան դեկավարում ե մեր կուսակցությունը, վոր այն դեկավարում ե Համկ(բ)Ա Անդրյերկոմը, վորի գլուխը կանգնած է փորձած, տոկուն բոլշևիկ, Ստալինի հավատարիմ աշակերտ, մեր բոլորիս սիրելի ընկեր Բերիան (բուռն ծափեր, «ուռա», բոլոր վոտի յեն կանգնում)։

Մենք արել ենք մեծ խոստում՝ 1936 թվականին հեկտարից տալ 15 ցենտներ բամբակ։ Մեծ աշխատանք է պահանջվում մեղնից։ Այս խորհրդակցությանն ամեն մի մասնակցող պետք է ակտիվ կերպով գլխավորի մասսաներին՝ կատարելու այդ խոստումը։ Մենք ունենք բոլոր պայմաններն այդ խոստումը կատարելու։ Մենք ունենք ամենամեծ նախապայմանը՝ կենդանի մարդիկ։ Աշխատենք, ընկերնե՛ր, վորպեսզի իսկապես արժանի լինենք այն մեծ վստահությանը, վոր բարձր պարգևներով ցույց ե տվել մեզ մեր կուսակցությունը, մեր մեծ ՍՏԱԼԻՆԸ (բուռն ծափեր)։



ԸՆԿ. Ն. ԳՈՒՐՂԻՆՅԱՆԻ ՃԱՌԸ
Հոկտեմբերյան շրջանի կուսշրջկոմի քարտուղար

Անկերնե՛ր, ընկ. Մամիկոնյանի և ընկ. Յենդիբարյանի յելույթներից հետո ինձ վոչինչ չի մնում ասելու։ Յես կավելացնեմ միայն այն, վոր Հոկտեմբերյանի կուսակցական և անկուսակցական բոլշևիկներն այս տարի ևս կուսակցության գեկավարությամբ կկատարեն այն մեծ խոստումը, վորը ավել և ընկ. Խանջյանը մեր մեծ առաջնորդ ընկ. ՍՏԱԼԻՆԻՆ։ Մենք ժամկետից չուտ և վորակով կտանք այնքան բամբակ, ինչքան առաջապրած և մեղ (ծափեր)։



ԸՆԿ. Գ. ՅԵՍԱՅԱՆԻ ՃԱՌԸ

Ղամարլույի կուսշրջկոմի քարտուղար

Նկերնե՛ր, այստեղ դրված հիմնական խնդիրներից յերկուսի մասին այս խորհրդակցությունը պետք է իր վճռական խոսքն ասի: Դրանցից առաջինն այն տեսնենցն է, վոր կա ինչպես մեր գյուղատնտեսական կաղղերի և ղեկավարների, նույնպես և Յերևանի ընկերների մեջ, թե՝ մեզ մոտ՝ Հայաստանում բամբակի մշակման մեքենայացում չի կարելի կատարել, թե մեքենայացումը կարելի յե կատարել միայն բամբակի լայնածավալ դաշտերում, ինչպիսիք են՝ Աղրբեջանի դաշտերը և այլն: Այստեղ, այսոր մեր ավագ գյուղատնտեսը փաստերով ասաց, վոր մեքենայացումը հնարավոր ե նաև մեր բամբակի դաշտերում և վոր մեքենայացման դեպքում բերքը շատ ավելի բարձր է լինում, քան այն դեպքում, յերբ ձեռքով ե կատարվում այդ աշխատանքը: Որինակ՝ Թաղաղյուղում մեքենայացման չնորհիլ ստացվել է միջինը 17 ցենտներ բերք: Բոլոր գյուղերում, վորտեղ ցանքը կատարել են տրակտորով և կուլտիվացիայով, այնտեղ, առանց բացառության, բերքը բարձր է յեղել, և սա այն պայմաններում, յերբ միջարքային տարածությունը 60 սանտիմետրից պա-

կաս չի յեղել: Յես կարծում եմ՝ այսոր այս խորհրդակցությունը պետք է դա այն յեղրակացությանը, վոր բամբակի տրակտորային ցանք հնարավոր է կատարել նաև Հայաստանում:

Ընկերնե՛ր, մեր շրջանի բամբակի միջին բերքը յեղել է 11 ցենտներ, իսկ մի քանի կոլտնտեսություններ և բրիգազներ տվել են 17 և կես ցենտներ: Շրջանի միջինը ցածր է յեղել այն պատճառով, վոր մի շարք գյուղեր չափազանց ցածր բերք են տվել և իջեցրել լրջանի բերքատվությունը: Դրանք հետևյալ գյուղերն են՝ Նարիմանլու, Հաջի-Եղլազ, Նեղըլու և Այգեստան: Մրանք քաղհանը և մի շարք աշխատանքներ ժամանակին չեն կատարել, ամեն ինչ ցանկացել են կատարել ձեռքով, և հնարավոր չի յեղել ցանքի ու մշակման աշխատանքները ժամանակին ավարտել, իսկ այդ աշխատանքները ժամանակին չափարտելն, իր հերթին, իսկել ե բերքատվության բարձրացմանը: Մի՞թե այս փաստերը չեն ասում այն մասին, վոր պետք է անցնենք աշխատանքների մեքենայացմանը: Մի՞թե սա չի համոզում մեր ընկերներին, վոր մշակումը տրակտորով կատարելը բարձրացնում է բերքատվությունը: Այսոր մենք մեր առաջ խնդիր պիտի դնենք՝ տեղերը վերադառնալիս հասկացնել հետամնաց գյուղերին, վոր անհրաժեշտ ե աշխատանքները մեքենայացնել: Մեր խնդիրը պետք է լինի այն, վոր մեր ստախանովականներն իրենց հետեւց տանեն նաև հետամնաց գյուղերը:

Այստեղ խոսվեց բամբակի ջրի մասին: Իհարկե, ընկերներ, շատ ջրելն ել ե վնաս, քիչ ջրելն ել. ամեն ինչ, յերբ սահմանից անցնում է, վնաս է: Ամենադլխավորն այն է, վոր պետք է ջրելիս ջուրը հասցնել բոլոր մարդերին: Մենք ունենք յերկու գյուղ՝ Արտաշատը և Ղարաղպալը, վորոնք այդպես են վարվում: Ղարաղպալում մի հեկտարից յերկու և կես ցենտներ ավելի բերք ե ստացվել: Արտաշատը գործն այնպես է կազմակերպել, վոր ջուրն առաջին մարդերից հասնում է մինչև ամենավերջին մարդերը, և ընկեր Գալուստն այսպիսի լավ աշխատանքով ստացել ե հեկտարից 34 ու կես ցենտներ բերք: Ուրեմն, պետք ե պայմաններ ստեղծել, վորպեսզի ջրից ամեն մի բույս հավասարաչափ ողովի:

Բամբակի մի շարք դաշտերում մենք տեսնում ենք բարձր աճած և դրա կողքին ցածր աճած բամբակենի: Նշանակում ե՝ մի տեղ բաշարար ջուր և հասել, մյուս տեղը՝ քիչ: Պետք ե

հաշվի առնել այս հանդամանքները և մեծ ուշադրություն դարձնել մարգոցների և ջրողների վրա, վորովհետև նրանից շատ բան է կախված լավ բերք ստանալու համար:

Ընկերներ, այստեղ ասացին, վոր ստախանովյան շարժումը գյուղատնտեսության մեջ խոչըր հնարավորություններ ունի զարգանալու դրա համար անհրաժեշտ և ունենալ ճիշտ նորմաներ: Մեր առաջավոր կոլտնտեսուհի ընկեր Վարդուշն առաջ, վոր մեր գյուղում կոլտնտեսություններն իրենց պլանները կատարում և գերակատարում եյին. կոլտնտեսականների 70 տոկոսը գերակատարում եր առաջադրանքը: Այդ ցույց ե տալիս, վոր մենք պետք ե վերանայենք մեր նորմաները: Իրոք, մենք ի՞նչ եցինք տեսնում: Շատ կոլտնտեսականներ իրենց նորմաները կատարելուց հետո՝ շուտ եյին վերադառնում դաշտից. յերբ հարցնում եյին, թե ինչո՞ւ յեք շուտ վերադառնում, նրանք պատասխանում եյին՝ ի՞նչ եք ուղղում մեզնից, մենք նորմաները գերակատարել ենք: Ուրեմն, ոս գալիս ե ասելու, վոր մենք պետք ե վերանայենք նորմաները՝ հիմք ընդունելով հարվածայինի միջին աշխատանքը: Յեվ յես կարծում եմ, այժմյանից ևեթ պետք ե ձեռնարկենք այդ աշխատանքը:

ԽԱՆՁՑԱՆ. — Ո՞վ պետք ե վերանայի:

ՅԵՍԱՅԱՆ. — Կոլտնտեսությունների արտադրական խորհրդակցությունները. որինակ՝ Հովհաննես Շահբաղյանը տվել ե նորմաներ, նա 5 լիտրը (վոր համարվում եր մի աշխոր) դարձրել ե 7 և կես, վորը դառնում ե 1,25 աշխոր, իսկ նոսրացումը նույնն ե պահել, վորովհետև դա շատ պատասխանատու դորժե: Սակայն նորմաները վերանայելիս չպետք ե մոռանանք, վոր աշխատավարձի բնագավառում պետք ե մնա պլոտքեսիվ սկզբանքը, և կոլտնտեսականը չպետք ե ավելի պակաս ստանա, քան մինչ այդ ստացել ե: Հիմք ընդունելով միջին հարվածային կոլտնտեսականի նորման, մենք պետք ե անցնենք նոր նորմաների: Ահա այս կոնկրետ աշխատանքով՝ պետք ե զբաղվի յուրաքանչյուր կոլտնտեսություն, յուրաքանչյուր ողակ, իհարկե, աչքի առաջ ունենալով յուրաքանչյուրի առանձնահատուկ հողային պայմանները:

Յերբ խոսում ենք 1936 թվին բերքատվության վճռական բարձրացման մասին, պետք ե դնենք նաև այն հարցը, թե ի՞նչ պես պետք ե մոտենան մեր կենտրոնական մարմինները մեր կոլ-

տնտեսականների պահանջներին: Հեշտ բան չե ստորագրել 30 յենտների տակ. կոլտնտեսականները պայքարելու յեն դրա համար և նրանց այդ պայքարում պետք ե լայն աջակցություն ապահովել՝ առաջնորդին չերթին չոռի դեմ մղվող պայքարում: Զպետք ե մոռանալ, վոր չոռի դեմ պայքարը հաճախ չափազանց ուշ ե սկսվում: Յերբ չոռն սկսվում ե, շրջգործկոմի նախադահները, կոլտնտեսության նախադահները, բրիդադիրները վազվում են դես ու դեն մեքենա ճարելու: Այդ մեքենաներից մենք չունենք, մաշվել են դրանք. այժմ հնարավոր ե և պետք ե նորերն ստանալ:

ՄԵՆՔ չունենք նույնպես տրակտորային շարքացաններ: ԽԱՆՁՑԱՆ. — Յեղածը նորոգեք:

ՅԵՍԱՅԱՆ. — ՄԵՆՔ չունենք, վոր նորոգենք:

ԽԱՆՁՑԱՆ. — Չեզ հայտնի յե, վոր մինչև ցանքի վերջը նոր շարքացան չենք:

ՅԵՍԱՅԱՆ. — ՄԵՆՔ պաշտոնապես հայտնի չե: Յեվ վերջապես, մեզ հարկավոր են մեքենաների մանր մասեր, և յես կարծում եմ, վոր մեր մեխանիկական դործարանն այժմյանից պետք ե անցնի այդ աշխատանքներին:


Ընկերներ, բամբակի բնագավառում ձեռք բերված հաջողություններն առաջնորդին հերթին պարտական ենք այն բանին, վոր ստալինյան կանոնադրությունն ենք կիրառում: Ապա բամբակի մասին կենտկոմի և ժողկոմիուրի վորոշումը խոչոր շահագրգություն ստեղծեց բամբակագործների մեջ և մեծ չափով նպաստեց նրանց տնտեսական դրության բարելավմանը: Մեր շրջանը հայտնի յե հարուստ կոլտնտեսություններով: ՄԵՆՔ ունենք միլիոնատեր կոլտնտեսություններ: Բամբակագործությունն ու այդեգործությունն ուժեղ թափով բարձրացնում են մեր կոլտնտեսականների նյութական բարեկեցությունը:

Ընկերներ, յես պետք ե ասեմ, վոր նոր գյուղի պլանավորմանը, նոր տների կառուցմանը վոչ մի շրջանում անհրաժեշտ ուշադրություն չի դարձվում: Շինարարությունները կատարվում են անպլան: Ժամանակն ե, վոր կոլտնտեսության դեկավարները մտածեն, թե իրենց կոլտնտեսության անդամն ինչպիսի տուն պետք ե կառուցի, այդ կառուցած տունն ինչպիսի պատուհաններ պիտի ունենա և այլն: Մի խոսքով, յելնելով այսորվա մեր պայմաններից, պետք ե մինիմալ պահանջներ դնել

այդ կառուցվող շենքերի նկատմամբ և միայն դրանից հետո
պետք է թույլ տալ կոլտնտեսականներին նոր տներ կառուցելու :
ԶԱՅՆ ՏԵՂԻՅ. —Ճիշտ ե :

Այս բոլորի մասին պետք է մտածենք բոլորս, վորպեսզի այն
հսկայական գումարները, վոր մեր պետությունը տալիս է մեր
գյուղացիներին՝ ուրախ և կուլտուրական կյանք վարելու հա-
մար, իսկապես իրենց նպատակին ծառայեցնենք և կարճ ժամա-
նակում ունենանք կուլտուրական գյուղեր :

Ի վերջո, ընկերնե՛ր, յես վստահ եմ, վոր 1936 թվականը
ստախանովյան տարի դարձնելով մեր գյուղատնտեսության մեջ՝
մեր բամբակագործ կոլտնտեսականները բուհեկյան գործի կվե-
րածեն միջինը 15 ցենտներ բամբակ տալու մասին մեծ առաջ-
նորդին տրված խոստումը (ծափեր) :



Ա. Խանջյան

ԸՆԿ. Ա. ԽԱՆԶՅԱՆԻ ՃԱՌԸ

Ակերնե՛ր, բամբակագործության խնդիրները Հայաստանում մեր այս խորհրդակցությանը գրվեցին այնքան պարզ ու սպառիչ, վոր ինձ մնում է միայն մի քանի յեղբակակիչ գիտություններ անել:

Հայաստանի բամբակացան շրջանների կոլտնտեսականներն անցյալ տարի, 1935 թվին, պետությանը հանձնեցին 18.200 տոնն բամբակ: Դրա գիմաց նրանք ստացան 35 ու կես միլիոն ռուբլի, վորից մոտ վեց միլիոն ռուբլի՝ վորպես պարզեհավելում՝ ստացան այն կոլտնտեսությունները, վորոնք գերակատարեցին պետությանը բամբակ հանձնելու իրենց պայմանագրերը: Այս խոշոր գումարից բացի, բամբակացան շրջանների կոլտնտեսականներն արտօնյալ և եժան գներով ստացան 11.000 փութ բամբակի յուղ, 25.000 փութ քուազ և 700 փութ զտած բամբակ: Միայն այս մի քանի թվերը բավական են՝ ցույց տալու համար մեր բամբակացան կոլտնտեսականների բարեկեցության բարձրացումը, նրանց նյութական դրսության ամրացումը, նաև այն, թե ինչքան նպաստավոր է մեր կոլտնտեսականների համար բամբակի մշակույթը, թե ինչքան ձեռնտու յեն կոլտնտեսականների

համար այն պայմանները, վոր մշակել են մեր կուսակցությունը՝ և կառավարությունը՝ բամբակագործ կոլտնտեսականների և բամբակ մթերող որդանների փոխարարերությունները և փոխադարձ պատասխանատվությունը վորոշելու համար։ Առանց չափազանցության կարելի յե ասել, վոր գյուղատնտեսական բոլոր մշակույթների մեջ իր բարձր գնով կոլտնտեսականների համար նյութական բարեկեցության ամենանպաստավոր պայմաններ ստեղծելու տեսակետից առաջին տեղը բռնում է բամբակի մշակույթը։ Վոր այդ այլպես է, վոր բամբակի դեմ մի ժամանակ տեղ-տեղ նկատվող տրամադրությունները պատվաստվում եյին ժողովրդի թշնամիների կողմից, կուլակների կողմից, այդ այսոր արևի պես պարզ ե բոլոր կոլտնտեսականների և բոլոր կոլտնտեսուհիների համար։

Բայց այն, ինչ վոր ստացան մեր բամբակացանները 1935 թվին, վերջնական սահմանից ու հնարավորություններից շատ հետ և մնում։ Բամբակի միջին բերքատվությունը Հայաստանում 1935 թ. 10 ցենտներից մի քիչ միայն անցավ, մինչդեռ ներկա խորհրդակցությանը մասնակցող բոլոր կոլտնտեսությունները տվին շատ ավելի բարձր բերք՝ հանրապետական միջին բերքատվության համեմատությամբ։ Հայտնի յե բոլորիդ՝ Թոխանչալույի բրիգադիր ընկ. Շահբաղյանը, վոր բոլշևիկորեն կատարեց իր խոսոումը, հասցենով բամբակի բերքն իր բրիգադում 20 ցենտների։ Հայտնի յե Գյորգյումբեթի կոլտնտեսության նախադաշնական ընկեր Ալիյեվը, վորի կոլտնտեսության միջին բերքատվությունը կազմում է 18,8 ցենտներ։ Ընկ. Ղարիբյանը՝ վերին Խաթունարխից՝ ստացավ 16 ցենտներ, ընկեր Վարդուշ Շահինյանը՝ Քալարայից՝ 17,89 ցենտներ, ընկ. Արփիկ Խաչատրյանը՝ Բամբակաշատից՝ 14 ցենտներ, ընկ. Այլազյանը՝ Զոհրաբլույից՝ 26 ցենտներ, ընկ. Շուշան Հախվերդյանը՝ 23 ցենտներ և այլն, և այլն։ Կարելի յե շատ յերկարացնել բամբակի բարձր բերքատվության առաջավորների այս ցուցակը։ Բայց արդեն բերված որինակները բավական են, վորպեսդի բոլորն ել համոզվեն, վոր Հայաստանի բամբակացան կոլտնտեսականները կարող են 1936 թվին շատ ավելի, թերևս նույնիսկ կրկնապատիկ յեկամուտ ունենալ, պայմանով, վոր բոլորն ել աշխատեն վերոհիշյալ առաջավորների պես, հասնեն բամբակի բերքատվության նրանց մակարդակին։ Իսկ վոր այդ հնարավոր

ե՝ այդ մասին կասկած չի կարող լինել։ Առաջավորների բարձր բերքատվության միակ «գաղտնիքը», —ինչպես այստեղ պատմեցին այդ մասին ընկերները, —բամբակի լավորակ մշակումն և բարեխիդն աշխատանքով և ուրիշ վոչինչ։

Մեր նպատակն ե՝ և մեր մեծ առաջնորդ ընկեր Ստալինը չեցտեց հատկապես այդ հանդամանքը, —առաջիկա 1—2 տարում կրկնապատկել բամբակի բերքատվությունը Հայաստանում։ Այդպիսով, կրկնապատկել և յեռապատկել բամբակացան կոլտնտեսականների յեկամուտը, բարձրացնել նրանց բարորությունը, բարելավել նրանց նյութական և կուլտուրական դրությունը։

Յելնելով այս հիմնական նպատակից՝ այս տարի, 1936 թվի համար մենք գործնական խնդիր ենք դնում։

Առաջին՝ Խորհրդային Միության մեջ ամենից շուտ ավարտել պետությանը բամբակ հանձնելու պլանը, յերկրորդ՝ տալ բամբակ բարձր վորակով, յերրորդ՝ տալ բամբակի ամենաբարձր բերքը Խորհրդային Միության մեջ, միջին բերքատվությամբ հասնելով ուղբեկներին։

Միայն մեր բամբակագործության պայմաններին անտեղյակ մարդիկ կամ թերահավատ ոպորտունիստները կարող են կասկածել, վոր առաջադրված այս ծրագիրը գործնական կամ իրագործելի չե։ Մեր բամբակացան շրջանների հողն ամենաբերին ե և ապահովում է, լավ մշակման պայմանով, բամբակի ուեկորդային բերք։ Բամբակենին ջրով ապահովված է։ Մենք ունենք մեր պայմաններին համապատասխան լավ սերմացու։ Ունենք լավ ու բարձր տեխնիկայով զինված մեքենատրակտորային կայաններ։ Ունենք գյուղատնտեսական փորձված և կոլտնտեսական կարգերին նվիրված կադրեր, լավ մասնագետներ։ Ունենք աշխատանք և բարեխիղճ կոլտնտեսականներ և կոլտնտեսուհիներ, վորոնք գիտեն, վոր իրենց աշխատանքով և միայն կոլտնտեսական աշխատանքով կարող են բարձրացնել իրենց բարեկեցությունը։ Մնում ե բոլշևիկյան զեկավարություն և կազմակերպվածություն՝ այս լայն հնարավորություններն իրականություն դարձնելու համար։ Կասկած չկա, վոր բամբակացան շրջանների կուսակցական կաղմակերպությունները կապահովեն և այս հիմնական պայմանը։

Յելնելով այս բոլորից՝ մենք կոչ ենք անում Հայաստանի բոլոր բամբակացան կոլտնտեսություններին՝ աշխատել այս

րի այնպես, վորպեսզի ամեն մի կոլտնաեսություն ցանված ամեն մի հեկտարից ստանա 15 ցենտներից վոչ պակաս բամբակ։ Ինչ վերաբերում ե առաջալորներին, գեռ անցյալ տարի 15 և ավելի ցենտներ միջին բերք ստացած կոլտնաեսություններին, ապա նրանք այնպես պետք ե աշխատեն, վոր հասնեն Ուղբեկստանի ամենասությավոր վարպետների բերքատվության։

Այսպես ե դրվում խնդիրը։

Ի՞նչ պետք ե անել, վորպեսզի այս խնդիրը հաջողությամբ լուծենք, վորպեսզի մեր խոստումները թղթի վրա չմնան։ Ի՞նչ պետք ե անել, վորպեսզի բամբակացան կոլտնաեսականի խոսքի և գործի մեջ հակասություն չլինի։ Պետք ե ամենից առաջ, լայն ոգտագործելով այս տարվա կլիմայական բարենպաստ ոլայմանները՝ սկսել վարը։ Գործի դնել բոլոր տրակտորները և քաշող ուժը, հերկել խորը և լավ վորակով, չթողնել վոչ մի կոշտ, չթողնել չփխրեցված տեղեր, ավելորդ թմբեր, բլրիկներ, անկյուններ։ Մինչև ազրիլի 10—15-ը բամբակի տակ առնվելիք 18.000 հեկտար հողը պետք ե ամբողջապես պատրաստ լինի, հերկված, չափված։

Հերկված և հերկող հողերը պետք ե լավ մաքրեն քարերից, մոլախոտերից, սեղից, բամբակենու անցյալ տարվանից մնացած ցողուններից։

Պետք ե անմիջապես սկսել պարարտացման գործը. դաշտ տեղափոխել տեղական պարարտանյութերը, անպայման և խոչոր չպիով գերակատարել չողժողկոմատի տված, իմ կարծիքով, նվազագույն պահանջներին ել չհամապատասխանող պլանը։ Տեղափոխել ՄՏԿայաններից քիմիական պարարտանյութերը և հողի հետ խառնել մասնագետների խորհրդով և նրանց վորոշած ժամկետներին։ Պետք ե անմիջապես ծավալել և մինչև մարտի սկիզբը ավարտել բոլոր առուների մաքրման ու նորոգման աշխատանքները, վորպես պարարտանյութ ոգտագործելով առուներում կուտակված տիղմը։

Պետք ե չողժողկոմատի հանձնարարած ժամկետներին ստանալ և մեկ առ մեկ զտել բամբակի սերմացուն։

Պետք ե այժմվանից նախապարտաստել, նորոգել բամբակի մշակման և բուժման վողջ ինլենտարը, բոլոր գործիքները, մասնավորապես ապահովել բոլոր չրջանները քեթմեններով (համապատասխան ձեռի, մեծության և լավ կոթերով)։

Պետք ե ուրեմն այս բոլոր աշխատանքներն ավարտել ժամանակին, ապրիլի 20—25-ին՝ գյուղատնտեսների խորհրդով և նրանց նշանակելիք ժամկետում, սկսելու համար ցանքը և վերջացնելու մինչև մայիսի 5—10-ը, նույն այս ժամկետում տալով նաև առաջին ջուրը։

Ամեն մի կոլտնաեսություն, բրիդադ և ողակ պետք ե մեկ առ մեկ հետեւի, չափի և ստուգի, վորպեսզի ցանված և ծլած բամբակի տարածությունն իր կոլտնաեսությունում, բրիդադում և ողակում պլանով սահմանված չափից վոչ մի թիզ պակաս չլինի։

Ահա մոտավորապես այն գլխավորը, վոր պետք ե անպայման կատարել բամբակի գծով՝ առաջիկա 1—2 ամսում։ Պատրաստություն են արդյոք մեր շրջանային կազմակերպությունները, մեր ՄՏԿ-ները՝ բամբակացանման նոր սեղոնը կազմակերպված սկսելու։ Վո՛չ։ Դժբախտաբար, դեռ հետ են մնում։

Վաղարշապատի ՄՏԿայանը տրակտորների նորոգման պլանն առաջմ կատարել և միայն 21 տոկոսով. ավելի վատ և գութանների, շարքացանների և այլ մեքենաների նորոգման գործը։ Շատ չի տարբերվում դրությունը Ղամարլույի և Հոկտեմբերյան շրջանների ՄՏԿ-ներում։ Ջրային ցանցի նորոգման գործն սկսեց միայն յերեք որ առաջ, մինչդեռ կարելի յեր սկսել ավելի շուտ։ Քիմիական պարարտանյութը ժամանակին չի տեղափոխվում։ Տեղական պարարտանյութն ել առաջմ տեղափոխում են վոչ բոլոր կոլտնաեսությունները։

Այսպիսի դրությունը պատիվ չի բերում վո՛չ մեր կոլտընտեսականներին, վո՛չ ՄՏԿայաններին, վո՛չ գյուղատնտեսներին, վո՛չ ել կուսկազմակերպություններին։ Վերացնենք հենց առաջին որերից այս ամոթալի հետամնացությունը և անկազմակերպությունը, ընկերներ՝ լայն ծավալներ մրցակցությունը, իսկական, սոցիալիստական մրցակցությունն ողակների, բրիդադների, կոլտնաեսությունների, ՄՏԿայանների և շրջանների միջև, սիստեմատիկ կերպով ստուգենք մրցակցության արդյունքները, մասսայականացնենք լավերի, առաջավորների փորձը, առաջ մղենք հետ մնացողներին՝ կատարելու համար մեր պարտքը, առաջապես համար մեր հանդիսավոր խոստումների իրականացնելումը։

Հողժողկոմատը և ՄՏԿայանների ղեկավարները պետք ե

մասնավորապես ամենակարծ ժամանակում ավարտեն տրակտորների և բոլոր մեքենաների նորոգման գործը և դաշտ ուղարկեն բոլոր տրակտորները:

Զափազանց կարևոր է, — և այստեղ այդ մասին մանրամասն խոսվեց, — բամբակի ցանքի և մշակման աշխատանքները լայն չափով մեքենայացնելու խնդիրը: Անցյալ տարի այս գործը մեզ մոտ ըստ եյության տապալվեց, չորհիվ այն բանի, վոր կոլտնտեսությունների և շրջանների, ինչպես նաև Հողժողկոմատի ընկերների մեծ մասը տուրք տվեց այս խնդրում հակամեքենայական, կոնսերվատիվ տրամադրություններին: Բամբակի տրակտորային ցանքի և տրակտորային կուտիվացիայի պլանը, հաստատված միութենական որդանների կողմից, այս տարի պետք է անպատճառ կատարվի: Ինչ վերաբերում է բամբակենու միջարքային տարածության, ապա այդ պետք է վորոշել, յեւնելով ամեն մի հողամասի կոնկրետ պայմաններից, հաշվի առնելով ունեցած տրակտորների և մշակման գործիքների պահանջները: Զպետք է վախենալ միջարքային տարածությունների լայնացումից 60-ից մինչև 70 սանտիմետր, քանի վոր, ինչպես ցույց տվեցին ընկ. Յենդիբարյանը և մյուսները, միջարքային նույնիսկ այդպիսի տարածությունը հնարավորություն է տալիս հեկտարի վրա ունենալ պահանջվող քանակով բամբակենութիւնը: Մշակման աշխատանքների մեքենայացումը կհեշտացնի մեր կոլտնտեսությունների դրությունը, հնարավորություն կտաժամանակին ավարտել բոլոր աշխատանքները և համաչափ ողտագործել կոլտնտեսականների աշխատանքը բոլոր մշակույթների համար:

Ընկերներ, այս որերս լրանում է կոլտնտեսությունների ստալինյան կանոնադրության առաջին տարին. մի տարի յեւ արդեն, վոր մեր կոլտնտեսություններն աշխատում են այդ կանոնադրության հիմունքներով. կազմակերպում են իրենց նոր կյանքն ու տնտեսությունն ստալինյան կանոնադրության խմասուն և ամուր հիմունքներով: Անցյալ տարի մեր կոլտնտեսությունները, մանավանդ բամբակացան կոլտնտեսություններն ունեցան զգալի հաջողություն, ամենից առաջ՝ չնորհիվ նոր կանոնադրության կիրառմանը: Այժմ խնդիրը դրվում է այնպես, վորպեսողի մեր բոլոր կոլտնտեսությունները նախապատրաստեն և կազմակերպեն գարնահացանը, ճշտիվ դեկավարվելով ստալինյան

կանոնադրության պահանջներով: Ինձ թվում ե, վոր անգամ մեր առաջավոր կոլտնտեսությունները վեռ ինչպես վոր պետքն է չեն կիրառում ստալինյան կանոնադրության բոլոր կետերը և պահանջները, խոշոր թերություններ ունեն աշխատանքի կազմակերպման, հաշվետվության, բերքի ճիշտ բաշխման գործում և այլ ճյուղերում: Մինչդեռ պարզ պետք ե լինի բոլորին, վոր 1936 թվի բարձր բերքատվության և նոր հաջողությունների հիմնական բանալին կոլտնտեսության ստալինյան կանոնադրության բոլոր կետերն անխտիր ու ճշտիվ կատարելու մեջն ե:

Ընկերներ, նոր տարին, 1936 թիվը, Խորհրդային Միության մեջ ինչպես արդյունաբերության, այնպես ել գյուղատնտեսության բնագավառում սկսվեց ստախանովյան շարժման նշանաբանի տակ: Վաղը ստալինյան կանոնադրության առաջին տարեդրձը հավերժացվում է Խորհրդային Միության մեջ՝ բոլոր կոլտնտեսություններում կազմակերպելով ստախանովյան որ (ծափեր):

Հայաստանի բամբակացան կոլտնտեսությունները վաղն այնպես պետք ե աշխատեն, վորպեսի ստախանովյան որվա ցուցանիշները հիմք ծառայեն աշխատանքի և արտադրողականության ավելի բարձր նորմաներ սահմանելու: Ստախանովյան առաջին որին՝ գյուղատնտեսության մեջ պետք է հետեւն ստախանովյան 5-որյակները, 10-որյակները, ստախանովյան ամիսները: Գարնանացանն սկզբից մինչև վերջ մենք պետք է կազմակերպենք և ավարտենք ստախանովյան մեթոդներով, բարձր արտադրողականության, բարեխիղճ աշխատանքի ամենաբարձր ցուցանիշներով: 1936 թիվը պետք է գառնա իսկական ստախանովյան տարի:

Մեր խնդիրն ե, ընկերներ, մեր հիմնական նպատակն ե բարձրացնել մեր յերկրի աշխատավորների բարեկեցությունը, մեր կոլտնտեսականների բարեկեցիկ կյանքը հասցնել ավելի բարձր աստիճանի, ավելի կուլտուրական աստիճանի: Մենք ունենք բոլոր պայմանները՝ կատարելու համար այս մեծ գործը, մեր առաջ բաց են բոլոր ճանապարհները, վորպեսի այս իսկ տարի, 1936 թվին, իսկական թոփչք կատարենք կոլտնտեսությունների տնտեսապես ամրացման, կոլտնտեսականների ունելով կյանքի բարձրացման գծով: Ամեն ինչ կախված է ձեզնից, ընկերներ: Կուսակցությունը, կառավարությունը, մեր մեծ ուսուցիչն ու առաջնորդը տվել են բոլոր հնարավորություններն ու

միջոցները, վորպեսզի աշխատավոր գյուղացին, աշխատավոր կոլտնտեսական գյուղացին կարճ ժամանակամիջոցում վերջ տա այն հետամնացությանը, վորը դեռ մինչև այժմ ել տիրում է մեր գյուղում, վորպեսզի կոլտնտեսականները դուրս գան իրենց հին, ամեն տեսակետից անհարմար խճճիթներից, ապրեն կուլտուրական բնակարաններում, վորպեսզի մեր գյուղը ծածկվի նոր, կուլտուրական շենքերով, դպրոցական շենքերի, ակումբների, թատրոնների, ծննդակայանների, մասուրների նոր խիտցանցով, վորպեսզի մեր գյուղից վերանան հիվանդությունները, վորպեսզի առողջ և աշխատունակ լինեն բոլոր կոլտնտեսականներն ու կոլտնտեսուհիները, վորպեսզի մենք ունենանք առողջ, կենսունակ կոլտնտեսական սերունդ : Խնդիրը նրանումն ե, վորբոլոր կոլտնտեսականները և կոլտնտեսուհիները բարեխիղմ, գետակից, նվիրված աշխատանքով գործի դնեն բոլոր միջոցները, գործի վերածեն մեր կուսակցության առաջնորդ, ժողովրդի հայր՝ ընկեր ՍՏԱԼԻՆԻ ցուցումները (ծափեր) :

Ընկերներ, յես չեմ կասկածում, և թող վոչ վոք չկասկածի, վոր Հայաստանի բամբակացան շրջանների կոլտնտեսականներն ու կոլտնտեսուհիները հենց վազվանից գործի կանցնեն և կաշխատեն այնպես, վոր իրավունք ունենան 1936 թվի նոյեմբերի 7-ին զեկուցելու մեջ առաջնորդ ընկեր ՍՏԱԼԻՆԻն և Անդրեակասի բոլշևիկների հմուտ զեկամլար ընկ . ԲԵՐԻԱՅԻՆ, թե կովկասի բոլշևիկների հմուտ զեկամլար ընկ . Այս գերածում իրենց ներկայացուցիչների տված բոլոր խոստումները (ծափեր) :

Ուրեմն, ընկերներ, դեպի գործ, դեպի յեռանդուն կոլտնտեսական աշխատանք՝ հանուն 15 ցենտներ բամբակի միջին բերդատվության Հայաստանում :

Հանուն առաջավոր կոլտնտեսությունների 25—30—35 ցենտներ բամբակի բերքատվության :

Կեցցե՛ մեծ ՍՏԱԼԻՆԸ :

Կեցցե՛ն կոլտնտեսական ստախանովականները :

(Ծափեր, ովացիա) :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԱՎՈՐ ԲԱՄԲԱԿԱՑԱՆՆԵՐԻ
ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՎՈՂԶՈՒՅՆՆ
ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԻՆ

ԹԱՆԳԱԶԻՆ ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆ.

Հայաստանի առաջավոր բամբակացանների հանրավետական խորհրդակցությունը զերմագին վողջույն և ուղարկում էնզ, ժողովրդի մեծ առաջնորդիդ, կոլտնտեսականների ամենամոտիկ և ամենասրտակից քարեկամիդ :

Քո իմաստուն ցուցումները մեր ձեռքը տվին կոլտնտեսությունների խնտեսական-կազմակերպչական ամբացման և այդ հիման վրա ունենոր ու կուլտուրական կյանքի հասնելու բանալին :

Գյուղատնտեսական արտելի ստալինյան կանոնադրության լինդունման տարեդարձի նախորյակին գումարված մեր խորհրդակցությունը սովորված եր քո ցուցումները մինչև վերջն իրագործելու կամքով, այս տարի բամբակի բարձր բերքատվություն ապահովելու վնասականությամբ :

Դու շատ տեղին նախազգուշացրիր մեզ՝ հանձին կրեմ այցելած մեր սպառվարակության, վոր «պետք ել լարել ուժերը, քե

չի՝ լավ չե, ուզբեկները շատ են առաջ անցել»։ Մեր պատվիրակության այդ առքիվ տված խոստումը մեր բոլորիս խոստումն ե, Հայաստանի բամբակագործների պատվի հարցը։ Քո ցուցումների համաձայն, կլարենք մեր ուժերը և աշխատանքի կազմակերպման ստախանովյան-դեմքնենկոյական ձևերը կիրառելով, խոշոր չափով կգերակատարենք բամբակի հանձնման պլանը։

Կեցցե՛ մեր մեծ կուսակցության մեծ առաջնորդ ընկեր ՍՏԱԼԻՆԸ։

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԱՎՈՐ
ԲԱՄԲԱԿԱՑԱՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ**

**ԹԻՖԼԻՍ, ՀԱՄԿ(Բ)Կ ԱՆԴՐՅԵՐԿՈՄ
ԸՆԿ. ԲԵՐԻԱՅԻՆ**

Թաճագին ընկեր Լավրենտի։

◀ այսաստանի առաջավոր բամբակացանների համբավետական խորհրդակցության պատգամավորներս ֆեզ, Անդրկովկասի բոլշևիկների հմուտ դեկավարիդ, եղում ենք կոլտնտեսային ջերմ վողջույն։

Մեր մեծ առաջնորդ ընկեր ՍՏԱԼԻՆՆ անմիջական մասնակցությամբ ընդունված գյուղագննեսական արտելի ստալինյան կանոնադրությունը մեզ՝ կոլտնտեսականներիս կուլտուրական և բերկրալից կյանքի նախապարհ հարթեց։ Շնորհիվ արտելի ստալինյան կանոնադրության կիրառման, շնորհիվ բամբակագործ կոլտնտեսականների նկատմամբ կուսակցության և կառավարության հատուկ ուշադրության, արդեն մեր խորհրդակցությանը մասնակցող բամբակագործներից շատերն ապրում են յերջանիկ և ունենու կյանքով։

Կոլտնտեսական ունենու նամբին մեր ձեռք բերած նվաճումները մեզ վոգեշնչում են նոր մարտերի համար, հանուն վաղվավելի փայլուն, ավելի հոյակապ հեռանկարների իրականացման,

հանուն բամբակի ավելի բարձր բերքի նվաճման։ Գործարար մթնոլորտում անցած մեր խորհրդակցությունը մշակեց մեր այս տարվա աշխատանքների գործնական ծրագիրը։ Մենք, Ուզբեկը ստանանի առաջավոր բամբակագործների փորձի հիման վրա, պարտավորվեցինք այս տարի ամենաբարձր վորակով վարել բամբակի հողերը, լրիվ ոգտագործել պարարտացման բոլոր հնարավորությունները, կատարել ու գերակատարել բամբակի մենայացած մշակման պլանը, տրակտորային շարքացանի, կուտիվացիայի, փոցխելու և այլ պլանները, վճռականորեն բարձրացնել բամբակացան շրջաններում յուրաքանչյուր տրակտորի արտադրողականությունը։

Մենք հավաստիացնում ենք քեզ, ընկեր Բերիա, վոր վերադառնալով տեղերը, հենց վաղվաճից նոր քափով կլծվենք բամբակի բարձր բերքատվության համար մղվող պայքարին, կլարենք մեր ամբողջ ուժերը, մեզ հետ առաջ կֆաշենք հետ մնացողներին, և լայն ծավալելով սուսանովյան շարժումը, կլատարենք ու կգերակատարենք բամբակի բերքատվության առաջադրանքը։

Կեցցե՛ մեծ մարտերի ու սոցիալիզմին, մեծ հազբանակների վոգեշնչող մեր մեծ առաջնորդ ընկ։ ՍՏԱԼԻՆԸ։

ԱՌԱՋԱՎՈՐ ԲԱՄԲԱԿԱՑԱՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԲԱՄԲԱԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՎՈՐՆԵՐԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՍԽՀ-ի ժողկոմինորի և ՀԿ(Բ)Կ կենտկոմը վորոշումը

ՀՍԽՀ-ի ժողկոմինորհ և ՀԿ(Բ)Կ կենտկոմը նշում են, վորարձր բերքի համար մղված բոլցեկյան պայքարի չնորհիվ, բամբակացան շրջանների կուսակցական ու խորհրդային կազմակերպությունները և բամբակագործ կոլտնտեսականները զգալի հաջողություններ ձեռք բերին բամբակի 1935 թվականի բերքի պլանը գերակատարելու և բերքատվությունը բարձրացնելու գործում։ Բամբակի հանրապետական պլանը կատարվեց 114,2 տոկոսով, յուրաքանչյուր հեկտարին միջին բերքատվությունը՝ 10,2 տեսաներ։ Բացի Վեդու շրջանից, մյուս շրջանները գերակատարեցին իրենց ցուցանիշները (Ղամարլույի շրջանը՝ 121,5 տոկոս, Հոկտեմբերյան շրջանը՝ 116,9 տոկոս, Վաղարշապատի շրջանը՝ 115 տոկոս)։

ՀՍԽՀ-ի ժողկոմինորհ և ՀԿ(Բ)Կ կենտկոմը վորոշում են.

1. Հանրապետական փոխանցիկ դրոշը հանձնել ամենաբարձր ցուցանիշներ ձեռք բերած Ղամարլույի շրջանին, պարզեցած

լով շրջկոմի քարտուղար ընկեր Գ. Յեսայանին մարդատար ալ-
տոյով:

2. Բամբակի պլանը ժամկետից առաջ ու հաջողությամբ կա-
տարելու և գերակատարելու համար, պարզեատրել Հոկտեմբե-
րյան շրջանի քարտուղար ընկեր Կուրղինյանին, Վա-
ղարշապատի շրջկոմի քարտուղար ընկեր Քետրոսյանին, Վաղար-
շապատի շրջդործկոմի նախագահ ընկ. Մարգարյանին, Ղամար-
լույի շրջդործկոմի նախագահ ընկ. Գ. Աղլոյանին—ռատիո-ըն-
դունիչներով:

ԽՍՀՄ Թեթև արդյունաբերության ժողկոմատի առանձնա-
ցրած ֆոնդեց, ինչպես և հանրապետության միջոցներից պար-
գևատրել՝

ա) Բեռնատար ավտոմեքենաներով՝

1. Վաղարշապատի շրջանի «Յ-րդ Ինտերնացիոնալ» անվան
կոլտնտեսությունը.

2. Հոկտեմբերյան շրջանի Աղլոյքեկովի անվան կոլտնտեսու-
թյունը:

3. Հոկտեմբերյան շրջանի «Կարմիր Աստղ» կոլտնտեսու-
թյունը:

4. Կեդու շրջանի Զափարիձեյի անվան կոլտնտեսությունը:

5. Ղամարլույի շրջանի Ղուկաս Ղուկասյանի անվան կոլ-
տնտեսությունը:

բ) Ռադիո-ընդունիչներով՝

1. Վաղարշապատի շրջանի «Աշխատանք» կոլտնտեսությունը:

2. Վաղարշապատի շրջանի Կասյանի անվան կոլտնտեսու-
թյունը:

3. Հոկտեմբերյան շրջանի «Պայքար» կոլտնտեսությունը:

4. Ղամարլույի շրջանի Ստալինի անվան կոլտնտեսությունը:

5. Ղամարլույի շրջանի Մուալյանի անվան կոլտնտեսու-
թյունը:

6. Ղամարլույի շրջանի Կալինինի անվան կոլտնտեսությունը:

7. Ղամարլույի շրջանի Խանջյանի անվան կոլտնտեսությունը:

8. Վաղարշապատի շրջանի «Աղատաշեն» կոլտնտեսությունը:

9. Վաղարշապատի շրջանի «Կարմիր Աստղ» կոլտնտեսու-
թյունը:

դ) Վաղարշապատի շրջանի «Արշալույս» կոլտնտեսությանը
բաց թողնել 15.000 ռուբլ՝ ակումբ կառուցելու համար:

դ) 7000-ական ռուբլի բաց թողնել հետեւյալ կոլտնտեսու-
թյուններին՝ մասնակի համար՝

1. Վաղարշապատի շրջանի «Զահմեթ» կոլտնտեսությանը:

2. Վաղարշապատի շրջանի «Աշխատասեր» կոլտնտեսու-
թյանը:

յե) Պարզեատրել հետեւյալ կոլտնտեսությունների նախա-
գահներին, վորոնք մի հետարից տվել են միջին հաշվով 15
ցենտներ և ավելի բամբակի բերք:

1. Հոկտեմբերյան շրջանի Աղլոյքեկովի անվան կոլտնտեսու-
թյան նախագահ Մուսա Ալեքսերովին պատեփոնով:

2. Հոկտեմբերյան շրջանի «Պայքար» կոլտնտեսության նա-
խագահ Կոստանդին Դավթյանին պատեփոնով:

3. Հոկտեմբերյան շրջանի «Կարմիր Աստղ» կոլտնտեսության
նախագահ Արսեն Հովսեյանին պատեփոնով:

4. Ղամարլույի շրջանի Ղուկասյանի անվան կոլ-
տնտեսության նախագահ Ալետիս Սաֆարյանին պատեփոնով:

5. Ղամարլույի շրջանի Մուալյանի անվան կոլտնտեսության
նախագահ Սարգսիս Հովհաննիսյանին պատեփոնով:

6. Ղամարլույի շրջանի Ստալինի անվան կոլտնտեսության
նախագահ Մելիտոս Մաթեոսյանին պատեփոնով:

7. Ղամարլույի շրջանի Խանջյանի անվան կոլտնտեսության
նախագահ Շյուքյուր Հասանովին պատեփոնով:

8. Ղամարլույի շրջանի Կալինինի անվան կոլտնտեսության
նախագահ Արշակ Բունիաթյանին պատեփոնով:

9. Վաղարշապատի շրջանի «Աշխատանք» կոլտնտեսության
նախագահ Արզուման Արզումանյանին պատեփոնով:

10. Վաղարշապատի շրջանի «Յ-րդ Ինտերնացիոնալ» կոլ-
տնտեսության նախագահ Հասան Ալեյնիվին պատեփոնով:

11. Վաղարշապատի շրջանի «Արշալույս» կոլտնտեսության
նախագահ Սերգո Հովսեյանին պատեփոնով:

12. Վաղարշապատի շրջանի «Զահմեթ» կոլտնտեսության
նախագահ Հյուսեյին Մահմեդովին պատեփոնով:

13. Վաղարշապատի շրջանի «Աղատաշեն» կոլտնտեսության
նախագահ Խաչիկ Կարպատյանին պատեփոնով:

14. Վաղարշապատի շրջանի «Աշխատասեր» կոլտնտեսության
նախագահ Գեղամ Սեդրակյանին պատեփոնով:

15. Վաղարշապատի շրջանի «Կարմիր Աստղ» կոլտնտեսության նախագահ Հայկ Յեղիազարյանին պատեփոնով :
16. Վաղարշապատի շրջանի Կասյանի անվան կոլտնտեսության նախագահ Արտաշես Ավետիսյանին պատեփոնով :
17. Վելու շրջանի Զափարիձեյի անվան կոլտնտեսության նախագահ Բիլալ Խոմայիլովին պատեփոնով :
18. Ղամարլույի շրջանի «Կարմիր Հոկտեմբեր» կոլտնտեսության նախագահ Թոքոս Բաղդասարյանին պատեփոնով :
- Դ) Պարզեատրել հետեւյալ բրիգադավարներին, վորոնք տվին մի հեկտարից 18 ցենտներ և ավելի բամբակի բերք :
1. Հոկտեմբերյան շրջանի Մռավյանի անվան կոլտնտեսության բրիգադավար Սարդիս Հակոբյանին պատեփոնով :
 2. Հոկտեմբերյան շրջանի Աղիղըեկովի անվան կոլտնտեսության բրիգադավար Իրզա Կուլի ողլի Ռահմովին պատեփոնով :
 3. Ղամարլույի շրջանի «Մայիսի Մեկի» անվան կոլտնտեսության բրիգադավար Արտաշես Խաչատրյանին պատեփոնով :
 4. Ղամարլույի շրջանի «Կարմիր Հոկտեմբեր» կոլտնտեսության բրիգադավար Հովհաննես Շահբաղյանին պատեփոնով :
 5. Ղամարլույի շրջանի Կալինինի անվան կոլտնտեսության բրիգադավար Գեղամ Հովհաննիսյանին պատեփոնով :
 6. Ղամարլույի շրջանի Խանջյանի անվան կոլտնտեսության բրիգադավար Ռասուլ Խոջայելին պատեփոնով :
 7. Ղամարլույի շրջանի Մռավյանի անվան կոլտնտեսության բրիգադավար Համազասպ Պետրոսյանին պատեփոնով :
 8. Ղամարլույի շրջանի Ղուկաս Ղուկասյանի անվան կոլտնտեսության բրիգադավար Կոստանդին Յեղիազարյանին պատեփոնով :
 9. Ղամարլույի շրջանի Սվերդլովի անվան կոլտնտեսության բրիգադավար Մարգար Խաչատրյանին պատեփոնով :
 10. Ղամարլույի շրջանի Վորոշիլովի անվան կոլտնտեսության բրիգադավար Դամիթ Վարդանյանին պատեփոնով :
 11. Վաղարշապատի շրջանի «Աշխատանք» կոլտնտեսության բրիգադավար Վիրապ Սարգսյանին պատեփոնով :
 12. Վաղարշապատի շրջանի «Աշխատանք» կոլտնտեսության բրիգադավար Յեսայի Շահբաղյանին պատեփոնով :
 13. Վաղարշապատի շրջանի «Յ-րդ Խնտերնացիոնալ» կոլտընտեսության բրիգադավար Ռուբեն Ղաղարյանին պատեփոնով :

14. Վաղարշապատի շրջանի «Յ-րդ Խնտերնացիոնալ» կոլտընտեսության բրիգադավար Բենիամին Մանուկյանին պատեփոնով :
15. Վաղարշապատի շրջանի «Զահմեթ» կոլտնտեսության բրիգադավար Սամեր Բաբայելին պատեփոնով :
16. Վաղարշապատի շրջանի «Ավշար» կոլտնտեսության բրիգադավար Յեփրեմ Աբրահամյանին պատեփոնով :
17. Ղամարլույի շրջանի Կալինինի անվան կոլտնտեսության բրիգադավար Սեթո Ստեփանյանին ժամացույցով :
18. Վաղարշապատի շրջանի «Կրմղի Ռանչողար» կոլտնտեսության բրիգադավար Ալի Թալիբովին ժամացույցով :
19. Վաղարշապատի շրջանի «Զահմեթ» կոլտնտեսության բրիգադավար Ալի Հասանովին ժամացույցով :
20. Վաղարշապատի շրջանի «Անաստված» կոլտնտեսության բրիգադավար Գարեգին Հովհաննիսյանին ժամացույցով :
21. Վաղարշապատի շրջանի «Արշալույս» կոլտնտեսության բրիգադավար Մկրտիչ Գրիգորյանին ժամացույցով :
- Ե) Պարզեատրել հետեւյալ ողակավարներին, վորոնք տվին մի հեկտարից 20 ցենտներ և ավելի բամբակի բերք :
1. Ղամարլույի շրջանի «Կարմիր Հոկտեմբեր» կոլտնտեսության ողակավար Շուշանիկ Հախվերդյանին ժամացույցով :
 2. Ղամարլույի շրջանի Վորոշիլովի անվան կոլտնտեսության ողակավար Սաշինկա Գիվարդիզովյանին ժամացույցով :
 3. Ղամարլույի շրջանի Խանջյանի անվան կոլտնտեսության ողակավար Ալի Նաղիյելին ժամացույցով :
 4. Ղամարլույի շրջանի Մտալինի անվան կոլտնտեսության ողակավար Կարապետ Ֆահրատյանին ժամացույցով :
 5. Վաղարշապատի շրջանի «Զահմեթ» կոլտնտեսության ողակավար Հյուսեյլին Ալի ողլիին ժամացույցով :
 6. Վաղարշապատի շրջանի «Արշալույս» կոլտնտեսության ողակավար Թելլո Շահբաղյանին ժամացույցով :
 7. Վաղարշապատի շրջանի «Աշխատասեր» կոլտնտեսության ողակավար Աշխեն Խաչատրյանին ժամացույցով :
 8. Վաղարշապատի շրջանի «Զառքաջի» կոլտնտեսության ողակավար Աքրեր Իրրահիմովին ժամացույցով :
 9. Հոկտեմբերյան շրջանի «Մաճկալ» կոլտնտեսության ողակավար Հրանուշ Վարդանյանին կարի մեքենայով :
 10. Ղամարլույի շրջանի «Ֆետաղատ» կոլտնտեսության ողակավար Ռուբեն Ղաղարյանին ժամացույցով :

Դակավար Շուշանիկ Մելիքսեթյանին կարի մեքենայով:

11. Ղամարլույի շրջանի «Յ-րդ Ինտերնացիոնալ» կոլտնտեսության ողակավար Նվարդ Վարդանյանին կարի մեքենայով:

12. Ղամարլույի շրջանի «Մայիսի Մեկ» կոլտնտեսության ողակավար Վարյա Բարսեղյանին կարի մեքենայով:

13. Վաղարշապատի շրջանի «Կարմիր Աստղ» կոլտնտեսության ողակավար Արուսյակ Գրիգորյանին կարի մեքենայով:

14. Վեդու շրջանի Զափարիձեյի անվան կոլտնտեսության ողակավար Փառանձեմ Մելքոնյանին կարի մեքենայով:

15. Վեդու շրջանի Զափարիձեյի անվան կոլտնտեսության ողակավար Խրայիս Հասանովային կարի մեքենայով:

16. Վեդու շրջանի Շահումյանի անվան կոլտնտեսության ողակավար Յերմոնյա Սարգսյանին կարի մեքենայով:

17. Ղամարլույի շրջանի Մոավյանի անվան կոլտնտեսության ողակավար Արշալույս Աբրահամյանին լուսանկարչական ապարատով:

ը) Պարզեատրել հետեւյալ բամբակ հավաքողներին, վորոնք որական հավաքել են 100 կիլո և ավելի բամբակ և սեղոնի ընթացքում՝ առնվազն 3000 կիլո բամբակ.

1. Հոկտեմբերյան շրջանի «Ստալինաչեն» կոլտնտեսության հավաքող Արշալույս Մուրադյանին ժամացույցով:

2. Հոկտեմբերյան շրջանի «Ստալինաչեն» կոլտնտեսության հավաքող Վարսենիկ Աղիոյանին ժամացույցով:

3. Ղամարլույի շրջանի Ղուկաս Ղուկասյանի անվան կոլտնտեսության հավաքող Վարդուհի Շահինյանին լուսանկարչական ապարատով:

4. Հոկտեմբերյան շրջանի «Փարոս» կոլտնտեսության հավաքող Յեփինար Ավետիսյանին կարի մեքենայով:

5. Հոկտեմբերյան շրջանի «Փարոս» կոլտնտեսության հավաքող Շողակաթ Ղոչաղյանին կարի մեքենայով:

6. Հոկտեմբերյան շրջանի «Դեպի սոցիալիզմ» կոլտնտեսության հավաքող Վարսիկ Շահինյանին կարի մեքենայով:

7. Հոկտեմբերյան շրջանի «Փարոս» կոլտնտեսության հավաքող Սիրանուշ Միքողյանին կարի մեքենայով:

8. Հոկտեմբերյան շրջանի «Ստալինաչեն» կոլտնտեսության հավաքող Կանդուխտ Մուրադյանին կարի մեքենայով:

9. Հոկտեմբերյան շրջանի «ԿիՄ» կոլտնտեսության հավաքող Ֆլոր Աստրոյանին կարի մեքենայով:

10. Հոկտեմբերյան շրջանի «Կարմիր ուղի» կոլտնտեսության հավաքող Նինա Աղասյանին կարի մեքենայով:

11. Ղամարլույի շրջանի «Նոր ուղի» կոլտնտեսության հավաքող Սիրուշ Մարգսյանին կարի մեքենայով:

12. Ղամարլույի շրջանի «Նոր ուղի» կոլտնտեսության հավաքող Ռոզա Պետրոսյանին կարի մեքենայով:

13. Վաղարշապատի շրջանի Կասյանի անվան կոլտնտեսության հավաքող Վիկտորիա Միհրանյանին կարի մեքենայով:

14. Վաղարշապատի շրջանի Կասյանի անվան կոլտնտեսության հավաքող Ռոզա Գեորգյանին կարի մեքենայով:

15. Վաղարշապատի շրջանի Կասյանի անվան կոլտնտեսության հավաքող Ամալիս Հովհաննյանին կարի մեքենայով:

16. Վաղարշապատի շրջանի Կասյանի անվան կոլտնտեսության հավաքող Յեղսիկ Ավետիսյանին կարի մեքենայով:

17. Հոկտեմբերյան շրջանի «Յ-րդ Ինտերնացիոնալ» կոլտընտեսության հավաքող Ռամիկ Ավետիսյանին մահճակալով:

18. Հոկտեմբերյան շրջանի «Շահումյանի» անվան կոլտնտեսության հավաքող Անահիտ Մելքոնյանին մահճակալով:

19. Հոկտեմբերյան շրջանի «17-րդ համագումարի» անվան կոլտնտեսության հավաքող Քիշմիշ Անտոնյանին մահճակալով:

20. Հոկտեմբերյան շրջանի «ԿիՄ» կոլտնտեսության հավաքող Խանում Հակոբյանին մահճակալով:

21. Հոկտեմբերյան շրջանի «Կարմիր ուղի» կոլտնտեսության հավաքող Աղավնի Յերվանդյանին մահճակալով:

22. Հոկտեմբերյան շրջանի «Կարմիր ուղի» կոլտնտեսության հավաքող Հոռոմսիմ Հակոբյանին մահճակալով:

23. Հոկտեմբերյան շրջանի «Պայքար» կոլտնտեսության հավաքող Նազո Մանուկյանին մահճակալով:

24. Հոկտեմբերյան շրջանի Մոլոտովի անվան կոլտնտեսության հավաքող Անուշ Անանյանին մահճակալով:

25. Ղամարլույի շրջանի Կոմինտերնի անվան կոլտնտեսության հավաքող Սաշինար Առաքելյանին մահճակալով:

26. Ղամարլույի շրջանի Ղուկաս Ղուկասյանի անվան կոլտնտեսության հավաքող Արաքելյանին մահճակալով:

27. Վաղարշապատի շրջանի «Զահմեթ» կոլտնտեսության հավաքող Կուլի ողլի Ալիյելին մահճակալով:

28. Հոկտեմբերյան շրջանի «ԿիՄ» կոլտնտեսության հավաքող Սերոբ Մանուկյանին վորսորդական հրացանով:

թ) Պարզեատրել նաև հետեւյալ կոլտնտեսականներին, վորոնք աչքի յեն ընկել բամբակի բարձր բերքի համար մղվող պայքարում իրենց կատարած որինակելի աշխատանքով.

1. Հոկտեմբերյան շրջանի «Եոր կյանք» կոլտնտեսությունից գյուղատնտեսական մնասատուների գեմ պայքարով Հովհաննես Յեղիգայանին վորսորդական հրացանով:

2. Հոկտեմբերյան շրջանի «Կարմիր Աստղ» կոլտնտեսությունից վահան Ամիրիսանյանին վորսորդական հրացանով:

3. Հոկտեմբերյան շրջանի 26-ի անվան կոլտնտեսության ջրվոր Նիկոլ Առաքելյանին վորսորդական հրացանով:

4. Ղամարլույի շրջանի Վորոշիլովի անվան կոլտնտեսությունից գյուղատնտեսական մնասատուների գեմ պայքարող իսակ Գիվարդիզովին վորսորդական հրացանով:

5. Ղամարլույի շրջանի Մաքսիմ Գորկու անվան կոլտնտեսության ջրվոր Սեղբակ Ալագյանին վորսորդական հրացանով:

6. Վաղարշապատի շրջանի «Կարմիր Հոկտեմբեր» կոլտընտեսության ջրվոր Առաքել Առաքելյանին վորսորդական հրացանով:

7. Վաղարշապատի շրջանի «Համերաշխ» կոլտնտեսության ջրվոր Յուսուփ Իրբահիմ ողլի Մահմեդովին վորսորդական հրացանով:

8. Վեդու շրջանի Զավարիձեյի անվան կոլտնտեսության անդամ Ալեքսան Գրիգորյանին ժամացույցով:

ժ) Պարզեատրել հետեւյալ մեքենատրակտորային կայանների աշխատազներին, վորոնք աչքի յեն ընկել բամբակի բարձր բերքի համար մղվող պայքարում իրենց կատարած որինակելի աշխատանքով՝

1. Վաղարշապատի մեքենատրակտորային կայանի դիրեկտոր Խաչիկ Հակոբջանյանին լուսանկարչական ապարատով:

2. Հոկտեմբերյանի մեքենատրակտորային կայանի դիրեկտոր Մուրադ Պողոսյանին պատեփոնով:

3. Հոկտեմբերյան շրջանի մեքենատրակտորային կայանի

դիրեկտորի քաղաքական գծով տեղակալ Սուրեն Բարսեղյանին պատեփոնով:

4. Ղամարլույի մեքենատրակտորային կայանի ավագ ագրոնոմ Սաշա Հովհաննիսյանին պատեփոնով:

5. Հոկտեմբերյան մեքենատրակտորային կայանի ագրոնոմ Վահան Հարությունյանին պատեփոնով:

6. Ղամարլույի մեքենատրակտորային կայանի ագրոնոմ Հայկ Ալանյանին պատեփոնով:

7. Ղամարլույի մեքենատրակտորային կայանի ագրոնոմ Բորիս Սուջյանին պատեփոնով:

8. Ղաղարշապատի մեքենատրակտորային կայանի ագրոնոմ Բաբկեն Շաղոյանին ժամացույցով:

9. Ղաղարշապատի մեքենատրակտորային կայանի ագրոնոմ Արտաշես Կոստիկյանին ժամացույցով:

10. Ղամարլույի շրջանի ագրոտեխնիկ Գուրգեն Բաբաջանյանին ժամացույցով:

11. Վեդու մեքենատրակտորային կայանի ագրոտեխնիկ Հարություն Մինասյանին ժամացույցով:

12. Հոկտեմբերյանի մեքենատրակտորային կայանի տրակտորային բրիգադավար Նշան Բարսեղյանին լուսանկարչական ապարատով:

13. Հոկտեմբերյանի մեքենատրակտորային կայանի տրակտորային բրիգադավար Գարեգին Մնացականյանին լուսանկարչական ապարատով:

14. Հոկտեմբերյանի մեքենատրակտորային կայանի տրակտորային բրիգադավար Դավիթ Դավիթյանին լուսանկարչական ապարատով:

15. Հոկտեմբերյանի մեքենատրակտորային կայանի տրակտորային բրիգադավար Սաֆրո Գասպարյանին լուսանկարչական ապարատով:

16. Հոկտեմբերյանի մեքենատրակտորային կայանի տրակտորային բրիգադավար Սահակ Մանուկյանին լուսանկարչական ապարատով:

17. Վեդու մեքենատրակտորային կայանի տրակտորային բրիգադավար Հովհաննես Համբարձումյանին լուսանկարչական ապարատով:

18. Վեղու մեքենատրակտորային կայանի տրակտորային բրիդավալար Մկրտիչ Ամիրյանին լուսանկարչական ապարատով :

19. Վեղու մեքենատրակտորային կայանի տրակտորային բրիդավալար Կորյուն Շահինյանին ժամացույցով :

20. Վաղարշապատի մեքենատրակտորային կայանի տրակտորային բրիդավալար Վաշագան Պետրոսյանին վորսորդական հրացանով :

21. Վաղարշապատի մեքենատրակտորային կայանի տրակտորային բրիդավալար Հարություն Հարությունյանին վորսորդական հրացանով :

22. Ղամարլույի մեքենատրակտորային կայանի տրակտորային բրիդավալար Հրաչյա Առաքելյանին վորսորդական հրացանով :

23. Ղամարլույի մեքենատրակտորային կայանի տրակտորիստ Խաչիկ Արրահամյանին վորսորդական հրացանով :

24. Ղամարլույի մեքենատրակտորային կայանի տրակտորիստ Լևոն Փիրոսյանին վորսորդական հրացանով :

Ժամարդկատրել մթերման սիստեմի հետեւյալ աշխատողներին, վորոնք աչքի յեն ընկել բամբակի կոնտրակտացիայի անցկացման, մթերման, տեսակավորման ու պահպանման ասպարիզում իրենց կատարած որինակելի աշխատանքով .

1. Բամբակ-տրեստի դիրեկտոր Արշակ Հովհաննիսյանին ռադիո-ընդունիչով :

2. Հոկտեմբերի բամբակադատիք գործարանի դիրեկտոր Գեվորգ Սուքիսյանին ռադիո-ընդունիչով :

3. Յերևանի բամբակազտիք գործարանի սերմնաբույժ ագրոնոմ Ռուբեն Ամբրումովին ռադիո-ընդունիչով :

4. Յերևանի մթերակայանի վարիչ Գր. Դանիելյանին պատեփոնով :

5. Վաղարշապատի մթերակայանի վարիչ Դմիտրի Վասիլյեվին պատեփոնով :

6. Եջմիածնի մթերակայանի վարիչ Արամայիս Արգարյանին պատեփոնով :

7. Աղրանքադետ Տրդատ Հարությունյանին պատեփոնով :

8. Աղրանքադետ-կլասիֆիկատոր Շավարչ Հարությունյանին պատեփոնով :

9. Տեսակավորող Արտաշես Կողալյանին ժամացույցով :

10. Բեռնողների բրիդավալար Գեղամ Ներսիսյանին պատեփոնով :

11. Բեռնողների բրիդավալար Մանուկ Մկրտչյանին պատեփոնով :

Առաջարկել Հայրամբակտրեստին՝ Թեթև Արդյունաբերության ժողովածառի բաց թողած միջոցներից ութ հազար ոռուբլի առանձնացներ՝ բամբակի մթերման ասպարիզում աչքի ընկածաշխատողներին պարզեատրելու համար :

ՀՍԽՀ ժողկոմիսորհի

ՀԿ(բ)Կ Կենտկոմի

նախադահ՝ ԳՈՒԼՈՅԱՆ

Քարտուղար՝ ԽԱՆԶՅԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	<i>b2</i>
Ընկ. Ա. Գուլոյանի բացման խոսքը	7
Ընկ. Հ. Շահբագյանի ճառը (Ղամարլույի շրջ. Թոխանչաւու գյուղի «Կարմիր Հոկտեմբեր» կոլտնտ. բրիդաղիր)	14
Ընկ. Հասան Ալիյեվի ճառը (Վաղպատի շրջ. «Ի Ինտերնաշիոնալ» կոլտնտ. նախագահ	18
Ընկ. Ֆլո Ասատրյանի ճառը (Հոկտեմբերյան շրջ. Զանֆիդա գյուղի ԿիՄ կոլտնտ. բամբակ հավաքող)	21
Ընկ. Խամայիլովի ճառը (Վեդու շրջ. Ավշար գյուղի Զաղիսրիձեյի անվան կոլտնտ. նախ.)	23
Ընկ. Անդ. Խաչատրյանի ճառը (Հոկտեմբերյան շրջ. Բամբակաշատ գյուղի «Փարոս» կոլտնտ. բրիդաղիր)	25
Ընկ. Ալ. Հովհաննիսյանի ճառը (Ղամարլույի ՄՏ կայանի առևտ ագրոնոմ)	28
Ընկ. Վարդուշ Շահինյանի ճառը (Ղամարլույի շրջ. Քալարա գյուղի Ղ. Ղուկասյանի անվան կոլտնտ. բամբակ հավաքող)	33
Ընկ. Բ. Շահոյանի ճառը (Վաղպատի ՄՏ կայանի գյուղատնտես)	35
Ընկ. Հ. Մինասյանի ճառը (Վեդու ՄՏ կայանի վնասատուների գեմ պայքարող գյուղատնտես)	38
Ընկ. Ամբրումալի ճառը (Աերժնաբույծ-գյուղատնտես)	40

Հնկ. Վ.	Սարգսյանի ճառը (Վաղպատի շրջ. Զափարաբադ դյուղի «Աշխատանք» կոլտնտ. բրիգադիր)	46
Հնկ. Պ.	Քալանք-արյանի ճառը (Գյուղ. լնատիտուտի պրո-ֆեսոր)	48
Հնկ. Ն.	Բարսեղյանի ճառը (Հոկտեմբերյանի ՄՏ կայանի տրակտորային բրիգադիր)	52
Հնկ. Գր.	Հովհաննիսյանի ճառը (Արարատի ՄՏ կայանի դի-րեկտոր)	55
Հնկ. Զ.	Բուղադյանի ճառը (Վաղպատի շրջանի Արշալույս դյուղի «Արշալույս» կոլտնտ. չքանչանակիր բրի-գադիր)	59
Հնկ. Արշակ	Հովհաննիսյանի ճառը (Բամբակտրեսութիրեկտոր)	62
Հնկ. Ա.	Սափարյանի ճառը (Ղամբարլույի շրջ. Քալարա դյուղի Ղ. Ղուկասյանի անվան կոլտնտ. նախ.)	68
Հնկ. Կ.	Դանիելյանի ճառը (Հողժողկոմատի Զրային վար-չության պետ)	70
Հնկ. Ա.	Նալբանդյանի ճառը (Վաղպատի շրջանային թերթի խմբադիր)	73
Հնկ. Բ.	Սուզյանի ճառը (Նորագալթի ագրոխմբի դյուղա-տնտես)	76
Հնկ. Զ.	Վասկանյանի ճառը (Վաղպատի «Անսատված» կոլ-տնտ. Դեմչենկոյի անվան բրիգադի բրիգադիր)	78
Հնկ. Վ.	Հարությունյանի ճառը (Հոկտեմբերյան շրջ. Բամ-բակաշատի ագրոշրջանի դյուղատնտես)	82
Հնկ. Շ.	Ղոչադյանի ճառը (Հոկտեմբերյանի Բամբակաշատ դյուղի «Փարոս» կոլտնտ. ողակալար)	84
Հնկ. Խ.	Հակոբջանյանի ճառը (Վաղպատի ՄՏ կայանի դի-րեկտոր)	86
Հնկ. Մ.	Պողոսյանի ճառը (Հոկտեմբերյանի ՄՏ կայանի դիրեկտոր)	90
Հնկ. Ն.	Ադոյանի ճառը (Հողժողկոմատի Բամբակի արչության պետ)	93
ՀՍԽՀ Հողժողկոմ ընկ. Վ.	Մամիկոնյանի ճառը	96
Հնկ. Մ.	Յենգիբարյանի ճառը	105

Հնկ. Ն.	Կուրդինյանի ճառը (Հոկտեմբերյան շրջանի կուս-շրջկոմի քարտուղար)	113
Հնկ. Գ.	Յեսայանի ճառը (Ղամբարլույի շրջանի կուսշրջկոմի քարտուղար)	114
Հնկ. Ա.	Խանջյանի ճառը	121
	Հայաստանի առաջավոր բամբակացանների խորհրդակցության վողջունները	
Ընկ. ՍՏԱԼԻՆԻՆ	129
Ընկ. ԲԵՐԻԱՅԻՆ	130
	Բամբակագործության առաջավորներին պարզեատրելու մա-սին ՀՍԽՀ Ժողկոմիորհի և ՀԿ(Բ)Կ կենտկոմի վորոշումը	131

«Ազգային գրադարան»



NL0289665

370

19.191

ԳԻՒԸ | Ռ. 50 4.